

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՅՈՒՐԻԿԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ը.00.01 «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Ատոմ Արտավազդի Վարդանյան

Երևան - 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ.....	9
1.1. Տնտեսական և սոցիալական զարգացման փոխազդեցության հիմնախնդիրները.....	9
1.2. Սոցիալական նպատակների էվոլյուցիան Հազարամյակի և Կայուն զարգացման ծրագրերում....	16
1.3. ՀՀ տնտեսական զարգացման սոցիալական առաջնահերթությունների ընտրության մեթոդաբանական հիմնավորումը.....	29
ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.....	38
2.1. Մարդկային կապիտալի զարգացման սոցիալական տեսանկյունները	38
2.2. Անհավասարության կրճատման և աղքատության հաղթահարման հիմնահարցը.....	46
2.3. Զանգվածային գործազրկության պատճառներն ու զբաղվածության ապահովման ուղիները	62
ԳԼՈՒԽ 3. ՀՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԱՐԴԻ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ	77
3.1. Սոցիալ-տնտեսական պայմանների և ժողովրդագրական իրավիճակի փոխադարձ կապը	77
3.2. ՀՀ սոցիալական քաղաքականության բարելավման միջոցները.....	84
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	93
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	98
Հավելվածներ.....	107

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Նորմատիվային իմաստով ցանկացած, այդ թվում նաև տնտեսական առաջընթացի նպատակը մարդկային զարգացումն է: Այս միտքը տարբեր ձևակերպումներով արտահայտվում է բազմաթիվ հեղինակների աշխատանքներում: Մասնավորապես ըստ Իմանուել Կանտի՝ մարդուն որպես նպատակ, այլ ոչ թե միջոց դիտարկելը պարտադիր հրամայական է: Միաժամանակ ցանկալին և իրականությունը միշտ չէ, որ համընկնում են: Այսպես՝ տնտեսական ձեռքբերումները հաճախ չեն ուղեկցվում բնակչության մեծամասնության կենսամակարդակի բարձրացմամբ, ինչը պայմանավորված է նրանով, որ տնտեսական և սոցիալական ոլորտների միջև կապը խզվում է:

Հատկապես անցյալ դարի երկրորդ կեսից սկսած որակապես փոխվել են տեխնոլոգիաները, մեծացել են արտադրական հնարավորությունները, իսկ համաշխարհային ՀՆԱ-ն շարունակում է աճել: Զուգահեռաբար խորացել է անհավասարությունը, միլիոնավոր մարդիկ ապրում են աղքատության պայմաններում, լուծված չեն կրթության և առողջապահական ծառայությունների հասանելիության հետ կապված խնդիրները: Բազմաթիվ հիմնահարցերի թվում առանձնանում է նաև շրջակա միջավայրի աղտոտումը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ դրա հետևանքները զգալի են հատկապես աղքատ բնակչության համար:

Թեման արդիական է նաև Հայաստանի համար, քանի որ տնտեսական աճն ուղեկցվում է զանգվածային գործազրկությամբ, աղքատությամբ, անհավասարության խորացմամբ, արտագաղթով, աշխատանքային ռեսուրսների կրճատմամբ և բնակչության ծերացմամբ: Պետության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականությունն իր հերթին ունի բազմաթիվ թերություններ՝ պայմանավորված կոռուպցիայով, սովերային տնտեսությամբ, պետական բյուջեի անբավարար միջոցներով, ինչպես նաև ծախսերի արդյունավետության ոչ բարձր մակարդակով:

Տնտեսական և սոցիալական ոլորտների փոխազդեցության վերաբերյալ կատարվել են մի շարք հետազոտություններ: Հեղինակները նշում են, որ տնտեսական զարգացման գնահատման հիմքում պետք է գտնվեն ոչ թե պարզապես եկամուտն ու տնտեսական

ածը, այլ կյանքի որակը: Զ. Ստիգլիցի, Ա. Սենի, Զ.Պ. Ֆիտոսիի գլխավորությամբ 2008թ. նույնիսկ ստեղծվեց հանձնաժողով, որի նպատակն էր բացահայտել «ՀՆԱ» ցուցանիշի թերությունները և առաջարկել սոցիալ-տնտեսական առաջընթացը բնութագրելու այլընտրանքներ: Արդյունքում առաջադրվեցին խնդիրների լուծման տարբեր մոտեցումներ, որոնցում հատկապես կարևորվեց անմիջապես տնային տնտեսությունների կենսամակարդակի ուսումնասիրությունը:

ՀՀ-ում նույնպես տարբեր հետազոտողներ վերլուծել են տնտեսական աճի, գործազրկության, անհավասարության, աղքատության խնդիրները: Միաժամանակ ՀՀ սոցիալական առաջնահերթությունների սահմանման, տնտեսական աճի որակի գնահատման, սոցիալական քաղաքականության արդյունավետության բարձրացման հարցերի հետ կապված նոր ուսումնասիրություններն անհրաժեշտ են:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է ՀՀ համար առանձնացնել տնտեսական զարգացման սոցիալական առաջնահերթություններ, բացահայտել դրանց իրագործման խոչընդոտներն ու հնարավորությունները և առաջարկել սոցիալական քաղաքականության բարելավման հնարավոր ուղիներ:

Ելնելով նպատակից՝ առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել տնտեսական զարգացման սոցիալական առաջնահերթությունների ընտրության միջազգային փորձը,
- մեթոդաբանորեն հիմնավորել ՀՀ տնտեսական զարգացման սոցիալական առաջնահերթությունների ընտրությունը,
- ներկայացնել մարդկային կապիտալի զարգացման խոչընդոտներն ու հեռանկարները,
- հետազոտել անհավասարության և աղքատության բարձր մակարդակի պատճառներն ու հաղթահարման հնարավոր ուղիները,
- բացահայտել զանգվածային գործազրկության պատճառները և զբաղվածության ապահովման միջոցները,
- վերլուծել ՀՀ սոցիալական քաղաքականության խնդիրները և բարելավման եղանակները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը տնտեսական և սոցիալական զարգացման փոխազդեցության հիմնահարցերն են, իսկ առարկան՝ ՀՀ բնակչության կենսամակարդակը, ժողովրդագրական իրավիճակը և պետության սոցիալական քաղաքականությունը:

Հետազոտության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական, համեմատական, երևույթների և գործընթացների գրաֆիկական մեկնաբանման, էկոնոմետրիկ մոդելավորման մեթոդները: Առաջադրված խնդիրների լուծման համար տեսական հիմք են հանդիսացել տարբեր հեղինակների՝ սոցիալ-տնտեսական հիմնահարցերին վերաբերող գիտական աշխատանքները, ՀՀ օրենքները, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ կենտրոնական բանկի, Միավորված ազգերի կազմակերպության, Համաշխարհային բանկի, Աշխատանքի միջազգային կազմակերպության, Առողջապահության համաշխարհային կազմակերպության և այլ կառույցների զեկույցները, հետազոտությունները, աշխատանքային փաստաթղթերը և այլն: Տեղեկատվական հիմք են ծառայել վերոնշյալ մարմինների հրապարակումներն ու տվյալների բազաները: Անհրաժեշտությունից ելնելով՝ վիճակագրական մեթոդների կիրառմամբ ապահովվել է տվյալների համադրելիությունը:

Ատենախոսության մեջ ստացված արդյունքներն ունեն տեսամեթոդական և կիրառական նշանակություն, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթները ներկայացված են ստորև.

- Մշակվել է տնտեսական զարգացման սոցիալական առաջնահերթությունների ընտրության մեթոդաբանական մոտեցում, որի համաձայն առաջնահերթ լուծում պահանջող կարող են դիտարկվել այն խնդիրները, որոնք հրատապ լինելուց բացի ունեն սոցիալապես ընդգրկուն բնույթ և բնակչության կողմից ընդունվել են որպես բարեկեցությանը խոչընդոտող գլխավոր գործոններ: Դրանց լուծումը պետք է բխի սոցիալական արդարության և տնտեսական արդյունավետության սկզբունքներից, գտնվի հիմնարար արժեքային համակարգի շրջանակում:
- Բնակչության կենսապայմաններն արժանահավատ գնահատելու, ինչպես նաև սոցիալական քաղաքականության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով

առաջարկվել է ՀՀ-ում նվազագույն սպառողական զամբյուղը, նվազագույն աշխատավարձը, կենսաթոշակները, նպաստները սահմանելիս որպես ուղեցույց դիտարկել բնակչության հիմնական պահանջմունքների բավարարման (ինչը դեռևս լիարժեք չի ապահովվում) և կարողությունների զարգացման մոտեցումների զուգակցումը:

- Էկոնոմետրիկ մոդելավորման միջոցով բացահայտվել է, որ ՀՀ-ում տնտեսական աճի ազդեցությունը թույլ է գործազրկության կրճատման գործում, ինչը պայմանավորված է հատկապես տնտեսության ճյուղային կառուցվածքի խնդիրներով, տարածքային անհամաչափ զարգացմամբ և աշխատաժամերի՝ առանց համապատասխան վարձատրության ավելացմամբ: Մոդելում որպես բացատրվող (կախյալ) փոփոխական է դիտարկվել ոչ թե գործազրկության մակարդակը, այլ զբաղվածների թիվը, քանի որ գործազրկության կրճատումը զգալիորեն ուղղորդվում է գործազուրկների արտագաղթով:

Հետազոտության գործնական նշանակությունը: Տնտեսական և սոցիալական ոլորտների միջև փոխազդեցության ուսումնասիրությունը կարևոր է տեսության և պրակտիկայի տեսանկյունից, քանի որ հնարավորություն է տալիս գնահատել տնտեսական առաջընթացը և մշակել անհրաժեշտ քաղաքականություն: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել մակրոտնտեսական քաղաքականություն իրականացնող կառույցների, ինչպես նաև սոցիալ-տնտեսական զարգացման հարցերով զբաղվող մասնագետների և ուսանողների կողմից:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Հետազոտության հիմնական դրույթները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Տնտեսագիտության տեսության ամբիոնում, ՀՀ ֆինանսների նախարարության մակրոտնտեսական քաղաքականության վարչությունների մասնագետների հետ, ինչպես նաև Միլանի պոլիտեխնիկում կայացած ամառային դպրոցի շրջանակներում (2016թ. հուլիսի 3-10):

Արդյունքները ներկայացվել են «Գիտելիք, նորաստեղծություն և զարգացում» (2015թ.) ՀՊՏՀ գիտաժողովում և «Արևելյան Ասիայի ռեգիոնալ զարգացում, ռեգիոնալ գիտության

հեռանկարները» սեմինարի ընթացքում (ՀՀ ԿԲ, 2016թ.): Հիմնական դրույթները և արդյունքները հրապարակվել են գիտական 4 հոդվածներում:

Հետազոտության արդյունքների մի մասն այժմ կիրառվում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Տնտեսագիտության տեսության ամբիոնում և ՀՀ ֆինանսների նախարարությունում:

Ատենախոսության կառուցվածքը և համառոտ նկարագրությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Տնտեսական զարգացման սոցիալական առաջնահերթությունների հայեցակարգային հիմքերը»** գլխում ներկայացված են տնտեսական և սոցիալական ոլորտների փոխազդեցության վերաբերյալ գրականության ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև աշխարհում և Հայաստանում զարգացման համար ընտրված նպատակների իրագործման շարժընթացը: Մեթոդաբանորեն հիմնավորվել է ՀՀ տնտեսական զարգացման սոցիալական առաջնահերթությունների ընտրությունը:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ սոցիալական առաջնահերթությունները մարդկային զարգացման համատեքստում»** գլխում ներկայացված են մարդկային կապիտալի զարգացմանը, անհավասարությանը, աղքատությանը, գործազրկությանը վերաբերող վերլուծությունների, ինչպես նաև հետազոտության նպատակով գնահատված էկոնոմետրիկ մոդելի արդյունքները: Քննարկվել են սոցիալական հիմնախնդիրների լուծման հնարավոր ուղիները:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ սոցիալական քաղաքականությունը ժողովրդագրական արդի իրավիճակում»** գլխում հետազոտվել է ՀՀ սոցիալ-տնտեսական պայմանների և ժողովրդագրական հիմնահարցերի փոխազդեցությունը: Վերլուծվել են պետության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականության գլխավոր ուղղությունները, գոյություն ունեցող խնդիրները և առաջարկվել են բարելավման եղանակներ:

Եզրակացությունների և առաջարկությունների մեջ շարադրվել են ատենախոսության ուսումնասիրություններից և գնահատականներից բխող հիմնական եզրահանգումները և առաջարկությունները:

Ատենախոսության վերջում ներկայացված է օգտագործված գրականության ցանկը, հավելվածներում՝ Հազարամյակի և Կայուն զարգացման նպատակները, գնահատված էկոնոմետրիկ մոդելը, դրա որակի ստուգման արդյունքները և վիճակագրական որոշ տվյալներ:

Ատենախոսության ծավալը (առանց հավելվածների) կազմում է 106 էջ, պարունակում է 9 աղյուսակ, 26 գծապատկեր և 9 հավելված:

ԳԼՈՒԽ 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Տնտեսական և սոցիալական զարգացման փոխազդեցության հիմնախնդիրները

Տնտեսական զարգացման վերջնանպատակը մարդկային զարգացումն է, հետևաբար այն առավելապես ուղղված կլինի դրա իրագործմանը, եթե տնտեսական ցուցանիշների բարելավումն ուղեկցվի սոցիալական խնդիրների լուծմամբ: Սոցիալական ոլորտն ունի առաջնային կարևորություն, ինչի մասին վկայում է նաև այն, որ 2015թ. տնտեսագիտության Նոբելյան մրցանակը շնորհվեց Ա. Դիթոնին՝ աղքատությանը, սպառմանը, բարեկեցությանը վերաբերող հետազոտությունների համար¹: Խորացող սոցիալական խնդիրները գտնվում են ոչ միայն տնտեսագետների, սոցիոլոգների, քաղաքագետների, այլև մյուս բնագավառների ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում: Մասնավորապես՝ Հռոմի պապ Ֆրանցիսկոսն, իր ուղերձում (Encyclical Letter) անդրադառնալով անհավասարության, աղքատության, միգրացիայի, շրջակա միջավայրի աղտոտման և այլ հարցերին, նշում է, որ խնդրի վերաբերյալ համակարգված պատկերացում ունենալու համար անհրաժեշտ է համադրել գիտության տարբեր բնագավառներից ստացված գիտելիքները²:

Տնտեսական ու սոցիալական ոլորտները փոխկապակցված են, և հաճախ դժվար է դրանց առանձնացնելը: Անհավասարության բարձր մակարդակի և աղքատության կրճատումը, զբաղվածության ապահովումը կարելի է դիտարկել ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական տեսանկյունից: Տնտեսական զարգացումը նպաստում է սոցիալական խնդիրների լուծմանը: Մասնավորապես՝ ներառական շուկաների (inclusive markets) ձևավորման միջոցով առաջանում են գործազրկության և աղքատության

¹ Deaton A., Prize Lecture: Measuring and Understanding Behavior, Welfare, and Poverty, 2015, available at https://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/2015/deaton-lecture.html

Deaton A., The Great Escape: Health, Wealth, and the Origins of Inequality, Princeton University Press, 2013

² Encyclical Letter *Laudato Si'* Of The Holy Father Francis On Care For Our Common Home, 2015, pp. 82-83, available at http://w2.vatican.va/content/francesco/en/encyclicals/documents/papa-francesco_20150524_enciclica-laudato-si.html

կրճատման պայմաններ³: Իր հերթին սոցիալական զարգացման միջոցով բարենպաստ միջավայր է ստեղծվում տնտեսական առաջընթացի համար. խտրականության վերացումը, արդարության և վստահության մթնոլորտի ստեղծումը տնտեսական իրավիճակի կայունացման, արդյունավետության և արտադրողականության բարձրացման գործոններից են:

Երկար տարիներ որպես տնտեսական զարգացման չափորոշիչ ընդունվել է մեկ շնչի հաշվով իրական ՀՆԱ-ն, սակայն Գ. Մյուրդալը, Ա.Սենը, Զ. Ստիգլիցը և մյուսներն առաջադրեցին այն տեսակետը, որ զարգացումն ու բարեկեցությունը բազմաբովանդակ երևույթներ են, և հնարավոր չէ միայն տնտեսական աճով բացատրել այն: Մյուրդալը զարգացումը կապեց ինստիտուցիոնալ միջավայրի, արտաքին տնտեսական հարաբերությունների, ժողովրդավարության հարցերի և այլնի հետ⁴: Ա. Սենն այն դիտարկեց որպես ազատության ընդլայնման, այլ ոչ թե պարզապես եկամտի աճի գործընթաց⁵:

Զ. Ստիգլիցի կարծիքով ՀՆԱ-ն չի կարող ամբողջությամբ բնութագրել կենսապայմանները: Այսպես՝ առողջապահության ոլորտում անարդյունավետության հետևանքով ծախսերի ավելացումը նպաստում է ՀՆԱ աճին, սակայն դրական ազդեցություն չի ունենում բնակչության կյանքի որակի բարելավման առումով: ՀՆԱ-ի հաշվարկի մեջ ներառված չէ նաև դրա ստեղծման ժամանակ շրջակա միջավայրին և բնակչության առողջությանը հասցված վնասի չափը: Մեկ շնչի հաշվով ՀՆԱ աճը կարող է ուղեկցվել բնակչության առողջական վիճակի վատթարացմամբ, եթե դրա հետևանքով ավելանում է շրջակա միջավայրի աղտոտումը: Այսպես՝ հանքարդյունաբերության ոլորտում արդյունահանման ծավալների աճը նպաստում է տնտեսական ցուցանիշների բարելավմանը (տնտեսական աճ, հարկային մուտքերի ավելացում, գործազրկության մակարդակի կրճատում), սակայն համապատասխան միջոցառումների բացակայության պարագայում էական վնաս է հասցնում բնակչության առողջությանը: Հետևաբար հեղինակն առաջարկում է կիրառել նաև «կանաչ ՀՆԱ» գաղափարը, ըստ որի՝ զուտ

³Acemoglu D, Robinson J., Why Nations Fail, The Origins of Power, Prosperity, and Poverty, Crown Business, New York, 2012, p. 77

⁴Myrdal G., Prize lecture: The Equality Issue In World Development, 1975, available at http://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1974/myrdal-lecture.html

Myrdal G., Asian Drama: An Inquiry Into the Poverty of Nations, Vol I-III, Twentieth Century Fund, New York, 1968

⁵Sen A., Development as Freedom, Oxford University Press, 2001

ներքին արդյունքը հարկավոր է ճշգրտել բնական ռեսուրսների սպառման և շրջակա միջավայրին հասցված վնասի չափով⁶:

Տնտեսական աճի և մարդկային զարգացման փոխազդեցությանն անդրադարձել է նաև Գ. Ռանիսը՝ նշելով, որ անհավասարության մակարդակը և պետական ծախսերի ուղղությունն ու արդյունավետությունը դրա վրա ազդող գլխավոր գործոններից են⁷: Այս խնդիրները գտնվում են նաև հայազգի տնտեսագետների ուշադրության կենտրոնում: Մասնավորապես Հ. Աղաջանյանի կարծիքով տնտեսական համակարգի իրական վիճակը գնահատելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև ՀՆԱ աճի որակին, որը պայմանավորված է հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտների ներդաշնակ զարգացմամբ⁸: Ս. Գրիգորյանը նշում է, որ տնտեսական աճի և տնտեսական զարգացման միջև գոյություն ունի բարդ դիալեկտիկական փոխկապվածություն, որն արտահայտվում է տնտեսության քանակական և որակական բնութագրիչների փոխպայմանավորվածությամբ: Ըստ հեղինակի՝ տնտեսական զարգացումը ենթադրում է փոփոխություններ հասարակության տնտեսական և սոցիալական կառուցվածքում, որոնց արդյունքում յուրաքանչյուր նոր սերունդ բարեկեցության ավելի բարձր մակարդակի է հասնում, քան իր նախորդները⁹:

Տնտեսական աճը կնպաստի սոցիալ-տնտեսական զարգացմանը, եթե ուղեկցվի աշխատատեղերի ստեղծմամբ, անհավասարության բարձր մակարդակի և աղքատության կրճատմամբ, որակյալ կրթության, առողջապահական ծառայությունների հասանելիության աստիճանի բարձրացմամբ և այլն: Հետևաբար կարևոր է ոչ միայն տնտեսական աճի ապահովումը, այլև այն, թե ինչպես են ստեղծվում և բաշխվում դրա «պտուղները», ինչպիսին են սոցիալական հետևանքները, ինչպիսին է ազդեցությունը բնակչության առողջության վրա և այլն:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է ներկայացնել տնտեսական աճի ու անհավասարության, աղքատության, գործազրկության, մարդկային զարգացման

⁶ **Stiglitz J.**, The Price of Inequality, Allen Lane, an imprint of Penguin Books, London, 2012, pp. 182-186

⁷ **Ranis G.**, Human Development and Economic Growth, Economic Growth Center, Center Discussion Paper No 887, Yale University, May 2004, available at <http://ssrn.com/abstract=551662>, pp. 1-8

⁸ **Աղաջանյան Հ.**, Տնտեսական աճի որակի հարցի շուրջ, Բանբեր ՀՊՏՀ-ի, N 4, Երևան 2013թ., էջ 31

⁹ **Գրիգորյան Ս.**, Տնտեսական աճի և տնտեսական զարգացման սահմանազատման չափանիշները, Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, N4, Երևան 2012թ., էջ 186

փոխազդեցության հարցերը: Չարգացման հայեցակարգում առանձնակի կարևորություն է ներկայացնում անհավասարության խնդիրը: Այն ազդում է անգամ կյանքի սպասվող տևողության վրա, քանի որ սոցիալական վատ պայմանները բացասաբար են անդրադառնում առողջության վրա¹⁰: Այս կապակցությամբ հարկավոր է նշել, որ մարդկային զարգացման համաթիվը, որը կազմված է եկամուտը, առողջական կարգավիճակը և կրթության մակարդակը բնութագրող բաղադրիչներից, ճշգրտվում է անհավասարությունը գնահատող ցուցանիշներով¹¹:

Տնտեսական աճի ապահովման գործում ներդրված ջանքերի և դրա արդյունքների բաշխման միջև կապը հաճախ խզվում է: Տնտեսական աճի «պտուղները» չեն կարող համաչափ բաշխվել, որովհետև տարբեր է հասարակության առանձին անդամների կողմից դրա ստեղծման գործում մասնակցության աստիճանը: Միաժամանակ դրանք պետք է հասանելի լինեն հասարակության յուրաքանչյուր անդամին՝ թեկուզ և տարբեր համամասնություններով: Հակառակ դեպքում կխորանա սոցիալական մեկուսացումը, ինչը չի կարելի համարել զարգացում¹²: Տնտեսական աճը հասարակության անդամների համար պետք է վերածվի հնարավորությունների և նպաստի կենսամակարդակի բարձրացմանը:

Անհավասարության բարձր մակարդակի կրճատումն իր հերթին աշխատանքի արտադրողականության և տնտեսական արդյունավետության բարձրացման, տնտեսական աճի ապահովման գործոններից է: Տնտեսագիտության տեսության մեջ տիրապետող էր այն կարծիքը, որ հավասարության բարձր մակարդակը բացասաբար է ազդում տնտեսական աճի վրա, սակայն այժմ տարածված է այն տեսակետը, ըստ որի՝ և՛ հավասարության (ոչ լրիվ), և՛ տնտեսական աճի միաժամանակյա գոյությունը հնարավոր

¹⁰ **Stiglitz J.**, When Inequality Kills, 2015, available at <http://www.project-syndicate.org/commentary/lower-life-expectancy-white-americans-by-joseph-e--stiglitz-2015-12?barrier=true>

Case A., Deaton A., Rising morbidity and mortality in midlife among white non-Hispanic Americans in the 21st century, Princeton University, 2015, available at <http://www.pnas.org/content/112/49/15078.full.pdf>

¹¹ **UNDP**, Human Development Reports, Inequality-adjusted Human Development Index, available at http://hdr.undp.org/sites/default/files/hdr2016_technical_notes.pdf

¹² **The World Bank**, Inclusion Matters: The Foundation for Shared Prosperity. Washington, D.C., 2013, pp. 143-146

է¹³: Բացի այդ, Մ. Սփենսի կարծիքով որպեսզի տնտեսական աճը լինի կայուն, այն պետք է լինի նաև ներառական¹⁴:

Անհավասարության և տնտեսական աճի փոխազդեցությանն անդրադառնալիս հարկավոր է նշել, որ երբ գործատուն ստանում է գերշահույթ, իսկ աշխատողների աշխատավարձն արտադրողականությանը համահունչ չի աճում, փոքրանում են լավ աշխատելու խթանները: Հետևաբար վարձատրության արդար համակարգը կարևոր է աշխատանքի արտադրողականության հարցում և էապես նպաստում է տնտեսական աճին:

Աղքատության կրճատումն այն ուղիներից է, որով տնտեսական աճը նպաստում է մարդկային զարգացմանը: Սա պահանջում է այնպիսի տնտեսական աճ, որը բնակչությանը հնարավորություն է տալիս օգտվել դրա «պտուղներից»: Խոսքը ներառական տնտեսական աճի մասին է, որն արտասահմանյան գրականության մեջ հայտնի է “inclusive growth” եզրույթով: Կիրառվում է նաև «աճ աղքատների օգտին» եզրույթը (pro-poor growth): Սակայն եթե վերջինը կենտրոնանում է հատկապես աղքատների բարեկեցության վրա, ներառական աճի պարագայում ուշադրության կենտրոնում են գտնվում բնակչության մեծամասնության հնարավորությունները (ինչպիսիք են աղքատներն ու միջին խավը): Այն երկարաժամկետ ուղղվածություն ունի, քանի որ առավելապես կենտրոնանում է ոչ թե եկամուտների վերաբաշխման, այլ արտադրողական զբաղվածություն ապահովելու վրա: Կարճաժամկետում կառավարությունը կարող է եկամուտների վերաբաշխման ճանապարհով մեղմել աղքատության հիմնախնդիրը, սակայն երկարաժամկետում դա չի կարող դառնալ հարցի լուծման միակ ուղին¹⁵:

Իր հերթին աղքատության կրճատումը տնտեսական աճի ապահովման գործոններից է: Դա բացատրվում է նրանով, որ ցածր եկամուտներ ունեցող մարդկանց սպառման սահմանային հակումը սովորաբար մեծ է, հետևաբար նրանց կենսամակարդակի

¹³ **Stiglitz J.**, Causes and consequences of growing inequality and what can be done about it, The fourth annual Oxford Fulbright distinguished lecture on international relations, available at <https://www.youtube.com/watch?v=TbvF05EXEVk#t=1329>

¹⁴ **Spence M.**, In Search of Growth Strategies, 2016, available at <https://www.project-syndicate.org/commentary/global-economy-growth-strategies-by-michael-spence-2016-01>

¹⁵ **Ianchovichina E., Lundstrom S.**, with input from **Garrido L.**, What Is Inclusive Growth? February 10, 2009. The note was requested by donors supporting the Diagnostic Facility for Shared Growth, pp. 1-3

բարձրացումը նպաստում է ամբողջական պահանջարկի աճին: Առաջնահերթություն է սոցիալապես խոցելի խմբերի հիմնական պահանջմունքների բավարարումը (այս մոտեցումն արտասահմանյան գրականության մեջ հայտնի է “Basic needs approach” եզրույթով¹⁶): Սակայն անհրաժեշտ է ոչ միայն հաղթահարել աղքատությունը, այլև բարեկեցության բարձր մակարդակի հասնելու համար նպաստավոր պայմաններ ստեղծել:

Մարդկային, հետևաբար և տնտեսական զարգացման համար չափազանց մեծ է կրթության դերը: Որպեսզի հնարավոր լինի ապահովել կայուն զարգացում, անհրաժեշտ է նպաստել կրթության հասանելիության աստիճանի բարձրացմանը: Ոչ բավարար վճարունակության հետևանքով որակյալ կրթություն ստանալու փոքր հնարավորությունն ունենում է երկարաժամկետ բացասական հետևանքներ, ինչպես անհատի, այնպես էլ հասարակության համար:

Տնտեսական աճը ենթադրում է հարկային մուտքերի ավելացում, հետևաբար և պետական ծախսերի մեծացման հնարավորություն: Դրանք կարող են ուղղվել կրթության ֆինանսավորմանը: Այստեղ կարևոր է ոչ միայն կրթության հասանելիության ապահովումը, այլև դրա որակի բարձրացումը: Կրթությունն անհրաժեշտ է կայուն զարգացման համար, բայց ոչ բավարար: Որպեսզի այն վերածվի կարողության, պետք է լինի որակյալ և ժամանակակից պահանջներին համապատասխան:

Մարդկային զարգացմանը նվիրված 2015թ. զեկույցում ընդգծվում է աշխատանքի կարևորությունը¹⁷: Այն հնարավորություն է տալիս իրացնել կրթական կապիտալը, ինչպես նաև զարգացնել հմտություններն ու կարողությունները: Գործազրկության խնդիրը սրվել է ոչ միայն զարգացող, այլև զարգացած երկրներում: Պարտքային ճգնաժամից հետո եվրոպական մի շարք երկրներում տնտեսության վերականգնումը չի ուղեկցվում զբաղվածության խնդիրների լուծմամբ (արտասահմանյան գրականության մեջ այս երևույթը հայտնի է “jobless recovery” եզրույթով¹⁸): Երկարատև գործազրկության հետևանքով քայքայվում է մարդկային կապիտալի պաշարը, քանի որ տևական ժամանակով գործազուրկ դարձած մասնագետները կորցնում են իրենց մասնագիտական

¹⁶ **ILO International Labor Office, With an Introduction by James P. Grant**, Employment, Growth and Basic Needs: A One-World Problem, Praeger Publishers, New York, 1977, pp. 31-43

¹⁷ **UNDP**, Human Development Report 2015, Work For Human Development, New York, 2015, See particularly chapter 1

¹⁸ **Stiglitz J.**, The Price of Inequality, Allen Lane, an imprint of Penguin Books, London, 2012, p. 240

ունակությունների զգալի մասը: Գործազրկության բարձր մակարդակը ձևավորում է նաև անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտ:

Կյանքի սպասվող տևողությունը կյանքի որակի գնահատման կարևորագույն ցուցանիշներից է: Անանդի և Ռավալլիոնի հետազոտությունները վկայում են, որ կյանքի սպասվող տևողությունն ավելանում է այն դեպքում, երբ տնտեսական աճն ուղեկցվում է սոցիալական ծառայությունների ընդլայնմամբ (ինչպիսիք առողջապահական ծառայություններն են) և հատկապես աղքատ բնակչության եկամուտների բարձրացմամբ¹⁹: Այսինքն՝ կարևորվում է ոչ միայն տնտեսական աճը, այլև դրա պտուղների օգտագործման ուղղությունը:

Միայն տնտեսական աճի առկայությունը դեռևս չի երաշխավորում կյանքի որակի բարելավում: Ա. Սենը բերում է այն օրինակը, որ չնայած նրան, որ Չինաստանի և Շրի Լանկայի բնակչության մեկ շնչի հաշվով եկամուտն ավելի ցածր է, քան ԱՄՆ-ում ապրող սևամորթներինը, նրանց կյանքի տևողությունն ավելի երկար է²⁰: Ա. Սենը և Զ. Դրեզեն առանձնացնում են մահացության մակարդակի կրճատման երկու տարբերակ.

1. բարձր տնտեսական աճի միջոցով, որի արդյունավետությունը պայմանավորված է դրա «պտուղների» բաշխմամբ,
2. ի տարբերություն առաջինի՝ սա հիմնվում է սոցիալական օգնության ընդգրկուն ծրագրի վրա²¹:

Ցանկալին այն իրավիճակն է, երբ արձանագրվում է և՛ տնտեսական աճ, և՛ կյանքի սպասվող տևողության երկարացում²²:

Այսպիսով՝ տնտեսական զարգացումը միայն տնտեսական ցուցանիշների քանակական աճը չէ: Այն գնահատվում է նրանով, թե ինչ ազդեցություն է թողնում անհատի և հասարակության կյանքում, ինչպես է նպաստում կենսապայմանների բարելավմանն ու բարեկեցության աճին: Իր հերթին սոցիալական զարգացման միջոցով բարենպաստ միջավայր է ստեղծվում տնտեսական առաջընթացի համար:

¹⁹ **Anand S., Ravallion M.**, Human Development In Poor Countries: On the Role of Private Incomes and Public Services, Journal of Economics Perspectives, Volume 7, 1993, pp. 133-150

²⁰ **Sen A.**, From Income Inequality to Economic Inequality. Southern Economic Journal, 1997, 64(2), pp. 384-401

²¹ **Drèze J., Sen A.**, Hunger and Public Action, Oxford University Press, 1991, see particularly chapter 10

²² **Sen A.**, Development as Freedom, Oxford University Press, 2001, p. 48

1.2. Սոցիալական նպատակների էվոլյուցիան Հազարամյակի և Կայուն զարգացման ծրագրերում

Նախքան ՀՀ տնտեսական զարգացման սոցիալական առաջնահերթությունների ընտրությունը մեթոդաբանորեն հիմնավորելը՝ անհրաժեշտ է ուսումնասիրել դրանց առանձնացման միջազգային փորձը, ձեռք բերված հաջողությունները, ներկա խնդիրներն ու հետագա անելիքները: Հազարամյակի զարգացման գազաթափողովում (2000թ.) ընդունվեցին ութ նպատակներ, որոնք պետք է ճանապարհային քարտեզ դառնային հաջորդ 15 տարիների համար²³: Դրանք նաև տնտեսական զարգացման սոցիալական առաջնահերթություններ են, որոնց իրագործումը պայմանավորված է նաև տնտեսական գործոններով, իսկ արդյունքներն առավելապես զգալի են սոցիալական ոլորտում: Հազարամյակի զարգացման նպատակները կապված են նախկինում ընդունված տարբեր հոչակագրերի և համաձայնագրերի հետ, որոնց շարքում առանձնանում է Սոցիալական զարգացման մասին Կոպենհագենի հոչակագիրը²⁴: Այն ներառում էր սոցիալական զարգացմանն ուղղված գործողությունների ընդգրկուն ծրագիր, որը վերաբերում էր աղքատության հաղթահարմանը, զբաղվածության ապահովմանը, կրթության և առողջապահական ծառայություններից օգտվելու հավասար հնարավորությունների ստեղծմանը և այլն:

Հազարամյակի զարգացման գազաթափողովում ընտրված նպատակներն են (ամբողջական ցանկը ներկայացված է հավելված 1-ում)

Նպատակ 1. Հաղթահարել ծայրահեղ աղքատությունը և սովը.

- 1990-2015թթ. կրկնակի անգամ կրճատել 1\$-ից պակաս եկամուտ ստացող մարդկանց կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում,
- ապահովել լրիվ և արտադրողական զբաղվածություն, ինչպես նաև արժանապատիվ աշխատանքային պայմաններ բոլորի համար՝ այդ թվում կանանց և երիտասարդների,


²³ UN, **Resolution adopted by General Assembly**, United Nations Millennium Declaration, 2000, pp. 1-9, available at <http://www.un.org/millennium/declaration/ares552e.pdf>

UN, **The millennium development goals report 2015**, New York, 2015 pp.4-7

²⁴ UN, **World Summit for Social Development**, Copenhagen Declaration and Programme of Action, available at <http://www.un.org/esa/socdev/wssd/text-version/agreements/index.html>

- 1990-2015թթ. ընթացքում կրկնակի անգամ կրճատել սովից տառապող մարդկանց կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում:

Աշխարհում ծայրահեղ աղքատության մակարդակը երկու անգամ կրճատվեց 1990-2011թթ.²⁵ 36%-ից հասնելով 15%-ի: Այս հարցում մեծ նշանակություն ունեցավ կենսապայմանների բարելավումը Հնդկաստանում և Չինաստանում, որի արդյունքում մարդաշնչի հաշվով օրական 1.25\$-ից քիչ եկամուտ ստացողների կշիռը Հարավային և Արևելյան Ասիայում փոքրացավ համապատասխանաբար 2.3 և 10.2 անգամ: Սահարայից հարավ գտնվող երկրներում 1990-2015թթ. ցուցանիշը նվազեց ընդամենը 16 տոկոսային կետով՝ 57%-ից հասնելով 41%-ի: Այն Կովկասում և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում, որտեղ գտնվում է նաև Հայաստանը, 2015թ. կազմել է 2% (տե՛ս գծապատկեր 1.2.1.):




Գծապատկեր 1.2.1. Ծայրահեղ աղքատության մակարդակը (մարդաշնչի հաշվով օրական 1.25\$-ից քիչ եկամուտ ստացողներ), 1990թ., 2011թ. և 2015թ. (%)²⁵

Զգալի ձեռքբերումներ են արձանագրվել աշխատողների աղքատության կրճատման տեսանկյունից: Այսպես՝ զարգացող տարածաշրջաններում աշխատողների 52%-ը 1991թ. ապրում էր ծայրահեղ աղքատության պայմաններում: Այս ցուցանիշը կրճատվեց՝ 2015թ. կազմելով 11%: Աշխատողների ծայրահեղ աղքատության մակարդակը նույն

²⁵ UN, The millennium development goals report 2015, New York, 2015, p.14

Գծապատկերներ 1.2.1-1.2.4-ում 2015թ. ցուցանիշները ՄԱԿ-ի կողմից ներկայացված գնահատականներ են:

ժամանակաշրջանում Հարավային և Արևելյան Ասիայում նվազել է համապատասխանաբար 3.1 և 22.7 անգամ: Ցուցանիշը կրճատվել է նաև Կովկասում և Կենտրոնական Ասիայում՝ 5%-ից հասնելով 1%-ի (տե՛ս գծապատկեր 1.2.2.):



Գծապատկեր 1.2.2. Աշխատողների ծայրահեղ աղքատության մակարդակը (օրական 1.25\$-ից քիչ եկամուտ ստացող), 1991թ. և 2015թ. (%)²⁶

Ինչ վերաբերում է զբաղվածության ապահովմանը, ապա դա բարդացավ հատկապես տնտեսական աճի տեմպի դանդաղման և անկայունության պայմաններում: Աշխարհում 1991-2015թթ. աշխատանքային տարիքում գտնվող զբաղվածների կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում կրճատվել է 2 տոկոսային կետով՝ 62%-ից հասնելով 60%-ի: Ավելի քան 204 միլիոն մարդ գործազուրկ է եղել 2015թ., ինչը 53 միլիոնով գերազանցում է 1991թ. ցուցանիշը: Զբաղվածության հետ կապված խնդիրները շատ են հատկապես կանանց և երիտասարդների շրջանում: Մասնավորապես գործազրկության մակարդակը երիտասարդների շրջանում, ի տարբերություն հասուն տարիքի բնակչության, գրեթե երեք անգամ ավելի բարձր է²⁷:

Թերսնուցման մակարդակը կրկնակի անգամ կրճատվել է Կենտրոնական, Արևելյան և Հարավարևելյան Ասիայում, Լատինական Ամերիկայում: Ընդհանուր առմամբ

²⁶ Աղբյուրը՝ տե՛ս նույն տեղում, էջ 18


²⁷ Աղբյուրը՝ տե՛ս նույն տեղում, էջ 17

զարգացող տարածաշրջաններում չի հաջողվել կրկնակի անգամ կրճատել սովից տառապող մարդկանց կշիռը²⁸:

Նպատակ 2. Ապահովել տարրական կրթության համընդհանուր հասանելիություն.

- մինչև 2015թ. բոլոր երեխաների (և՛ տղաների, և՛ աղջիկների) համար ամենուրեք ապահովել տարրական կրթության ամբողջ ծրագրի հասանելիություն:

Տարրական դպրոց հաճախելիության մակարդակը զարգացող տարածաշրջաններում 1990-2015թթ. 80%-ից հասել է 91%-ի (տե՛ս գծապատկեր 1.2.3.): Նպատակի ամբողջական իրականացմանը խոչընդոտում են բնակավայրին մոտ դպրոցների բացակայությունը, աղքատությունը, պատերազմական իրավիճակները և այլն:



Գծապատկեր 1.2.3. Տարրական դպրոց հաճախելիության ճշգրտված մակարդակը 1990թ., 2000թ. և 2015թ. (% գուտ)²⁹

Նպատակ 3. Խրախուսել գենդերային հավասարությունը և ընդլայնել կանանց լիազորությունները.

- գենդերային անհավասարությունը տարրական և միջնակարգ կրթություն ստանալու հարցում նախընտրելի է վերացնել մինչև 2005թ., իսկ անհավասարությունը կրթության բոլոր մակարդակներում ոչ ուշ քան 2015թ.:

²⁸ Աղբյուրը՝ տե՛ս նույն տեղում, էջ 21

²⁹ Աղբյուրը՝ տե՛ս նույն տեղում, էջ 24


Օվկիանիայի 2000թ., Կովկասի և Կենտրոնական Ասիայի 1990թ. տարրական դպրոց հաճախելիության ճշգրտված մակարդակը զեկույցում ներկայացված չէ:

Գենդերային անհավասարության հետ կապված հարցերը շարունակում են գտնվել տնտեսագետների ուշադրության կենտրոնում, քանի որ դրանք թույլ չեն տալիս զարգացնել և իրացնել մարդկային ներուժը: Ինդրի լուծումն ունի առաջնային կարևորություն, քանի որ կան երկրներ, որտեղ կանայք մեծ դժվարությունների են հանդիպում նույնիսկ կրթություն ստանալու հարցում: Այս առումով կարելի է նշել, որ խաղաղության Նոբելյան մրցանակը 2015թ. շնորհվեց 15-ամյա Մալալա Յուսաֆզաիին, ով Պակիստանում մահափորձի էր ենթարկվել պարզապես կանանց և երեխաների իրավունքների պաշտպանությամբ հանդես գալու պատճառով³⁰:

Նպատակ 4. Կրճատել երեխաների մահացությունը.

- 1990-2015թթ. երկու երրորդով կրճատել հինգ տարեկանից փոքր երեխաների մահացության մակարդակը:

Աշխարհում հինգ տարեկանից փոքր երեխաների մահացությունը կրճատվել է 1990-2015թթ.՝ 1000 կենդանի ծնունդների հաշվով 90 դեպքից հասնելով 43-ի: Սա մարդկային պատմության ամենանշանակալի ձեռքբերումներից է (տե՛ս գծապատկեր 1.2.4.):



Գծապատկեր 1.2.4. Հինգ տարեկանից փոքր երեխաների մահացության մակարդակ, 1990թ. և 2015թ. (1000 կենդանի ծնվածների հաշվով)³¹

³⁰ Yousafzai M., Nobel Lecture, 2014, available at https://www.nobelprize.org/nobel_prizes/peace/laureates/2014/yousafzai-lecture_en.html


³¹ UN, The millennium development goals report 2015, New York, 2015, p. 32

Համաձայն ՄԱԿ-ի կողմից ներկայացված գնահատականների՝ կարմրուկի դեմ պատվաստումներն էական նշանակություն են ունեցել այս հարցում, ինչի արդյունքում 2000-2013թթ. հնարավոր է եղել խուսափել շուրջ 15.6 մլն մահվան դեպքերից³²: Միաժամանակ երեխաների մահացության մակարդակը շարունակում է բարձր լինել Սահարայից հարավ գտնվող աֆրիկյան երկրներում, Հարավային Ասիայում և Օվկիանիայում:

Նպատակ 5. Բարելավել մայրական առողջությունը.

- 1990-2015թթ. երեք քառորդով կրճատել մայրական մահացության մակարդակը,
- մինչև 2015թ. ապահովել վերարտադրողական առողջության պահպանմանն ուղղված ծառայություններից օգտվելու համընդհանուր հասանելիություն:

Աշխարհում 1990-2015թթ. մայրական մահացությունը կրճատվել է գրեթե երկու անգամ: Զարգացած տարածաշրջաններում 2013թ. 100,000.0 կենդանի ծնունդների հաշվով արձանագրվել է 16 դեպք, իսկ զարգացող տարածաշրջաններում՝ 230 դեպք (տե՛ս գծապատկեր 1.2.5.):



Գծապատկեր 1.2.5. Մայրական մահացության մակարդակ, 1990թ., 2000թ. և 2013թ. (100,000.0 կենդանի ծնվածների հաշվով)³³

³² Աղբյուրը՝ տե՛ս նույն տեղում, էջ 36
³³ Աղբյուրը՝ տե՛ս նույն տեղում, էջ 38

Մայրական մահացության մակարդակը բարձր է Սահարայից հարավ գտնվող աֆրիկյան երկրներում (100,000.0 կենդանի ծնունդների հաշվով 510 դեպք), Հարավային Ասիայում, Օվկիանիայում և Կարիբյան ծովածոցի երկրներում: Վերջին երեք տարածաշրջաններից յուրաքանչյուրում 100,000.0 կենդանի ծնունդների հաշվով 2013թ. գրանցվել է 190 դեպք:

Նպատակ 6. Պայքարել ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի, մալարիայի և այլ հիվանդությունների դեմ.

- մինչև 2015թ. կանխել ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի, մալարիայի ու այլ խոշոր վարակների տարածումը և կրճատել դրանցով հիվանդացության դեպքերը,
- մինչև 2010թ. ապահովել ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի բուժման համար անհրաժեշտ առողջապահական ծառայություններից օգտվելու համընդհանուր հասանելիություն:

Աշխարհում ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի և այլ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարում զգալի առաջընթաց է գրանցվել: Մասնավորապես կրճատվել են ՄԻԱՎ-ի տարածման դեպքերը: Մալարիայի դեմ պատվաստումների արդյունքում 2000-2015թթ. հնարավոր է եղել խուսափել շուրջ 6.2 մլն մահվան դեպքից³⁴: Միաժամանակ վերոնշյալ նպատակը շարունակում է մնալ առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների ցանկում, քանի որ այս հիվանդությունների կանխարգելման և բուժման ուղղությամբ դեռևս բազմաթիվ անելիքներ կան:

Նպատակ 7. Ապահովել շրջակա միջավայրի կայունությունը.

- երկրների կողմից իրականացվող քաղաքականության մեջ և ծրագրերում ներառել կայուն զարգացման սկզբունքները, հակազդել բնական ռեսուրսների կրճատմանը,
- մինչև 2010թ. էականորեն նվազեցնել կենսաբազմազանության կրճատման տեմպը,
- մինչև 2015թ. երկու անգամ կրճատել խմելու անվտանգ ջրին և անհրաժեշտ սանիտարական պայմաններին հասանելիություն չունեցողների կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում,
- մինչև 2020թ. էականորեն բարելավել վթարային կացարաններում բնակվող առնվազն 100 մլն ընտանիքների կյանքի որակը:

³⁴ Աղբյուրը՝ տե՛ս նույն տեղում, էջ 44

Բարելավված սանիտարական պայմաններին հասանելիություն ունեցողների կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում 1990-2015թթ. ավելացել է 14 տոկոսային կետով՝ կազմելով 68%: Խմելու մաքուր ջրից օգտվողների թիվն աճել է 2.6 միլիարդով: Միաժամանակ ջրամատակարարման համակարգն առկա է աշխարհի բնակչության 58%-ի բնակարաններում: Շրջակա միջավայրի պահպանման տեսանկյունից նույնպես ձեռքբերումներ արձանագրվել են, սակայն ածխաթթու գազի արտանետումներն 1990թ. նկատմամբ ավելացել են ավելի քան 50%-ով³⁵: Հետևաբար այս խնդիրները դեռևս լուծված չեն և կան բազմաթիվ անելիքներ:

Նպատակ 8. Զարգացման համար ապահովել միջազգային համագործակցություն.

- շարունակել զարգացնել բաց, կանոնակարգված, կանխատեսելի, ոչ խտրական առևտրային և ֆինանսական համակարգեր,
- միջոցներ ձեռնարկել թույլ զարգացած, փոքր կղզիների վրա գտնվող, ինչպես նաև դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների հատուկ կարիքների բավարարման ուղղությամբ,
- միջոցներ ձեռնարկել զարգացող երկրների պարտքի հիմնախնդիրները լուծելու ուղղությամբ,
- համագործակցելով դեղագործական ընկերությունների հետ՝ զարգացող երկրներում ապահովել առաջին անհրաժեշտության դեղամիջոցների հասանելիությունը,
- համագործակցելով մասնավոր հատվածի հետ՝ մատչելի դարձնել նոր, մասնավորապես տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները:

Վերոնշյալ նպատակի իրականացման առումով նշանակալի հաջողություններ են գրանցվել. զարգացմանն ուղղված միջազգային օգնությունը 2000-2014թթ. ավելացել է 66%-ով, իսկ բջջային կապը 2015թ. հասանելի էր աշխարհի բնակչության 95%-ի համար: Համացանցից օգտվողների տեսակարար կշիռն ամբողջ աշխարհում 2000-2015թթ. 6%-ից հասել է 43%-ի³⁶: Միաժամանակ մի շարք անելիքներ դեռևս կան ինչպես այս, այնպես էլ մյուս ցուցանիշների հետագա բարելավման տեսանկյունից:


³⁵ Աղբյուրը՝ տե՛ս նույն տեղում, 52-59-րդ էջեր

³⁶ Աղբյուրը՝ տե՛ս նույն տեղում, 62-68-րդ էջեր

Հազարամյակի զարգացման նպատակների իրագործումը ՀՀ-ում

Ընդհանուր առմամբ ՀՁՆ-ների ներքո Հայաստանը սահմանել և ստանձնել է 16 ազգային թիրախներ (տե՛ս հավելված 2), որոնք մեծ մասամբ մնացին չիրագործված: Այսպես՝

Նպատակ 1. Ծայրահեղ աղքատության և սովի հաղթահարման ուղղությամբ Հայաստանը չկարողացավ ամբողջությամբ կատարել ստանձնած պարտավորությունները: Մինչև 2008թ. Հայաստանի Հանրապետությունում տնտեսական աճին զուգահեռ արձանագրվեց աղքատության մակարդակի կրճատում, սակայն ճգնաժամի հետևանքով այն նորից աճեց և սկսեց նվազել 2010թ. հետո: ՀՀ-ում աղքատության մակարդակը (ըստ սպառման ագրեգատի) 2016թ. կազմել է 29.4%, իսկ ծայրահեղ աղքատությունը՝ 1.8% (տե՛ս գծապատկեր 1.2.6.):




Գծապատկեր 1.2.6. Աղքատության, ծայրահեղ աղքատության մակարդակների և տնտեսական աճի դինամիկան Հայաստանում, 2004-2016թթ. (%)³⁷

Գծապատկեր 1.2.6.-ից երևում է նաև, որ ՀՀ-ում դեռևս չի հաջողվել հաղթահարել ծայրահեղ աղքատությունը, հետևաբար նաև թերսնուցումը (ծայրահեղ աղքատ կամ թերսնված են համարվում նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է

³⁷ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2017թ., էջ 43

աղքատության պարենային գծից³⁸): Ինչ վերաբերում է աշխատանքային պայմանների բարելավման հետ կապված նպատակին, ապա երեք և ավելի աշխատող անդամներ ունեցող տնային տնտեսությունների շրջանում աղքատության մակարդակը 2016թ. կազմել է 26.7%³⁹: Հետևաբար աշխատանքային պայմանների հետ կապված հարցերը շարունակում են մնալ լուծում պահանջող խնդիրների ցանկում:

Նպատակ 2. ՀՀ-ում հիմնական նպատակը որակյալ միջնակարգ կրթության համընդհանուր հասանելիության ապահովումն էր: Հայաստանում չհաջողվեց սահիականացնել, քանի որ դեռևս զգալի թվով աշակերտներ անավարտ են թողնում ուսումը: Այսպես՝ սոցիալ-տնտեսական վատ պայմանների հետևանքով 2016-2017 ուստարում դպրոցից հեռացել է 174 երեխա (տե՛ս գծապատկեր 1.2.7.): Հաշմանդամ երեխաների համար անհրաժեշտ պայմանների, օրինակ՝ թեքահարթակների բացակայությունը նույնպես կրթություն ստանալու խոչընդոտներից է: Նման խնդիրների լուծումը կնպաստի նրանց սոցիալական ներգրավվմանը, մարդկային, հետևաբար նաև կայուն տնտեսական զարգացմանը:



Գծապատկեր 1.2.7. Սոցիալ-տնտեսական վատ պայմանների հետևանքով հանրակրթական դպրոցներից հեռացած (ուսումն անավարտ թողած) աշակերտների թվաքանակը, մարդ, 2003-2017թթ.⁴⁰


³⁸ Աղբյուրը՝ տե՛ս նույն տեղում, էջ 39

³⁹ Աղբյուրը՝ տե՛ս նույն տեղում, էջ 60

⁴⁰ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը, Երևան 2003-2016թթ. հրապարակումներ, համապատասխանաբար 26-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 27-րդ, 32-րդ, 36-րդ, 37-րդ, 40-րդ, 42-րդ, 45-րդ, 45-րդ, 47-րդ, 49-րդ էջեր

Նպատակ 3. Գենդերային հավասարության խթանման և կանանց լիազորությունների ընդլայնման գծով Հայաստանն իր առջև դրված թիրախները չի կատարել: Ճիշտ է՝ խտրականությունը կրթություն ստանալու հարցում նվազագույնի է հասցված ՀՀ-ում, սակայն կանայք, ի տարբերություն տղամարդկանց, համեմատաբար քիչ են ներգրավված գործարար և քաղաքական կյանքում: Միաժամանակ այստեղ իրականացվում են հղիության՝ սեռով պայմանավորված արհեստական ընդհատումներ: Սա խտրականության ամենածանր դրսևորումներից է, քանի որ այս դեպքում մարդը զրկվում է նույնիսկ ծնվելու հնարավորությունից:

Նպատակ 4. ՀՀ-ում 1990-2016թթ. ընթացքում էականորեն կրճատվել է մինչև 4 տարեկան երեխաների մահացությունը: Ցուցանիշը 2016թ. կազմել է 10.1‰ (տե՛ս գծապատկեր 1.2.8.): Երեխաների մահացության պատճառների մեջ ամենատարածվածը շուրջճննդաբերական շրջանում առաջացած բարդություններն են⁴¹: Սոցիալական պայմանների ազդեցությունն այս հարցում նշանակալի է, հետևաբար իրավիճակի բարելավմանը կնպաստեն աղքատության կրճատումը, բնակարանային և հիվանդանոցային պայմանների բարելավումը և այլն:




Գծապատկեր 1.2.8. Հինգ տարեկանից փոքր երեխաների մահացության գործակիցը Հայաստանում (1000 կենդանի ծնվածների հաշվով), 1990-2016թթ.⁴²

⁴¹ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Երևան 2017թ., էջ 80

⁴² Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Երևան 2008թ., 2012թ. և 2017թ. հրապարակումներ, համապատասխանաբար 23-րդ և 77-րդ, 82-րդ և 85-րդ, 80-րդ էջեր, ցուցանիշը 1990-

Նպատակ 5. Մայրական մահացության մակարդակը 1990-2016թթ. կրճատվել է՝ 100,000.0 կենդանի ծնվածների հաշվով 40 դեպքից հասնելով 29.6-ի (տե՛ս գծապատկեր 1.2.9.): Միաժամանակ, ի տարբերություն երեխաների մահացության, այս ցուցանիշի շարժընթացը կայուն բնույթ չի ունեցել, և տատանումները բավականին մեծ են եղել: Սա վկայում է այն մասին, որ վերարտադրողական առողջության պահպանմանն ուղղված ծառայությունների նկատմամբ վերահսկողության խստացումը կարող է նվազեցնել հղիության ընթացքում անսպասելի զարգացումները և դրական ազդեցություն ունենալ մահացության դեպքերի կրճատման առումով:



Գծապատկեր 1.2.9. Մայրական մահացության գործակիցը Հայաստանում (100,000.0 կենդանի ծնվածների հաշվով), 1990-2016թթ.⁴³

Նպատակ 6. Այս ուղղությամբ ձեռնարկված գործողություններն արդյունավետ են եղել այն իմաստով, որ 2007թ. ի վեր բոլոր գրանցված ՄԻԱՎ վարակակիրներն անհրաժեշտության դեպքում հնարավորություն են ունեցել օգտագործել համապատասխան դեղեր, իսկ տուբերկուլոզի հայտնաբերված բոլոր դեպքերը բուժվել են անմիջական հսկողությամբ իրականացվող կարճատև բուժման շրջանակներում⁴⁴:

1999թթ. համար հաշվարկվել է մեր կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակած ծնվածների (կենդանի) և մինչև 5 տարեկանը մահացած երեխաների թվաքանակը:

⁴³ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Երևան 2012թ. և 2017թ. հրապարակումներ, համապատասխանաբար 91-րդ և 86-րդ էջեր

⁴⁴ Աղբյուրը՝ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, Հազարամյակի զարգացման նպատակներ, առաջընթացի ազգային զեկույց, Երևան 2015թ., էջ 11

Նպատակ 7. Շրջակա միջավայրի պահպանման գծով Հայաստանը կատարել է սահմանված ենթանպատակների մի մասը: Այս ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները լավ արդյունքներ են տվել հետևյալ ոլորտներում՝ հատուկ պահպանվող տարածքների մակերեսի աճ, Սևանա լճի մակարդակի բարձրացում և լճի ջրային պաշարների մաքրության բարելավում, կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում, քաղաքային և գյուղական շրջանների բնակչության ջրամատակարարման բարելավում⁴⁵:

Միաժամանակ հանքարդյունաբերության ոլորտի զարգացումն ուղեկցվում է շրջակա միջավայրի աղտոտմամբ, ինչը բացասաբար է անդրադառնում բնակչության առողջության վրա: Ինչ վերաբերում է բնակարանային պայմանների բարելավմանը, այստեղ մի շարք անելիքներ կան, հատկապես այն դեպքում, երբ, օրինակ, Գյումրիում ընտանիքների մի մասն ապրում է ժամանակավոր կացարաններում:

Նպատակ 8. Հայաստանին չի հաջողվել կատարել իր առջև դրված այն թիրախները, որոնք վերաբերում էին մամուլի ազատությանը, կառավարության արդյունավետության բարձրացմանը, պետական կարգավորման որակին, օրենքի գերակայությանը և կոռուպցիայի վերահսկողությանը: Նշված ուղղություններով գրանցվել է դանդաղ առաջընթաց, չնայած այն ինստիտուցիոնալ և իրավական բարեփոխումներին, որոնք ՀՀ կառավարությունը ձեռնարկել է վերջին տասնամյակում⁴⁶:

Այսպիսով՝ աշխարհում երկու անգամ կրճատվեց ծայրահեղ աղքատության մակարդակը, բարձրացավ տարրական կրթության հասանելիության աստիճանը, կրճատվեցին մանկամահացության և մայրական մահացության դեպքերը, նվազեց վարակիչ հիվանդությունների հետևանքով մահացությունների թիվը և այլն: Միաժամանակ պարզ դարձավ, որ նշված ձեռքբերումներն անհամաչափ բնույթ են կրել ըստ տարածաշրջանների. այն դեպքում, երբ որոշ երկրների հաջողվեց կրճատել սոցիալ-տնտեսական խնդիրները, մյուսներում նկատվեց հակառակ երևույթը: Նպատակների ամբողջական իրագործումը դարձավ անհնար նաև քաղաքական անկայունության և պատերազմների հետևանքով: Հայաստանում նույնպես գրանցվեցին որոշակի հաջողություններ այդ նպատակների իրականացման հարցերում, սակայն դրանք մեծ մասամբ մնացին չիրագործված:

⁴⁵ Աղբյուրը՝ տե՛ս նույն տեղում, էջ 11

⁴⁶ Աղբյուրը՝ տե՛ս նույն տեղում, էջ 12

Ելնելով վերոգրյալից՝ նոր նպատակների ընտրության անհրաժեշտություն առաջացավ, որոնք կլրացնեին նախկինում ընդունվածները և հնարավորություն կտային ամբողջությամբ իրականացնել դրանք: Արդյունքում 2015թ. ընտրվեցին Կայուն զարգացման նպատակները (տե՛ս հավելված 3), որոնք առավել ընդգրկուն են այն իմաստով, որ այստեղ առաջնահերթություն է ոչ թե ծայրահեղ աղքատության, այլ դրա բոլոր դրսևորումների հաղթահարումը: Միաժամանակ նպատակ դարձավ ոչ միայն երեխաների և մայրական առողջության պահպանումը, վարակիչ հիվանդությունների կանխարգելումը, այլև ցանկացած տարիքում գտնվող յուրաքանչյուր անձի համար առողջ ապրելակերպի ապահովումը: Բացի այդ, ոչ միայն տարրական, այլև ընդհանրապես կրթություն ստանալու հնարավորության ստեղծումը դարձավ առաջնահերթություն:

Անհավասարության կրճատումն ընտրվեց որպես առանձին նպատակ, քանի որ դրա բարձր մակարդակն ու կայուն զարգացումն անհամատեղելի երևույթներ են: Ներառական աճը, սոցիալական երաշխիքները, կայուն արտադրության և սպառման ապահովումը, թափանցիկ, արդյունավետ և պատասխանատու կառավարության ձևավորումը դարձան առանցքային հիմնահարցեր: Իհարկե, սրանց իրագործումը բավականին դժվար է, սակայն կարևոր է այն, որ աշխարհում հիմնախնդիրները հստակ սահմանված են, և որոնց հաղթահարման ուղղությամբ քայլեր են ձեռնարկվում:

1.3. ՀՀ տնտեսական զարգացման սոցիալական առաջնահերթությունների ընտրության մեթոդաբանական հիմնավորումը

ՀՀ-ում շատ են սոցիալական խնդիրները. հետևաբար, ելնելով կոնկրետ չափանիշներից՝ հարկավոր է առանձնացնել առաջնահերթ լուծում պահանջողները: Այդպիսին կարող են դիտարկվել նրանք, որոնք.

1. **Հրատապ լուծում են պահանջում:** Իհարկե, սոցիալական խնդիրները հաճախ բավարարում են այս չափանիշին, սակայն կան այնպիսիները (օրինակ՝ գործազրկությունը և աղքատությունը), որոնք ուղղակիորեն խոչընդոտում են մարդու բնականոն կենսագործունեությունը և ազդում անգամ առողջական կարգավիճակի վրա:

Հետևաբար առաջնահերթություն սահմանելը կախված է նրանից, թե կարելի՞ է արդյոք դա հետաձգել, թե՞ ոչ:

2. **Սոցիալապես ընդգրկուն բնույթ ունեն:** Ըստ ՀՀ ԱՎԾ հետազոտությունների՝ 2016թ. բնակչության 18%-ը գործազուրկ է եղել⁴⁷ (ատենախոսության երկրորդ գլխում կհիմնավորվի, որ ցուցանիշն իրականում կազմել է 24.4%), իսկ 29.4%-ը՝ աղքատ⁴⁸: Բարձր է նաև անհավասարության մակարդակը. Ջինիի գործակիցը 2016թ. կազմել է 0.375⁴⁹: Սրա հետևանքով որակյալ կրթության և առողջապահական ծառայությունների հասանելիությունը ցածր աստիճանի վրա է գտնվում, ինչը խոչընդոտում է մարդկային զարգացումը:

3. **Բնակչության կողմից ընդունվել են որպես բարեկեցությանը խոչընդոտող գլխավոր գործոններ:** Սա կարևոր փաստ է. օրինակ՝ Ա. Սենը նշում է, որ հասարակական ընտրությունն անհրաժեշտ է տարաբնույթ սոցիալական խնդիրների բացահայտման և լուծման համար⁵⁰: Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի կողմից իրականացված հարցումների արդյունքում պարզվել է, որ հարցված բնակչության կարծիքով՝ գործազրկությունը, աղքատությունը, առողջապահական ծառայությունների ոչ բավարար մատչելիությունը ՀՀ գլխավոր խնդիրներն են⁵¹: Բացի այդ, համաձայն ՀՀ ԱՎԾ կողմից իրականացված հետազոտության արդյունքների՝ ոչ պարենային առաջնային կարիքների բավարարումը, բնակարանային հիմնահարցը, սննդի ապահովումը, առողջության, երեխաների կրթության հետ կապված հարցերը բնակչության հիմնական խնդիրներն են⁵²:

4. **Այդ խնդիրների լուծումը պետք է բխի սոցիալական արդարության և տնտեսական արդյունավետության սկզբունքներից:** Արդարության պահպանումն առավել ևս կարևոր է այն ընտրության ժամանակ, որը վերաբերում է ողջ երկրին: Տնտեսական զարգացումն առողջ առաջընթաց է, երբ այս կամ այն կերպ վերաբերում է

⁴⁷ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-մարտին, Երևան 2017թ., էջ 102

⁴⁸ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2017թ., էջ 43

⁴⁹ Աղբյուրը՝ տե՛ս նույն տեղում, էջ 64

⁵⁰ Sen A., Lecture to the memory of Alfred Nobel, The Possibility of Social Choice, 1998, available at https://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1998/sen-lecture.html

Sen A., Development as Freedom, Oxford University Press, 2001, See chapter 11

⁵¹ Caucasus Research Resource Center, Caucasus Barometer 2015 Armenia dataset, available at <http://caucasusbarometer.org/en/cb2015am/IMPIS1/>

⁵² Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2017թ., էջ 211

հանրության յուրաքանչյուր անդամին⁵³, հակառակ դեպքում խախտվում է արդարության սկզբունքը: Այս կապակցությամբ տեղին է մեջբերել Ա.Սմիթի այն խոսքերը, որ *ոչ մի հասարակություն անկասկած չի կարող լինել բարգավաճող և երջանիկ, եթե նրա անդամների մեծ մասն աղքատ է և դժբախտ*⁵⁴: Վերոնշյալ հիմնախնդիրների լուծումը վերաբերում է ողջ հասարակությանը, քանի որ դրա արդյունքում ձևավորվում է զարգացող սոցիալ-տնտեսական համակարգ և առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ:

Ինչ վերաբերում է արդյունավետությանը, ապա դա արտահայտվում է նրանով, թե իրավիճակի բարելավումն ինչպես և ինչ չափով է ուղղված տնտեսական զարգացման ընդհանուր նպատակի իրագործմանը՝ մարդկային զարգացմանը: Դրան կարող են նպաստել տարբեր գործոններ, որոնց շարքում առանձնանում է գործազրկության և աղքատության կրճատումը (հատկապես, երբ տարածված են): Մասնավորապես ՀՀ երեխաների 34.2%-ը (կոպիտ հաշվարկով յուրաքանչյուր երրորդ երեխա) ապրում է աղքատության պայմաններում⁵⁵, որի գլխավոր պատճառներից է այն, որ ծնողները գործազրկության կամ ցածր եկամտի հետևանքով չեն կարողանում բավարարել ընտանիքի նվազագույն պահանջները: Սա և մարդկային կայուն զարգացումն անհամատեղելի երևույթներ են:

5. Խնդիրների լուծումը պետք է գտնվի հիմնարար արժեքային համակարգի շրջանակում: Առաջնահերթություն սահմանելիս չի կարելի անտեսել սա, քանի որ քանակապես գնահատելի արդյունքներից բացի կարևոր են նաև ոչ նյութական ձեռքբերումները: Որպես միջազգային փորձի օրինակ կարելի է նշել այն, որ Հազարամյակի զարգացման նպատակները հիմնված էին հետևյալ արժեքների վրա. ազատություն, հավասարություն, համերաշխություն, հանդուրժողականություն, համատեղ պատասխանատվություն: Նպատակները, որոնք չեն համապատասխանում այս և նման արժեքներին, ի վերջո հանգեցնում են խտրականության և անկայունության:

⁵³ Վարդանյան Ա., Տնտեսական զարգացման հայեցակարգային ընկալումները, Բանբեր ՀՊՏՀ-ի, N4, Երևան 2013թ., էջ 13

⁵⁴ Smith A., An Inquiry Into the Nature and Causes of the Wealth Of Nations, R.H. Campbell and A.S. Skinner edition, Liberty Press/Liberty Classics, 1976, book 1, chapter 8, p. 96

⁵⁵ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2017թ., էջ 98

Ելնելով վերոնշյալ չափանիշներից և ընդհանրացնելով միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները՝ որպես ՀՀ տնտեսական զարգացման սոցիալական առաջնահերթություններ առանձնացվել են հետևյալները.

- մարդկային կապիտալի պաշարի ձևավորումը, զարգացումը և պահպանումը,
- անհավասարության բարձր մակարդակի կրճատումը և աղքատության հաղթահարումը,
- աշխատատեղերի ստեղծումը և գործազրկության կրճատումը (ընդհուպ մինչև դրա բնական մակարդակը):

Առաջնահերթությունների իրագործումը կարելի է սահմանել ըստ ժամանակահատվածի. կարճաժամկետում և միջնաժամկետում որպես նպատակ կարելի է դիտարկել գործազրկության, անհավասարության և աղքատության մակարդակների կրճատումը, իսկ երկարաժամկետում՝ լրիվ զբաղվածության ապահովումը և աղքատության հաղթահարումը: Մարդկային կապիտալի պաշարի ձևավորումը, զարգացումը և պահպանումն անընդհատ շարունակվող գործընթացներ են:

Վերոնշյալներն ընդգրկում են տարբեր հարցերի լայն շրջանակ, օրինակ՝ ինչպիսի՞ն է ինստիտուցիոնալ միջավայրը, որքանո՞վ է տնտեսական աճը նպաստում գործազրկության կրճատմանը, ինչպե՞ս են կոռուպցիան, սովերային տնտեսությունը, պետական ֆինանսների արդյունավետության ոչ բարձր մակարդակն ազդում սոցիալական ոլորտի վրա և այլն: Սա պայմանավորված է նրանով, որ այս առաջնահերթությունների իրագործումը պահանջում է փոխկապակցված և համալիր միջոցառումների ամբողջություն, որն էլ հնարավորություն է տալիս ուշադրություն դարձնել նաև այլ խնդիրների:

Այս առաջնահերթությունների հետ կապված հարկավոր է նշել, որ Վրաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի և Ռուսաստանի համեմատությամբ Հայաստանում գործազրկության մակարդակն ամենաբարձրն է: Իհարկե, Հայաստանի և այս երկրների մակրոտնտեսական պայմանները տարբերվում են, և գուցե կան վիճակագրության վարման անհամապատասխանություններ, սակայն ՀՀ-ում գործազրկության մակարդակը դեռևս բարձր է 2008թ. համեմատ (Հայաստանում տնտեսական անկում գրանցվեց 2009թ.): Միաժամանակ ցուցանիշը մյուս երկրներում կա՛մ ավելի ցածր է, կա՛մ գտնվում

է նախաճգնաժամային մակարդակում⁵⁶: Աղքատության մակարդակը (մարդաշնչի հաշվով օրական 1.9 և 3.2 ԱՄՆ դոլարից քիչ եկամուտ ստացողներ) Հայաստանում բարձր է Թուրքիայի, Ռուսաստանի, Ադրբեջանի և ցածր՝ Վրաստանի համեմատությամբ⁵⁷: Անհավասարությունը շարունակում է խորանալ, ինչով և պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել խնդիրը դարձնել ուսումնասիրության առարկա:

Առանձնացված առաջնահերթությունները փոխկապված են և յուրաքանչյուրի իրականացումը նպաստում է մյուսների բարեհաջող իրագործմանը: Այսպես՝

ա) Մարդկային կապիտալի զարգացումը նպաստում է գործազրկության կրճատմանը: Աշխատանքի շուկան ուսումնասիրելիս հաճախ ենք հանդիպում կառուցվածքային գործազրկությանը, երբ աշխատողների գիտելիքները, հմտություններն ու կարողությունները չեն համապատասխանում աշխատատեղերի համար ներկայացվող պահանջներին: Այսինքն՝ խնդիրներ կան ոչ միայն աշխատանքի նկատմամբ պահանջարկի, այլև առաջարկի կողմում: Հետևաբար ներդրումները մարդկային կապիտալում զբաղվածության ապահովման լավագույն միջոցներից են:

Վերոգրյալը կարևոր է նաև անհավասարության և աղքատության կրճատման հարցում, քանի որ կրթությունը և առողջական կարգավիճակը մեծ ազդեցություն ունեն արտադրողականության, հետևաբար նաև եկամտի աճի վրա: Իհարկե, լինում են դեպքեր, երբ, օրինակ, աշխատավարձի աճը համահունչ չէ արտադրողականության շարժընթացին: Նման պարագայում կառուցվածքային բարեփոխումների իրականացման անհրաժեշտություն է առաջանում (սա բավականին բարդ, սակայն զարգացման տեսանկյունից անխուսափելի գործընթաց է): Միաժամանակ առողջ ապրելու հնարավորությունը և կրթված լինելը չի կարելի արժևորել միայն եկամտի աճի վրա ունեցած ազդեցությամբ, քանի որ դրանք կյանքի կարևորագույն տեսանկյուններն են և էական են մարդու համար՝ անկախ այդ հանգամանքից:

⁵⁶ **Международный статистический комитет содружества независимых государств**, Основные показатели социально-демографической статистики (<http://www.cisstat.com/>)

International monetary fund, World Economic Outlook Database, April 2017, available at http://www.imf.org/external/pubs/ft/weo/2017/01/weodata/weorept.aspx?pr.x=88&pr.y=15&sy=2008&ey=2016&scsm=1&ssd=1&sort=country&ds=.&br=1&c=911%2C912%2C922%2C915%2C186&s=NGDP_RPCH%2CLUR&grp=0&a=

⁵⁷ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2017թ., էջ 69
The World Bank, PovcalNet, available at <http://iresearch.worldbank.org/PovcalNet/povOnDemand.aspx>

բ) Անհավասարության բարձր մակարդակի կրճատման և աղքատության հաղթահարման արդյունքում միջոցներ են ստեղծվում մարդկային կապիտալի զարգացման համար: Սա բացատրվում է նրանով, որ որակյալ կրթություն ստանալու և առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորությունը կախված է սոցիալական կարգավիճակից: Այդ կապն ավելի է ուժեղանում, երբ պետության կողմից սոցիալական բնույթի ծախսերը փոքր գումար են կազմում և չեն բավականացնում անհրաժեշտ աջակցության համար:

Տնտեսագիտության մեջ կիրառվում է «աշխատանքի շուկայի բևեռացում» եզրույթը, որը բնութագրում է մի իրավիճակ, երբ միջին վարձատրությամբ աշխատատեղերն աստիճանաբար պակասում են⁵⁸: Սա աշխատանքի շուկայում հնարավորությունների անհավասարության դրսևորումներից է: Նման դեպքում մի կողմից ավելանում են ցածր վարձատրությամբ աշխատատեղերը, որոնց համար մեծ կարողություններ չեն պահանջվում, մյուս կողմից՝ բարձր վարձատրությամբ աշխատատեղերը, որոնց համար համապատասխան որակավորում է անհրաժեշտ: Սրա հետևանքով բնակչության մեծամասնության համար բարդանում է միջին վարձատրությամբ աշխատանք գտնելը: Ուստի անհավասարության կրճատումը և աղքատության հաղթահարումը՝ նպաստելով մարդկային կապիտալի զարգացմանը և աշխատանքի արտադրողականության աճին, հանգեցնում են նաև զբաղվածության ավելացմանը:

գ) Աշխատատեղերի ստեղծումն անհրաժեշտ է անհավասարության բարձր մակարդակի և աղքատության կրճատման համար: Աշխատանքը, սովորաբար, բնակչության մեծամասնության եկամտի գլխավոր աղբյուրն է, հետևաբար դրա նշանակությունը մեծ է տարբեր բնույթի սոցիալական խնդիրների լուծման առումով: Այն կարևոր է նաև մարդկային կապիտալի զարգացման տեսանկյունից: Չբաղվածության արդյունքում եկամտի աճը կարող է նպաստել կրթության նկատմամբ պահանջարկի աճին: Բացի այդ, զբաղվածության ընթացքում աշխատողները ձեռք են բերում հմտություններ և կարողություններ, որոնք մարդկային կապիտալի բաղադրիչներից են: Գործազրկության կրճատման և եկամտի աճի միջոցով մեծանում է նաև որակյալ

⁵⁸ **Autor H. David, Katz F. Lawrence, Kearney S. Melissa**, The polarization Of the Labor Market, American Economic Review 96, no 2 (May 2006), pp. 189-194
Goldin C., Katz F. Lawrence, Long-Run Changes in The Wage Structure: Narrowing, Widening, Polarizing, Brookings Papers on Economic Activity, 2, 2007, pp. 135-164

առողջապահական ծառայությունների հասանելիությունը, փոքրանում են նույնիսկ հանցագործությունների, թմրամոլության և հոգեկան առողջության հետ կապված ռիսկերը:

Ընտրված առաջնահերթություններն ընդգրկված են եղել Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում, որի նպատակներն ամբողջությամբ չիրագործվեցին⁵⁹: Դրանք ներառված են նաև ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում: Ծրագրի չորս գերակայություններն են՝ մարդկային կապիտալի զարգացումը, սոցիալական պաշտպանության համակարգի բարելավումը, զբաղվածության ընդլայնումը և կառավարման համակարգի ինստիտուցիոնալ արդիականացումը⁶⁰: Միաժամանակ այստեղ կան մի շարք խնդիրներ, որոնք մանրամասն ուսումնասիրության կարիք ունեն: Այսպես՝ ծրագրի հիմնական նպատակը բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծման ճանապարհով զբաղվածության ավելացումն է⁶¹: Հարցն այն է, թե ինչպես է դա իրականացվելու, երբ պայմանավորված հատկապես տնտեսության ճյուղային կառուցվածքի, տարածքային անհամաչափ զարգացման և ինստիտուցիոնալ խնդիրներով՝ ՀՀ տնտեսական աճի ազդեցությունը թույլ է զբաղվածության ապահովման, հետևաբար նաև գործազրկության կրճատման գործում (սա կհիմնավորվի ատենախոսության երկրորդ գլխում):

Իհարկե, ծրագրով նախատեսվում է իրականացնել տնտեսության ճյուղային կառուցվածքի բարելավում այն հաշվով, որ ծառայությունների և արդյունաբերության կշիռները ՀՆԱ-ում 2013-2025թթ. կաճեն համապատասխանաբար 1.2 և 3.8 տոկոսային կետով⁶²: Փաստացի տվյալները ցույց են տալիս, որ 2013-2016թթ. ծառայությունների կշիռը ՀՆԱ-ում աճել է 5.6 տոկոսային կետով՝ կազմելով 49.3%, սակայն արդյունաբերության ցուցանիշը դեռևս քիչ է փոխվել՝ 16.2%-ից հասնելով 16.7%-ի⁶³:

Տարածքային անհամաչափ զարգացման վերաբերյալ նույնպես նշված է, սակայն որպես անհամաչափության կրճատման թիրախային ցուցանիշ առանձնացվել է միայն

⁵⁹ Աղբյուրը՝ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Երևան 2003թ., էջ 47-55

⁶⁰ Աղբյուրը՝ ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, հավելված ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի N 442-Ն որոշման, էջ 16

⁶¹ Աղբյուրը՝ տե՛ս նույն տեղում, էջ 17

⁶² Աղբյուրը՝ տե՛ս նույն տեղում, 33-34-րդ էջեր

⁶³ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ տվյալների բազա (<http://armstat.am/am/?nid=202>)

մարզային ՀՆԱ-ն⁶⁴: Սա անհրաժեշտ է, բայց ոչ բավարար, քանի որ տնտեսական զարգացման գնահատման համար կիրառվում են նաև այլ տվյալներ (մասնավորապես գործազրկության և աղքատության մակարդակները):

Ինչ վերաբերում է ինստիտուցիոնալ բարեփոխումներին, կարելի է նշել, որ իրավիճակի բարելավմանը խոչընդոտում է նաև այն, որ արդեն իսկ գոյություն ունեցող մի շարք ֆորմալ ինստիտուտներ⁶⁵ (մասնավորապես ՀՀ աշխատանքային օրենսգիրքը) հաճախ անտեսվում են: Ուստի ինստիտուցիոնալ արդիականացմանը զուգահեռ անհրաժեշտ է ապահովել օրենքի պահանջների կատարումը:

Բացի այդ, մակրոտնտեսական ներկա իրավիճակը ցույց է տալիս, որ սոցիալական ոլորտին վերաբերող մի շարք դրույթների կատարումը ևս խնդրահարույց է: Այսպես՝ նախատեսվում է աղքատության մակարդակը 2017թ. հասցնել շուրջ 24%-ի, 2021թ.՝ 18%-ի, իսկ 2025թ.՝ 13%-ի, ինչպես նաև բարձրացնել նվազագույն զուտ աշխատավարձն այն չափով, որ դրա հարաբերակցությունն աղքատության վերին շեմի նկատմամբ անընդմեջ կաճի՝ 2017թ. կազմելով շուրջ 160%, 2021թ.՝ 190%, իսկ 2025թ.՝ 240%: Ծրագրվում է նաև աշխատանքային կենսաթոշակի միջին մակարդակի անընդմեջ աճ, ինչի արդյունքում այն 2017թ. կկազմի աղքատության վերին շեմի շուրջ 125%-ը, 2021թ.՝ 155%-ը, իսկ 2025թ.՝ 200%-ը⁶⁶:

Հաշվի առնելով 2016թ. գրանցված աղքատության բարձր մակարդակը (29.4%) և արձանագրված 0.2% տնտեսական աճը՝ կարելի է կանխատեսել, որ աղքատության կրճատման հետ կապված նպատակը գրեթե անհնար կլինի իրականացնել մեկ տարվա ընթացքում: Բացի այդ, 2016-2017թթ. նվազագույն աշխատավարձը մնացել է անփոփոխ՝ 55000 դրամ⁶⁷, որը նույնիսկ 2016թ. աղքատության վերին շեմի 134.6% է⁶⁸: Ինչ վերաբերում է աշխատանքային կենսաթոշակի միջին մակարդակին, այն 2016թ. կազմել է 40353 դրամ⁶⁹, ինչը ցածր է աղքատության շեմից:

⁶⁴ Աղբյուրը՝ ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, հավելված ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի N 442-Ն որոշման, էջ 105

⁶⁵ Норт Д., Институты, институциональные изменения и функционирование экономики, Фонд экономической книги, Начала, Москва, 1997г., Глава 6

⁶⁶ Աղբյուրը՝ ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, հավելված ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի N 442-Ն որոշման, 114-115-րդ էջեր

⁶⁷ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան 2017թ., էջ 97

⁶⁸ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2017թ., էջ 40

⁶⁹ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան 2017թ., էջ 95

Հարկավոր է նշել նաև այն, որ ՀՀ կառավարության 2017-2022թթ. ծրագրով նախատեսվում է նպաստել զբաղվածության աճին, 25%-ով բարձրացնել անվանական նվազագույն աշխատավարձը, 12 տոկոսային կետով կրճատել աղքատության մակարդակը⁷⁰: Միաժամանակ գործազրկության կրճատման կամ զբաղվածության աճի թիրախային ցուցանիշներ տրված չեն, իսկ անհավասարության բարձր մակարդակի մասին ընդհանրապես չի խոսվում: Դրանք անհրաժեշտ են, օրինակ, աղքատության կրճատման նպատակի իրատեսությունը գնահատելու համար:

Այսպիսով՝ ՀՀ-ում առկա բազմաթիվ սոցիալական խնդիրներից առանձնացվել են առաջնահերթ լուծում պահանջողները (գործազրկություն, անհավասարություն, աղքատություն, ցածր եկամտի հետևանքով որակյալ կրթության և առողջապահական ծառայությունների ոչ բավարար հասանելիություն):

⁷⁰ Աղբյուրը՝ ՀՀ Կառավարության 2017-2022թթ. ծրագիր, ՀՀ կառավարության 2017թ. հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելված, էջ 8

ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

2.1. Մարդկային կապիտալի զարգացման սոցիալական տեսանկյունները

Ընտրված առաջնահերթությունների իրագործումն ի վերջո ուղղված է մարդկային զարգացմանը: ՀՀ մարդկային զարգացման համաթիվը 2015թ. կազմել է 0.743, որը միջինից բարձր ցուցանիշ է (միաժամանակ այն ցածր է Վրաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի և Ռուսաստանի համեմատությամբ)⁷¹: Մարդկային կապիտալը մարդկային զարգացման դրսևորումներից է, որի վերաբերյալ ակտիվ քննարկումներին սկիզբ դրվեց անցյալ դարի 50-60-ական թվականներին: Սա նպաստեց կապիտալի վերաբերյալ գոյություն ունեցող տեսության ընդլայնմանը, քանի որ դրա ընդունված տեսակներից բացի սկսեցին ուսումնասիրել նաև այս մեկը:

Հեղինակները չէին սահմանափակվում միայն նրանով, որ այն դրական ազդեցություն ունի եկամուտների և տնտեսական աճի վրա: Ըստ Թ. Շուլցի՝ մարդկային կապիտալում կատարված բոլոր ներդրումները չէ, որ միայն եկամուտ ստանալու համար են: Դրանց մի մասն ապագա բարեկեցության այնպիսի ձևերի համար են, որոնք չեն արտահայտվում եկամտում⁷²: Թ. Շուլցը, Գ.Բեքերը, Ն. Թոմսը, Ա. Լեյբովիցը և այլ հեղինակներ, զարգացնելով մարդկային կապիտալի տեսությունը, ուսումնասիրության շրջանակում ընդգրկեցին նաև ընտանիքը⁷³:

Մարդկային կապիտալը մարդու մեջ մարմնացած և կուտակված գիտելիքների, աշխատանքային ընդունակությունների և հմտությունների պաշար է⁷⁴: Այն

⁷¹ UNDP, Human Development Report 2016, Human Development for Everyone, New York, 2016, pp. 198-199

⁷² Schultz T., Reflections on Investment in Man, The journal of political economy, Volume LXX, University of Chicago Press, October 1962, Number 5, Part 2, pp. 7-8

⁷³ Schultz T. (editor), Economics of the Family: Marriage, Children, and Human Capital, University of Chicago Press, 1974
Becker G., Toms N., Human Capital and the Rise and Fall of Families, The University of Chicago Press, 1994, Chapter pages in book: (pp. 257-298), available at <http://www.nber.org/chapters/c11237>

Becker G., A treatise on the Family, Harvard University Press, 1993

Leibowitz A., Home Investments in Children, National Bureau of Economic Research, University of Chicago Press, 1974, Chapter pages in book: (pp. 432-456), available at <http://www.nber.org/chapters/c2974>

⁷⁴ Աղբյուրը՝ Գրիգորյան Ս., Մարդկային կապիտալը կապիտալի տեսությունների համատեքստում, Տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, ՀՊՏՀ 23-րդ գիտաժողովի նյութեր, Երևան 2013թ., հոկտեմբերի 22-25, էջ 93-99

պայմանավորված է նաև առողջական կարգավիճակով: Մարդկային կապիտալի զարգացումը տնտեսականից բացի ունի նաև սոցիալական տեսանկյուններ. այն կապված է առողջության, կրթության, զբաղվածության, միգրացիայի և այլ հարցերի հետ: Դրա պաշարի ավելացումը նպաստում է սոցիալական զարգացմանը: Այսպես՝ Ջ. Ստիգլիցի, Բ.Գրինվալդի կարծիքով գիտելիքը նաև հասարակական բարիք է, որովհետև օժտված է դրանց բնորոշ երկու հատկությամբ՝ ոչ մրցակցային է և անբացառելի: Գիտելիքի մի մասը գլոբալ հասարակական բարիք է, որովհետև դրա օգտակարությունը դուրս է գալիս ազգային տնտեսության սահմաններից⁷⁵:

Մարդկային կապիտալի զարգացման սոցիալական տեսանկյուններն արտահայտվում են դրա հետևյալ ձևերում.

Առողջական կապիտալ: Առողջական կապիտալի սկզբնական պաշարի մի մասը փոխանցվում է ժառանգաբար, մյուսը ձեռք է բերվում կյանքի ընթացքում (օրինակ պատվաստումներից և այլ առողջապահական ծառայություններից օգտվելու միջոցով): Առողջական կապիտալը բնութագրող ցուցանիշներից են ծննդյան պահին կյանքի սպասվող տևողությունը, մահացության մակարդակը, դրա պատճառները և այլն:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության համաձայն՝ կյանքի սպասվող տևողությունը ծննդյան պահից ամբողջ բնակչության համար 2016թ. կազմել է 75.0 տարի⁷⁶, իսկ մահացությունը՝ 9.4%⁷⁷: Մինչև 4 տարեկան երեխաների մահվան 411 դեպք է արձանագրվել, որից մինչև 1 տարեկան երեխաների մահացության դեպքերը կազմել են 86.6%⁷⁸: Սա կապված է նաև կենցաղային վատ պայմանների և բնապահպանական խնդիրների հետ: Հետազոտությունները վկայում են, որ, օրինակ, շրջակա միջավայրի աղտոտվածությունը նորածինների նվազ քաշի պատճառներից է (նորածինների քաշը ծննդյան պահին առողջական վիճակի հիմնական բնութագրիչներից է)⁷⁹:

⁷⁵ **Stiglitz J.** Knowledge As a Global Public Good, Global Public Goods, International cooperation in the 21th century, UNDP, Published for The United Nations Development Programme, 1999, pp. 308-325

Sitglitz J.,Greenwald B., Creating A Learning Society, A New Approach To Growth, Development, and Social Progress, Columbia University Press, New York, 2014, pp. 135-137

⁷⁶ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-հունիսին, Երևան 2017թ., էջ 125

⁷⁷ Աղբյուրը՝ տե՛ս նույն տեղում, էջ 140

⁷⁸ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին, Երևան 2017թ., էջ 134

⁷⁹ **Currie J.**, Inequality At Birth: Some Causes and Consequences, Working Paper 16798, 2011, pp 19-32, available at <http://www.nber.org/papers/w16798>

Առողջական կապիտալին անդրադառնալիս պետք է նշել, որ որակյալ առողջապահական ծառայությունների ոչ բավարար մատչելիությունը ՀՀ գլխավոր խնդիրներից է: Սա հիմնավորվում է նրանով, որ եթե 2016թ. հիվանդության դեպքում ոչ աղքատների 42.3%-ն է դիմել բժշկական խորհրդատվության կամ բուժման, ապա աղքատների (առանց ծայրահեղ աղքատների)՝ 27.3%-ը և ծայրահեղ աղքատների՝ 17.4%-ը⁸⁰: Այս կապակցությամբ հարկավոր է նշել, որ նվազագույն աշխատավարձը, նպաստները և կենսաթոշակները միջինում փոքր գումար են կազմում և չեն կարող բավարարել մարդու հիմնական, այդ թվում նաև առողջության հետ կապված պահանջները (այս մասին առավել մանրամասն կխոսվի երրորդ գլխում):

Առողջության ապահովագրությունը կարող է խնդրի լուծում դառնալ, սակայն գործազրկության և աղքատության բարձր մակարդակի պայմաններում դրա իրականացումը ևս խնդրահարույց է: Նման պարագայում պետության կողմից ֆինանսական օժանդակության անհրաժեշտություն է առաջանում, որը կբարձրացնի ապահովագրության մատչելիությունը:

Առողջական կապիտալի զարգացման տեսանկյունից կարևոր է առողջապահության ոլորտում կատարվող ծախսային բեռի բաշխումը: Գծապատկեր 2.1.1.-ից երևում է, որ ՀՀ-ում պետական հատվածի կշիռը 1996-2004թթ. միջինում գտնվել է 26.0% շրջանակում: Այնուհետև՝ մինչև 2007թ., աստիճանաբար աճել է պետության և փոքրացել մասնավոր հատվածի բաժինը: Հետագայում նկատվել է հակառակ երևույթը: Պետական ծախսերի կշիռը 2016թ. կազմել է շուրջ 35%: Համեմատության համար նշենք, որ սոցիալական կողմնորոշում ունեցող երկրներում (Դանիա, Նորվեգիա, Շվեդիա) ցուցանիշը կազմում է շուրջ 85%⁸¹: Հետևաբար անհրաժեշտ է ավելացնել պետության աջակցությունը, քանի որ հետազոտությունները վկայում են, որ առողջապահության ոլորտի ֆինանսավորումից ստացվող օգուտները գերազանցում են սկզբնական ծախսերը⁸²:

⁸⁰ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2017թ., էջ 157


⁸¹ Աղբյուրը՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների բազա՝

<http://apps.who.int/gho/data/view.main.HEALTHEXPRATIODNK?lang=en>

<http://apps.who.int/gho/data/view.main.HEALTHEXPRATIONOR?lang=en>


<http://apps.who.int/gho/data/view.main.HEALTHEXPRATIOSWE?lang=en>

⁸² **Arrow K., Sanghi A.**, Why Economists Put Health First, 2015, available at <https://www.project-syndicate.org/commentary/developing-countries-universal-health-systems-by-kenneth-j--arrow-and-apurva-sanghi-2015-12>
Sachs J., The Age of Sustainable Development, Columbia University Press, New York, 2015, See chapter 9
Sachs J., Financing Health and Education for All, 2016, available at <https://www.project-syndicate.org/commentary/financing-universal-health-education-by-jeffrey-d-sachs-2016-05>



Գծապատկեր 2.1.1. ՀՀ առողջապահության ոլորտում պետական և մասնավոր հատվածների կողմից կատարվող ծախսերի հարաբերակցությունը, 1996-2016թթ. (%)⁸³

ՀՀ պետական բյուջեից առողջապահության ոլորտում կատարված ծախսերն աճի միտում են ունեցել 1996-2016թթ., սակայն 1998-2002թթ., ինչպես նաև 2009-2013թթ. նկատվել է ՀՆԱ-ում դրանց կշռի նվազում (տե՛ս գծապատկեր 2.1.2.): Այս առումով հարկավոր է բարձրացնել դրամական հատկացումների աճի տեմպը: Կարևոր է նաև պետական ծախսերի արդյունավետության բարձրացումը, քանի որ այն միջոցները, որոնք անարդյունավետ են օգտագործվում, կարող են ուղղվել գերակա ոլորտների ֆինանսավորմանը:



Գծապատկեր 2.1.2. ՀՀ պետական բյուջեից առողջապահության ոլորտին ուղղված ծախսերը և դրանց կշիռը ՀՆԱ-ում, 1996-2016թթ.⁸⁴

⁸³ Աղբյուրը՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների բազա (<http://apps.who.int/gho/data/view.main.HEALTHEXPRATIOARM>) 2015-2016թթ. տվյալները ստացել ենք ՀՀ առողջապահության ազգային ինստիտուտից:

Կրթական կապիտալ: Կրթական կապիտալը ձևավորվում է վաղ տարիքում, և այս հարցում էական են ընտանիքի կողմից կատարված ներդրումները: Երեխաները տարբերվում են իրենց կարողություններով արդեն իսկ դպրոց հաճախելու սկզբնական փուլում: Այս տարբերությունները պայմանավորված են ոչ միայն ժառանգական հատկանիշներով, այլև վաղ հասակում կուտակված մարդկային կապիտալի պաշարով: Վերջինը կախված է ծնողների, ուսուցիչների կողմից ներդրված ժամանակի և այլ ռեսուրսների որակից ու քանակից⁸⁵:


Կրթական կապիտալի հետագա ձևավորումն ու զարգացումն անցնում է նախադպրոցական, դպրոցական, նախնական ու միջին մասնագիտական, բարձրագույն կրթության հաջորդական փուլերով: Սոցիալ-տնտեսական վատ պայմանները ՀՀ-ում դպրոց չհաճախող երեխաների առկայության պատճառներից են⁸⁶: Խնդիրներ կան նաև բարձրագույն կրթության հասանելիության հետ կապված, քանի որ ցածր է բնակչության վճարունակությունը: ՀՀ պետական բյուջեից կրթության և գիտության ոլորտում կատարված ծախսերն աստիճանաբար աճել են 1996-2009թթ.: Դրանց կշիռը ՀՆԱ-ում նվազել է 2000-2002թթ., այնուհետև վերընթաց բնույթ է ունեցել մինչև ճգնաժամը: Ոլորտին ուղղված ծախսերը կայուն չեն եղել, և դրանց կշիռը ՀՆԱ-ում կրճատվել է 2009-2013թթ.: Ֆինանսավորումը նորից աճել է 2014-2015թթ., որից հետո գտնվել է նույն մակարդակում (տե՛ս գծապատկեր 2.1.3.):

Կրթական կապիտալի զարգացման համար կարևոր է նաև կրթության որակի բարձրացումը: Արտասահմանյան լավագույն մասնագետների հողվածների ու գրքերի գնման և թարգմանության նպատակով անհրաժեշտ է պետական բյուջեից օժանդակել համալսարաններին: Որակի բարելավման համար հարկավոր է նաև խստացնել համակարգի նկատմամբ վերահսկողությունը, ուժեղացնել կրթական հաստատությունների և աշխատանքի շուկայի միջև կապը:

⁸⁴ Աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջեի հաշվետվություններ (http://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/) և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների բազա (<http://armstat.am/am/?nid=202>): Ազգային հաշիվների համակարգ 2003 ստանդարտի 2015-2016թթ. և Ազգային հաշիվների համակարգ 2008 ստանդարտի 2007-2011թթ. ՀՆԱ-ն հաշվարկվել է մեր կողմից, քանի որ ՀՀ ԱՎԾ-ն այն չի հրապարակել:

⁸⁵ **Leibowitz A.**, Home Investments in Children, National Bureau of Economic Research, University of Chicago Press, 1974, Chapter pages in book: (pp. 432-456), available at <http://www.nber.org/chapters/c2974>

⁸⁶ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2016 թվականին, Երևան 2017թ., էջ 49



Գծապատկեր 2.1.3. ՀՀ պետական բյուջեից կրթության և գիտության ոլորտին ուղղված ծախսերը և դրանց կշիռը ՀՆԱ-ում, 1996-2016թթ. ⁸⁷

Աշխատանքային փորձ, կարողություններ, հմտություններ: Մարդկային կարողությունների, հմտությունների մի մասը ձևավորվում է աշխատանքային փորձի արդյունքում, ինչը բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը: Մասնավորապես Կ. Էրոուն առաջադրեց այն տեսակետը, համաձայն որի աշխատանքային փորձի միջոցով սովորելը (learning by doing) նպաստում է կարողությունների զարգացմանը և արտադրողականության աճին⁸⁸: Սրան զուգահեռ մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ տեխնոլոգիական փոփոխությունների հետևանքով մեքենան հաճախ փոխարինում է մարդուն, ինչը հանգեցնում է գործազրկության աճին⁸⁹: Այս տեսանկյունից նորարարության և մարդկային զարգացման փոխազդեցության միջև առաջանում են խնդրահարույց կողմեր:

⁸⁷ Աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջեի հաշվետվություններ (http://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/) և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների բազա (<http://armstat.am/am/?nid=202>): Ազգային հաշիվների համակարգ 2003 ստանդարտի 2015-2016թթ. և Ազգային հաշիվների համակարգ 2008 ստանդարտի 1996-2011թթ. ՀՆԱ-ն հաշվարկվել է մեր կողմից, քանի որ ՀՀ ԱՎԾ-ն այն չի հրապարակել:

⁸⁸ Arrow K., The Economic Implications of Learning by Doing, The Review of Economic Studies, Oxford University Press, Vol. 29, No. 3 (Jun., 1962), pp. 155-173

⁸⁹ Stiglitz J., The Price of Inequality, Allen Lane, an imprint of Penguin Books, London, 2012, See particularly 54th, 63th and 80th pages

Իրավիճակի հաղթահարման տեսանկյունից կարևոր են ուժեղ արհմիությունների գոյությունը և աշխատողների մասնագիտական կարողությունների բարձրացումը⁹⁰: Բացի այդ պետությունը կարող է հարկաբյուջետային լծակների միջոցով խրախուսել հետազոտություններն ու նորարարությունները, որոնք ստեղծում են նոր աշխատատեղեր և նպաստում են կյանքի որակի բարձրացմանը: Նման ոլորտ է, օրինակ, վիրահատությունների համար կիրառվող համակարգչային տեխնիկայի մշակումը և արտադրությունը: Վիրահատության ընթացքում բժիշկների ներկայությունն անհրաժեշտություն է, հետևաբար համեմատաբար փոքր է նրանց շրջանում գործազրկության առաջացման ռիսկը:

Միգրացիան ազդում է մարդկային կապիտալի պաշարի վրա: Այն ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Այսպես՝ երբ երկրից հեռանում են անվերադարձ, միգրացիան կրճատում է մարդկային կապիտալի պաշարը: Դրա բացասական ազդեցությունը մեծանում է, երբ անվերադարձ են մեկնում որակավորում ունեցող մասնագետները: Ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների՝ 2010-2016թթ. Հայաստանից միջինում հեռացել է շուրջ 24600 մարդ⁹¹: ՀՀ-ում խնդրահարույց է նաև ներքին միգրացիան: Սա բացատրվում է նրանով, որ որակավորում ունեցող մասնագետների զգալի մասը կենտրոնանում է հիմնականում մայրաքաղաքում⁹²: Դրա պատճառներից է այն, որ հեռանկարային և համեմատաբար բարձր վարձատրությամբ աշխատատեղերի զգալի մասը գտնվում է Երևանում:

Ներգաղթը նպաստում է երկրի զարգացմանը հատկապես այն դեպքում, երբ դրա կառուցվածքում մեծ է կրթված բնակչության մասնաբաժինը: Հետազոտությունները վկայում են, որ ընդունող երկրի համար (հեղինակներն ուսումնասիրել են Գերմանիայի և Նիդեռլանդների փորձը) միգրացիան ունի դրական դերակատարում, օրինակ՝ այն իմաստով, որ աշխատողների միջև առկա մշակութային տարբերությունները նպաստում են ընկերությունների նորարարական կարողությունների բարձրացմանը⁹³:

⁹⁰ Աղբյուրը՝ տե՛ս նույն տեղում, 54-րդ, 63-րդ և 80-րդ էջեր

⁹¹ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Երևան 2017թ., էջ 39

⁹² Աղբյուրը՝ **Հովհաննիսյան Ա.**, Մարդկային կապիտալի օգտագործումը ՀՀ-ում, Տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, ՀՊՏՀ 23-րդ գիտաժողովի նյութեր, Երևան 2013թ., հոկտեմբերի 22-25, էջ 143

⁹³ **Ozgen C., Peters, C., Niebuhr A, Nijkamp P., Poot J.**, Does Cultural Diversity of Migrant Employees Affect Innovation? NORFACE MIGRATION Discussion Paper No. 2014-09, pp. 408-411

Մարդկային կապիտալի մասին խոսելիս տեղին է անդրադառնալ նաև սոցիալական կապիտալին, որը պայմանավորված է համանման արժեքային համակարգով, հասարակական միասնությամբ, վստահության մթնոլորտով և այլն: Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի կողմից իրականացված հետազոտությունը վկայում է, որ հարցվածների միայն 5%-ն է կարծում, որ շատերին կարելի է վստահել⁹⁴: Միաժամանակ հարկավոր է նշել, որ գյուղերի բնակիչները, պայմանավորված վարկ վերցնելու անհրաժեշտությամբ, հաճախ երաշխավորում են միմյանց գյուղատնտեսական նշանակության վարկերը, որը կարող է վկայել սոցիալական կապիտալի որոշակի մակարդակի առկայության մասին:

Հասարակության զգալի մասը քիչ է վստահում պետական մարմիններին, ինչի մասին վկայում է նաև այն, որ 2015թ. դեկտեմբերի 6-ի ՀՀ սահմանադրության փոփոխությունների հանրաքվեին և 2017թ. ապրիլի 2-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցության աստիճանը կազմել է համապատասխանաբար 50.7%⁹⁵ և 60.9%⁹⁶:

Այսպիսով մարդկային կապիտալը բազմաբովանդակ հասկացություն է և տնտեսականից բացի ունի նաև սոցիալական տեսանկյուններ: Այն վերաբերում է առողջական կարգավիճակին, կրթություն ստանալու հնարավորությանը, զբաղվածությանը, միգրացիային և այլն: Հայաստանում մարդկային կապիտալի զարգացմանը խոչընդոտում են աղքատությունը, գործազրկությունը, պետական աջակցության ոչ բավարար մակարդակը և այլն:

Niebuhr A., Migration and innovation: Does cultural diversity matter for regional R&D activity? Papers in Regional Science, Volume 89, Issue 3, 2010, pp. 563–585

⁹⁴ **Sirobian S.**, Caucasus Research Resource Center, Homogeneity, Social Capital and Political Participation in Armenia, Analysis of the Caucasus Barometer and World Value Survey data, 2016, available at <http://crrcam.blogspot.am/2016/10/homogeneity-social-capital-and.html>

⁹⁵ Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, ՀՀ սահմանադրության փոփոխությունների 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի արդյունքներն ամփոփելու վերաբերյալ N 99-Ա որոշում, Երևան 12.12.2015թ.

⁹⁶ Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների քվեարկության արդյունքների արձանագրություն, Երևան 09.04.2017թ.

2.2. Անհավասարության կրճատման և աղքատության հաղթահարման հիմնահարցը

Անհավասարության բարձր մակարդակը և՛ կարճաժամկետում, և՛ երկարաժամկետում խաթարում է մարդկային կայուն զարգացման հեռանկարներն ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում: Այն թույլ չի տալիս մարդկանց լիարժեք իրացնել իրենց կարողությունները: Զարգացումը կարելի է դիտարկել նաև որպես անհավասարության բարձր մակարդակի կրճատման գործընթաց (Ա. Սենն իր՝ «Զարգացումը որպես ազատություն» գրքում այն ներկայացրել է որպես անազատությունների հաղթահարման գործընթաց⁹⁷): Ծայրահեղ անհավասարությունն աղքատության մակարդակի խորացման, աշխատանքի արտադրողականության և տնտեսական արդյունավետության անկման, ՀՆԱ կրճատման գլխավոր պատճառներից է:

Աճող անհավասարության հետևանքով վերանայվեց Ս.Կուզնեցի կողմից 1953թ. առաջադրված այն տեսակետը, ըստ որի՝ անհավասարության մակարդակն աճում է արդյունաբերականացման սկզբնական փուլում և նվազում հետագա տարիներին⁹⁸: Թ. Պիկետտին իր՝ «Կապիտալը քսանմեկերորդ դարում» գրքում անդրադառնալով Կուզնեցի հետազոտությանը, հիմնավորեց, որ անհավասարության մակարդակը երկարաժամկետում խորացման միտում է ցուցաբերել⁹⁹:

Գոյություն ունեն անհավասարության տարբեր դրսևորումներ, որոնք փոխկապված են, օրինակ՝ անհավասարությունն առողջական կարգավիճակում եկամտի անհավասարության և՛ պատճառն է, և՛ հետևանքը: Անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության հետևանքով անհավասարությունը որակյալ կրթություն ստանալու հարցում եկամտի և հնարավորությունների անհավասարության պատճառներից է: Այն, որ անհավասարության տարբեր դրսևորումները փոխկապված են, ենթադրում է, որ դրանցից միայն մեկի կարևորումը կարող է աղճատել

⁹⁷ Sen A., Development as freedom, Oxford university press, 2001, See particularly Chapter 2

⁹⁸ Kuznets S., Economic Growth and Income Inequality, American Economic Review 45, No. 1, 1955, pp. 1-28

Kuznets S., Jenks E., Shares of Upper Income Groups in Income and Savings, Cambridge, MA: National Bureau of Economic Research, 1953

⁹⁹ Piketty T., Capital In the Twenty-First Century, The Belknap Press of Harvard University Press, 2014, pp. 11-27

անհավասարության իրական պատկերը և սխալ ուղենիշ դառնալ մակրոտնտեսական քաղաքականության մշակման ժամանակ¹⁰⁰: Հետևելով Ա. Սենի այն մտքին, որ եկամտի անհավասարաչափ բաշխումը, որի վրա հաճախ կենտրոնանում են անհավասարությանը նվիրված հետազոտությունները, արտացոլում է դրա ոչ համարժեք և թերի պատկերը¹⁰¹, այստեղ առավել լայն կտրվածքով ուշադրություն կդարձնենք տնտեսական անհավասարությանը:

Տնտեսագիտական գրականության մեջ հիմնականում առանձնացվում են անհավասարության հետևյալ տեսակները՝

- ✓ եկամտի անհավասարաչափ բաշխում,
- ✓ սպառման անհավասարություն,
- ✓ հարստության անհավասարություն,
- ✓ հնարավորությունների անհավասարություն (սա անհավասարության առավել խորքային տեսակներից է, որովհետև խոչընդոտում է մարդկային կարողությունների զարգացումը և իրացումը),

ա) կրթական հնարավորությունների անհավասարություն,

բ) առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորության անհավասարություն¹⁰²:

Տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում անհավասարությունը խորանում է: Եկամտային անհավասարությունը գնահատելու համար առավել հաճախ կիրառվող ցուցանիշներից է Ջինիի գործակիցը: Այն աճել է 2008-2016թթ.՝ 0.339-ից հասնելով 0.375-ի¹⁰³: Կիրառվում է նաև Պալմայի գործակիցը, որը հավասար է բնակչության վերին 10%-ի և ստորին 40%-ի համախառն ազգային եկամտի բաժինների հարաբերությանը:

¹⁰⁰ **Doyle M., Stiglitz J.**, Eliminating Extreme Inequality: A Sustainable Development Goal, 2015-2030, 2014, available at <http://www.ethicsandinternationalaffairs.org/2014/eliminating-extreme-inequality-a-sustainable-development-goal-2015-2030/>

¹⁰¹ **Sen A.**, From Income Inequality to Economic Inequality. Southern Economic Journal, 1997, 64(2), pp. 384-401

¹⁰² **Piketty T.**, Capital In the Twenty-First Century, The Belknap Press of Harvard University Press, 2014, See particularly Part 3

Sen A., Development as Freedom, Oxford University Press, 2001, pp. 92-94

Stiglitz J., The Price of Inequality, Allen Lane, an imprint of Penguin Books, London, 2012, pp.17-20

Stiglitz J., The Great Divide, Unequal Societies and What We Can Do About Them, W. W. Norton & Company, 2015, pp. 159-164


Stiglitz J., New Theoretical Perspectives On The Distribution Of Income and Wealth Among Individuals, IV Parts, NBER, Cambridge, MA 02138, 2015

Kanbur R., Stiglitz J., Dynastic Inequality, Mobility and Equality of Opportunity, Discussion Paper No. 10542, Centre for Economic Policy Research, London, 2015

¹⁰³ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2017թ., էջ 64

Այս եղանակով հաշվարկելիս ստացվում է, որ ՀՀ բնակչության վերին 10%-ի բաժինը դրամական եկամուտներում 2016թ. մեկ շնչի հաշվով շուրջ երկու անգամ գերազանցել է ստորին 40%-ի բաժինը¹⁰⁴:

Անհավասարությունը գնահատելու համար կարևորվում են նաև բնակչության եկամուտներն ըստ դեցիլային և քվինտիլային խմբերի: Եկամուտների և ծախսերի հաշվարկի հարցում ՀՀ ԱՎԾ կողմից 2004թ. կատարվել են մեթոդաբանական փոփոխություններ¹⁰⁵, հետևաբար 2.2.1.-2.2.3.-րդ և 2.2.6.-րդ գծապատկերներում ներկայացված են 2005-2016թթ. տվյալները: Այսպես՝ գծապատկեր 2.2.1.-ից երևում է, որ եկամտային անհավասարությունը փոքր-ինչ նվազել է նախաճգնաժամային շրջանում: Անհավասարությունն աստիճանաբար խորացել է 2011-2016թթ., ամենահարուստ 10%-ի բաժինը դրամական եկամուտներում միջինում շուրջ 16 անգամ գերազանցել է ամենաաղքատ 10%-ի բաժինը: Ամենահարուստ 10%-ի բաժինը նվազել է 2016թ., սակայն կրճատվել է նաև ստորին 50%-ի բաժինը:




Գծապատկեր 2.2.1. Մեկ շնչի հաշվով դրամական եկամուտների բաշխումն ըստ դեցիլային խմբերի, 2005-2016թթ. (%)¹⁰⁶

¹⁰⁴ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան 2017թ., էջ 105

¹⁰⁵ Արդիականացվել է հետազոտության ընտրանքի շրջանակը՝ օգտագործելով 2001թ. մարդահամարի տեղեկատվական բազան, ընդլայնվել է ընտրանքի չափը և վերանայվել է տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաշարը:

¹⁰⁶ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր, Երևան 2009թ., 2012թ. և 2017թ. հրապարակումներ, համապատասխանաբար 93-րդ, 106-րդ և 105-րդ էջեր


Բնակչության քվինտիլային խմբերում եկամուտների բաշխումն ուսումնասիրելիս (տե՛ս գծապատկեր 2.2.2.) երևում է, որ անհավասարությունը նվազման միտում է ցուցաբերել մինչև 2009թ.: Աղքատ և միջին խավերի դրամական եկամտի բաժինը ոչ միայն էապես չի աճել, այլև կրճատվել է 2011-2016թթ.: Բնակչության ամենահարուստ 20%-ի բաժինը դրամական եկամուտներում 2016թ. կազմել է 46%՝ 2008թ. նկատմամբ աճելով 8.0 տոկոսային կետով: Հետևաբար ամենահարուստ քվինտիլային խումբը տնօրինել է եկամուտների գրեթե կեսը:



Գծապատկեր 2.2.2. Բնակչության եկամուտների բաշխումն ըստ քվինտիլային խմբերի, 2005-2016թթ. (%)¹⁰⁷

Քանի որ սպառումը կախված է եկամտից, ուստի եկամտի անհավասար բաշխումը հանգեցնում է սպառման անհավասարության: Հայաստանում եկամտային և սպառման անհավասարության միտումները հիմնականում համընկնում են (տե՛ս գծապատկերներ 2.2.1. և 2.2.3.): Սպառման անհավասարությունը նվազել է նախաճգնաժամային շրջանում: Հետագայում նկատվել է հակառակ երևույթը: Այս կապակցությամբ հարկավոր է նշել, որ առաջնահերթություն է հատկապես աղքատ բնակչության սպառման մակարդակի բարձրացումը, քանի որ նվազագույն սպառողական զամբյուղի անհասանելիությունն աղքատության բնութագրիչներից է:

¹⁰⁷ Աղբյուրը՝ տե՛ս նույն տեղում, համապատասխանաբար 91-րդ, 104-րդ և 103-րդ էջեր



Գծապատկեր 2.2.3. Մեկ շնչի հաշվով սպառողական ծախսերի բաշխումն ըստ դեցիլային խմբերի, 2005-2016թթ. (%)¹⁰⁸

Կարևոր է ոչ միայն եկամտային, այլև հարստության անհավասարության ուսումնասիրությունը, որի կրճատման նպատակով տարբեր հետազոտողներ առաջարկում են հարկել այն (մասնավորապես գույքը) պրոգրեսիվ հարկատեսակներով¹⁰⁹: Գույքահարկի վերաբերյալ տվյալները հասանելի են հետազոտության համար, հետևաբար ՀՀ իրավիճակը նկարագրելու նպատակով համեմատել ենք ՀՀ համախմբված բյուջեում գույքահարկի, եկամտահարկի և եկամտային հարկի շարժընթացը:

Քանի որ 2013թ. հունվարի 1-ից գործում է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը¹¹⁰, որով սահմանված դրույքաչափը տարբերվում է նախկինից, եկամտային հարկի համադրելի վիճակագրական շարք ստանալու նպատակով հավաքագրված եկամտահարկին գումարել ենք պարտադիր սոցիալական ապահովության վճարները: Ինչպես երևում է գծապատկեր 2.2.4.-ից, եկամտային հարկի կշիռը հարկային


¹⁰⁸ Աղբյուրը՝ տե՛ս նույն տեղում, համապատասխանաբար 93-րդ, 106-րդ և 105-րդ էջեր

¹⁰⁹ Stiglitz J., The Price of Inequality, Allen Lane, an imprint of Penguin Books, London, 2012, p. 167

Atkinson A., Inequality: What Can be Done? Harvard University Press, 2015, pp. 179-205

¹¹⁰ Աղբյուրը՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 22.12.2010թ., ուժի մեջ է մտել 01.01.2013թ.


Եկամուտներում ոչ միայն գերազանցում է գույքահարկի կշիռն (վերջինը տարիների ընթացքում կայուն բնույթ է ունեցել), այլև շարունակում է աճել:



Գծապատկեր 2.2.4. Գույքահարկի և եկամտային հարկի կշիռների շարժընթացը ՀՀ համախմբված բյուջեի հարկային եկամուտներում, 2001-2016թթ. %¹¹¹

Համեմատել ենք նաև նշված հարկատեսակների կուտակային աճերի շարժընթացը: Որպես բազային տարի ենք ընտրել 2001թ., որովհետև 1995-2000թթ. ներառելու դեպքում ստացվում էր, որ գույքահարկի կուտակային աճը շատ ավելի մեծ է: Կարծում ենք, որ սա ճիշտ չի ներկայացնում իրականությունը, քանի որ նշվածը պայմանավորված էր գույքի մասնավորեցման գործընթացով: Հայաստանում եկամտային հարկի հավաքագրումը հետճգնաժամային տարիներին աճել է առաջանցիկ տեմպերով (տե՛ս գծապատկեր 2.2.5.):

¹¹¹ Պայմանավորված ՀՀ պետական բյուջեի ցուցանիշների դասակարգման փոփոխությամբ (2008թ.)՝ անհրաժեշտ հաշվարկների միջոցով ապահովվել է վիճակագրական շարքերի համադրելիությունը: Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-մայիսին, Երևան 2017թ., էջ 82
 ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան 2001թ., 2002թ., 2003թ., 2008թ., 2013թ. և 2016թ. հրապարակումներ, համապատասխանաբար 303-րդ աղյուսակ (2001թ.), 416-րդ, 388-րդ և 399-րդ, 354-րդ և 365-րդ, 383-րդ, 379-րդ էջեր



Գծապատկեր 2.2.5. Գույքահարկի և եկամտային հարկի կուտակային աճի տեմպերի շարժընթացը, 2001-2016թթ. (%)¹¹²

Եկամտային հարկի աճը 2013-2016թթ. պայմանավորված էր անվանական աշխատավարձի բարձրացմամբ (ֆորմալ հատվածում զբաղվածների թիվը կրճատվել է¹¹³): Սա այն դեպքում, երբ գույքի կադաստրային արժեքի (դրա հիման վրա իրականացվում է հարկումը) վերագնահատումը տեղի է ունեցել մեծ ընդհատումներով: Մասնավորապես քարե շինությունների (բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների) 1 քառ. մետրի կադաստրային բազային արժեքը սահմանվել է 2003թ. և կազմում է 255000 դրամ¹¹⁴: Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ Երևան քաղաքի օրինակ, Կենտրոն վարչական շրջանում բազմաբնակարան շենքերի բնակարանների 1 քառ. մետր մակերեսի շուկայական միջին գինը 2017թ. հոկտեմբերին կազմել է 455800 դրամ¹¹⁵ (բնակարանների վաճառքով զբաղվող ընկերությունները միջինում ավելի բարձր գին են

¹¹² Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-մայիսին, Երևան 2017թ., էջ 82

ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան 2001թ., 2002թ., 2003թ., 2008թ., 2013թ. և 2016թ. հրապարակումներ, համապատասխանաբար 303-րդ աղյուսակ (2001թ.), 416-րդ, 388-րդ և 399-րդ, 354-րդ և 365-րդ, 383-րդ, 379-րդ էջեր

¹¹³ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ տվյալների բազա (<http://www.armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=2e1fa144-b206-46a5-a60c-2b1e8954a2e3>)

¹¹⁴ Աղբյուրը՝ Շենքերի, շինությունների գնահատման կարգեր, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի հավելված, Երևան 2002թ., ընդունվել է 26.12.2002թ., ուժի մեջ է մտել 01.01.2003թ.

¹¹⁵ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-հոկտեմբերին, Երևան 2017թ., էջ 137

սահմանում): Հետևաբար գույքի կադաստրային արժեքի և շուկայական գնի միջև առկա խզվածքը մեծ է: Սա վկայում է այն մասին, որ անհրաժեշտ է վերանայել հարկային քաղաքականությունը՝ ավելացնելով հարստության հարկման բաժինը:

Կան անհավասարության բազմաթիվ պատճառներ, որոնք ընդհանուր առմամբ լինում են քաղաքական, տնտեսական և սոցիալական: Նշենք դրանցից մի քանիսը:

1. **Քաղաքական ռենտայի առկայությունը**, որը ստացողները հարստանում են ոչ թե «տնտեսական կարկանդակի» ծավալի ավելացման, այլ դրա վերաբաշխման միջոցով: Սա տեղի է ունենում անկախ նրանց կողմից ներդրված ջանքերից, ինչի պատճառով կրճատվում է ՀՆԱ-ն: Այս և նման երևույթների գոյության հետևանքով քննադատության ենթարկվեց սահմանային արտադրողականության տեսությունը, ըստ որի՝ եկամուտները համապատասխանում են սահմանային արդյունքին¹¹⁶:

Քաղաքական ռենտայի ստացման բազմաթիվ ձևեր կան, որոնք տարբեր դրսևորումներով ի հայտ են գալիս նաև ՀՀ-ում: Դրանցից են՝

✓ մասնավոր ընկերությունների կողմից շուկայականից ցածր գնով ռեսուրսների (ինչպես օրինակ բնական ռեսուրսներն են) ձեռքբերումը,

✓ շուկայականից բարձր գնով պատվերների տրամադրումը մասնավոր հատվածին,

✓ որոշ տնտեսվարողներին այնպիսի արտոնյալ պայմանների տրամադրումը, որոնք սահմանափակում են շուկայական մրցակցությունը¹¹⁷:

2. **Կոռուպցիան նույնպես** հանգեցնում է անհավասարության աճին: ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի կողմից հրապարակված ՀՀ ներդրումային միջավայրի մասին զեկույցում նշվում է, որ կոռուպցիան առկա է արդարադատության, հարկային, մաքսային, առողջապահության, կրթության, ռազմական ոլորտներում¹¹⁸: Դրա միջոցով առանձին սուբյեկտներ հեշտությամբ ձեռք են բերում այն, ինչն օրենքով սահմանված կարգով ստանալու համար անհրաժեշտ է բավարարել որոշակի պահանջների: Խոսքը

¹¹⁶ Stiglitz J., The Price of Inequality, Allen Lane, an imprint of Penguin Books, London, 2012, pp. 77-78

¹¹⁷ Աղբյուրը՝ տե՛ս նույն տեղում, 39-47-րդ էջեր

¹¹⁸ US Department Of State, Bureau of Economic and Business Affairs, Investment Climate Statements for 2016, available at

<https://www.state.gov/e/eb/rls/othr/ics/2016investmentclimatestatements/index.htm?year=2016&dliid=254335#wrapper>

վերաբերում է, օրինակ՝ կաշառքի միջոցով բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելուն, որը ստեղծում է անարդար մրցակցային միջավայր:

3. **Անհավասարությունը մարդկային կապիտալում** լայն իմաստով անհավասարության և՛ պատճառն է, և՛ հետևանքը: Մարդկային կապիտալի ձևավորման և զարգացման գործում չափազանց կարևոր դերակատարում ունեն կրթությունը և առողջապահական ծառայությունները¹¹⁹: Ուստի ցածր վճարունակության հետևանքով կրթական և առողջապահական ծառայությունների ոչ բավարար հասանելիությունն (որն առկա է ՀՀ-ում) անհավասարության գլխավոր պատճառներից է: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել դրանց հասանելիությանը՝ միաժամանակ կարևորելով որակի բարելավումը:

4. **Արհմիությունների թույլ լինելը** դժվարացնում է աշխատողների շահերի պաշտպանության խնդիրը: Մասնավորապես բարդանում է նվազագույն աշխատավարձի բարձրացման միջոցով սոցիալական իրավիճակի բարելավման հարցը: Սա անբարենպաստ աշխատանքային պայմանների և ցածր աշխատավարձերի պատճառներից է: ՀՀ արհմիությունների զարգացմանը կնպաստեն դրանց գոյության ու նպատակների մասին հասարակության լայն զանգվածներին իրազեկումը, վստահության մթնոլորտի ստեղծումը, բնակչության կենսամակարդակի բարձրացումը (անդամավճարներ կատարելու համար) և այլն:

5. **Մակրոտնտեսական քաղաքականությունը կարող է հանգեցնել անհավասարության աճին**, եթե թերագնահատվի դրա ազդեցությունը եկամուտների վերաբաշխման վրա: Այսպես, օրինակ, անհավասարությունը խորանում է, երբ առավելապես հարկվում են ցածր եկամուտները և կրճատվում են սոցիալական ծախսերը: Ատենախոսությունում ներկայացված տվյալները վկայում են, որ ՀՀ-ում հարստության հարկման հետ կապված խնդիրներ կան, որոնք հակասում են արդար հարկազանձման սկզբունքին:

6. **Սոցիալական նորմերը** ևս կարող են հանգեցնել անհավասարության աճին: Այսպես՝ հասարակության մեջ երբեմն ամրապնդվում են այնպիսի նորմեր, վարքագծի

¹¹⁹ **Schultz T.**, Schultz-Prize lecture: The Economics of Being Poor, 1979, available at http://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1979/schultz-lecture.html

կանոններ, կարծրատիպեր, որոնք մեծացնում են խտրականության հնարավորությունը, իսկ խտրականությունն ու հավասարությունը բացառում են միմյանց: Գոյություն ունեն խտրականության տարբեր դրսևորումներ՝ ռասսայական, կրոնական, գենդերային, տարիքային և այլն: ՀՀ-ում դեռևս իրականացվում են հղիության՝ սեռով պայմանավորված արհեստական ընդհատումներ, ինչը գենդերային խտրականության տեսակներից է:


7. *Ձարգացած երկրների կողմից վարվող արտաքին քաղաքականությունը*
կարող է երկրների միջև անհավասարության աճի պատճառ դառնալ: Այսպես՝ Գ. Մյուրդալը նշում է, որ միջազգային հարթակում երկրներն առաջնորդվում են՝ ելնելով իրենց ազգային շահերից, իսկ տնտեսապես զարգացած երկրների մեծամասնության կողմից տրամադրվող օգնությունն առավելապես միտված է զարգացող երկրներում իրենց ազդեցության պահպանմանը¹²⁰:

Հարց է առաջանում, թե որոնք են անհավասարության կրճատման ուղիները: Նախ հարկավոր է նշել, որ խոսքը մեխանիկորեն ձևավորված և լրիվ հավասարության մասին չէ (այն նույնպես դրական երևույթ չէ): Դրա կրճատմանը կարող է նպաստել պրոգրեսիվ հարկաբյուջետային քաղաքականությունը: Միաժամանակ խնդիրը հնարավոր չէ լուծել միայն եկամուտների և հարստության վերաբաշխման ճանապարհով. անհավասարության կրճատումը պահանջում է քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում համալիր միջոցառումների իրականացում (կոռուպցիայի հաղթահարում, ինստիտուցիոնալ միջավայրի բարելավում, մրցակցային պայմանների ապահովում, մարդկային կապիտալի զարգացում և այլն):

Աղքատության խնդիրը սերտորեն կապված է անհավասարության հետ: Հայաստանում բարեկեցության մակարդակը գնահատելու համար օգտագործվում է սպառման ազրեգացված ցուցանիշը: Դրա բաղկացուցիչներից են սպառված պարենային և ոչ պարենային ապրանքների արժեքը, ներառյալ սեփական արտադրության ապրանքները, մարդասիրական կազմակերպություններից և այլ աղբյուրներից ստացված օգնությունը, ինչպես նաև երկարատև օգտագործման ապրանքների հաշվարկային

¹²⁰ **Myrdal G.**, Prize lecture: The equality issue in world development, 1975, available at http://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1974/myrdal-lecture.html

արժեքը¹²¹: Այստեղ ցածր կենսամակարդակն արտահայտվում է նաև նրանով, որ սպառողական ծախսերի գրեթե կեսը կազմում են սննդամթերքի վրա կատարված ծախսերը: Ցուցանիշն աստիճանաբար կրճատվել է և 2016թ. կազմել է 42.1%, որը, սակայն, բավականին բարձր է (տե՛ս գծապատկեր 2.2.6.): Սա վկայում է այն մասին, որ ՀՀ բնակիչների զգալի մասի եկամուտները ցածր են, իսկ սպառողական ծախսերն առավելապես ուղղված են կենսական նվազագույնի պահպանմանը:



Գծապատկեր 2.2.6. Տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքը, 2005-2016թթ. (%)¹²²

Արտասահմանից դրամական փոխանցումներն էական նշանակություն ունեն տնային տնտեսությունների սպառման համար: Սա ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Դրականն այն է, որ հնարավորություն է տալիս մեղմելու գործազրկության և աղքատության հետևանքները: Որպես բացասական կողմ կարելի է նշել այն, որ թուլանում են աշխատելու խթանները, և մեծանում է արտաքին ազդակներից կախվածությունը: Վերջինը դրսևորվեց Ռուսաստանի տնտեսական իրավիճակի

¹²¹ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2017թ., էջ 39
¹²² Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2006-2017թթ. հրապարակումներ, համապատասխանաբար 69-րդ, 69-րդ, 80-րդ, 96-րդ, 123-րդ, 128-րդ, 132-րդ, 125-րդ, 113-րդ, 116-րդ, 124-րդ, 136-րդ էջեր

վատթարացման հետևանքով դեպի Հայաստան դրամական փոխանցումների կրճատմամբ, ինչը բացասաբար անդրադարձավ սպառման մակարդակի, հետևաբար տնտեսական աճի վրա:

Սպառումն իրականացվում է նաև վարկերի հաշվին, որոնց մարումը երբեմն բարդություն է ներկայացնում: Այսպես՝ չաշխատող սպառողական վարկերի¹²³ տեսակարար կշիռն ամենաբարձրն է առևտրային բանկերի չաշխատող ակտիվների կառուցվածքում. 2017թ. հոկտեմբերին կազմել է 1.14%¹²⁴: Պետք է նշել, որ Հայաստանում պարտքային հարաբերություններ կան նաև ոչ ֆորմալ տիրույթում. դրանք չեն արձանագրվում փաստաթղթով: Բերված օրինակները վկայում են բնակչության պարտավորությունների բարձր մակարդակի մասին: Այս երևույթն արտասահմանյան գրականության մեջ հայտնի է “indebtedness” եզրույթով և հաճախ է օգտագործվում բարեկեցության մակարդակը գնահատելու համար¹²⁵:

Այն, որ բնակչության եկամուտները հաճախ չեն բավականացնում հիմնական պահանջմունքները բավարարելուն, արտահայտվում է նաև նրանով, որ այստեղ առկա է աշխատողների աղքատությունը: ՀՀ-ում 2016թ. նվազագույն ամսական աշխատավարձը կազմել է 55000 դրամ (դեռևս գտնվում է նույն մակարդակում)¹²⁶, իսկ աղքատության վերին գիծը՝ 40867 դրամ¹²⁷, սակայն բազմազավակ ընտանիքը, որտեղ ծնողներն աշխատում են նվազագույն աշխատավարձով, կհայտնվի ծանր կացության մեջ (նույնիսկ պետության կողմից ընտանեկան նպաստի տրամադրման դեպքում): Բացի այդ, համաձայն Սոցիալական իրավունքի եվրոպական հանձնաժողովի կողմից ներկայացված «Նախադեպային իրավունքի վերլուծական ամփոփագրի»՝ նվազագույն և միջին աշխատավարձերի հարաբերակցության ընդունելի շեմ է 50-ից 60%-ը¹²⁸: ՀՀ-ում ցուցանիշը 2016թ. կազմել է շուրջ 42%¹²⁹:

¹²³ Չաշխատող ակտիվներում ընդգրկված են հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի դասով դասակարգված ակտիվները, ինչպես նաև դեբիտորական պարտքերը:

¹²⁴ Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ, ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր, Երևան 2017թ., հոկտեմբերի 10, էջ 212

¹²⁵ Stiglitz J., The Price of Inequality, Allen Lane, an imprint of Penguin Books, London, 2012, p. 192

¹²⁶ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան 2017թ., էջ 97


¹²⁷ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2017թ., էջ 40

¹²⁸ The European Committee of Social Rights, Digest of The Case Law of The European Committee of Social Rights, 2008, p. 43

¹²⁹ Հաշվարկել ենք՝ կիրառելով զուտ աշխատավարձերի արժեքները:

Միջին աշխատավարձը (2016թ. կազմել է 174445 դրամ¹³⁰) նույնպես մեծ գումար չի կազմում: Հարկավոր է նշել, որ համախառն ավելացված արժեքի կառուցվածքում վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության կշիռը նվազել է 2003-2015թթ.¹³¹ 44.3%-ից հասնելով 38.5%-ի: Միաժամանակ աճել է համախառն շահույթի և համախառն խառը եկամտի բաժինը՝ 53.9%-ից հասնելով 60.1%-ի¹³¹: Ճիշտ է՝ այս ընթացքում ՀՆԱ հաշվարկման մեթոդաբանություն է փոխվել, սակայն նշված համեմատությունը հնարավորություն է տալիս ներկայացնել ցուցանիշների շարժընթացի ուղղությունը:

Աշխատողների աղքատությունը պայմանավորված է նաև աշխատավարձի ցածր գնողունակությամբ: Որպեսզի ուսումնասիրենք աշխատավարձերի շարժընթացը, կիրառել ենք դրանց կուտակային աճի համաթվերը՝ բազային տարի ընդունելով 1999թ.: Իրական աշխատավարձի կուտակային աճը 2016թ. շուրջ 2 անգամ փոքր է եղել անվանականից (տե՛ս գծապատկեր 2.2.7.): Հետևաբար չնայած աշխատավարձն աճել է, բնակչության վճարունակությունը կրկնակի անգամ ավելի քիչ է ավելացել վերջին 17 տարիների ընթացքում:




Գծապատկեր 2.2.7. Անվանական և իրական աշխատավարձերի կուտակային աճի տեմպերը, 1999-2016թթ. (%)¹³²

¹³⁰ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան 2017թ., էջ 86

¹³¹ Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ տվյալների բազա (<http://armstat.am/am/?nid=202>)

¹³² Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ տվյալների բազա (<http://armstat.am/am/?nid=12&id=08001>)

Հարկավոր է նշել, որ եթե 2002-2009թթ. իրական աշխատավարձի կուտակային աճն ավելի բարձր էր, քան մեկ զբաղվածի հաշվով ՀՆԱ կուտակային աճը, ապա 2010-2016թթ. նկատվել է հակառակ երևույթը (տե՛ս գծապատկեր 2.2.8.): Սա կարող է վկայել այն մասին, որ աշխատավարձի բարձրացման հնարավորություն տնտեսությունում առկա է:



Գծապատկեր 2.2.8. Իրական աշխատավարձի և մեկ զբաղվածի հաշվով ՀՆԱ կուտակային աճը, 2002-2009թթ. և 2010-2016թթ. (%)¹³³

Աշխատավարձի ցածր մակարդակը նաև ՀՀ-ում զբաղվածների թվի կրճատման պատճառներից է, ինչը բացատրվում է նրանով, որ կրթված և բարձր որակավորում ունեցող մասնագետների մի մասը նախընտրում է աշխատել արտասահմանում, որտեղ համեմատաբար մեծ է արտադրողականությանը համապատասխան աշխատավարձ ստանալու հնարավորությունը: Իսնդրի լուծմանը կնպաստի նվազագույն աշխատավարձի բարձրացումը, քանի որ վերոնշյալ վերլուծությունը վկայում է, որ դրա ներկա մակարդակը բավարար չէ հիմնական պահանջմունքները բավարարելու համար:

ՀՀ-ում բարձր է նաև մանկական աղքատությունը. 2008-2016թթ. աճել է 4.4 տոկոսային կետով՝ կազմելով 34.2%: Ծայրահեղ աղքատության պայմաններում է ապրում երեխաների 2.0%-ը, որը գերազանցում է 2008թ. մակարդակը (տե՛ս աղյուսակ 2.2.1.):

¹³³ Հաշվարկն իրականացվել է հեղինակի կողմից:

Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ տվյալների բազա (<http://armstat.am/am/?nid=202>)

(<http://armstat.am/am/?nid=12&id=08002&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC>):

Զբաղվածների թվաքանակի համադրելի վիճակագրական շարք ստանալու նպատակով կիրառված մեթոդը ներկայացված է ատենախոսության 2.3-րդ բաժնում:

Աղյուսակ 2.2.1. Մանկական աղքատության ցուցանիշների փոփոխությունը, 2008-2016թթ. (%) ¹³⁴

	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ոչ աղքատ
2008թ.	1.6	29.8	70.2
2009թ.	3.8	35.7	64.3
2010թ.	3.7	41.4	58.6
2011թ.	4.7	41.9	58.1
2012թ.	3.3	36.2	63.8
2013թ.	3.3	37.3	62.7
2014թ.	3.3	34.0	66.0
2015թ.	2.5	33.7	66.3
2016թ.	2.0	34.2	65.8

Աղքատության պայմաններում բնակվող երեխաների համար նվազում է կրթություն ստանալու և որակյալ առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորությունը: Սրա հետևանքները երկար տարիներ պահպանում են իրենց ազդեցությունը: Կարևոր է նաև տարեց բնակչության շրջանում աղքատության հաղթահարումը: Նշանակված կենսաթոշակի միջին չափը 2016թ. կազմել է 40396.9 դրամ¹³⁵: Սա (եկամտի այլ աղբյուրների կամ խնայողության բացակայության դեպքում) չի կարող բավարարել կենսաթոշակային տարիքում գտնվող անձի հիմնական պահանջմունքները:

Աղքատության խնդիրը կապված է նաև տարածքային անհամաչափ զարգացման հետ: ՀՀ աղքատության ամենաբարձր մակարդակն ինչպես 2008թ., այնպես էլ 2016թ. արձանագրվել է Շիրակում, Կոտայքում, Լոռիում (տե՛ս աղյուսակ 2.2.2.): Հարկ է նշել, որ այս մարզերում մեծ է բնակչության, հետևաբար նաև աղքատների թիվը¹³⁶:

¹³⁴ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2017թ., էջ 98

¹³⁵ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2016 թվականին, Երևան 2017թ., էջ 434

¹³⁶ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, Երևան 2017թ., տե՛ս 320-րդ, 312-րդ, 303-րդ էջեր

Աղյուսակ 2.2.2. Աղքատության հիմնական ցուցանիշները մարզերում և ք. Երևանում, 2008թ. և 2016թ. (%) ¹³⁷

	2008 թ.		2016 թ.	
	<i>Ծայրահեղ աղքատ</i>	<i>Աղքատ</i>	<i>Ծայրահեղ աղքատ</i>	<i>Աղքատ</i>
ք.Երևան	1.1	20.1	1.9	24.9
Արագածոտն	0.5	20.3	0.6	15.7
Արարատ	1.6	31.3	1.0	26.9
Արմավիր	0.7	24.5	1.5	30.0
Գեղարքունիք	0.4	32	1.0	28.8
Լոռի	2.8	34.2	2.7	35.8
Կոտայք	2.1	39.5	1.3	35.4
Շիրակ	4.6	42.4	3.7	45.5
Սյունիք	1.3	20.3	1.1	24.2
Վայոց Ձոր	1.9	21.1	1.2	18.8
Տավուշ	1.7	23.2	1.9	33.8
Ընդամենը	1.6	27.6	1.8	29.4

Աղքատության մակարդակը 2008թ. համեմատությամբ աճել է Երևանում, Արմավիրում, Լոռիում, Շիրակում, Սյունիքում և Տավուշում: Նշենք, որ Շիրակի բնակչության գրեթե կեսը բնակվում է աղքատության տիրույթում: Ծայրահեղ աղքատությունն առկա է բոլոր մարզերում:

Աղքատության հարցերը քննարկելիս տեղին է անդրադառնալ նաև բնակարանային անապահովության խնդրին: Այս առումով կարևոր են անօթևաններին կացարանով ապահովելու ուղղությամբ սոցիալական ծրագրերի իրականացումը: Վերջինի օրինակ է Երևանի քաղաքապետարանի ֆինանսավորմամբ և հայ-դանիական «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ ստեղծված ժամանակավոր

¹³⁷ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2017թ., էջ 46

կացարանը: Նմանօրինակ նախաձեռնություններն անհրաժեշտ են հատկապես ծայրահեղ աղքատության պայմաններում գտնվող մարդկանց համար:

ՀՀ-ում քիչ չեն նաև նրանք, ովքեր ունեն ժամանակավոր կացարան, սակայն որոնք բնութագրվում են ծանր կենցաղային պայմաններով (բնակելի մակերեսի սակավություն, վատ լուսավորություն, սանիտարական անհրաժեշտ պայմանների բացակայություն, ջեռուցման պակաս և այլն): Խոսքը վերաբերում է հատկապես Գյումրի քաղաքի այն բնակիչներին, ովքեր շարունակում են ապրել ժամանակավոր կացարաններում: Սոցիալական բնակարանաշինության ծրագրերի ավելացումը հնարավորություն կտա կրճատել բնակարանային խնդիրները ՀՀ-ում:

Այսպիսով՝ ՀՀ-ում աճում է անհավասարության մակարդակը: Աղքատության մակարդակը բարձր է և տարբերվում է ըստ տարածաշրջանների: Առկա է նաև աշխատողների, երեխաների և թոշակառուների աղքատությունը: Աշխատատեղերի ստեղծումն ու արդյունավետ սոցիալական քաղաքականությունն աղքատության կրճատման գլխավոր ուղիներից են: Հարկային եկամուտների ապահովման հարցում հարկավոր է ավելացնել հարստության հարկման բաժինը:

2.3. Զանգվածային գործազրկության պատճառներն ու զբաղվածության ապահովման ուղիները

Գործազրկության հիմնախնդիրը միշտ էլ եղել է տնտեսագետների ուշադրության կենտրոնում: Այսպես՝ Զ. Քեյնսն իր՝ «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսությունը» գրքում, ի տարբերություն դասական տնտեսագիտության ներկայացուցիչների, հիմնավորեց հարկադրական գործազրկության հնարավորությունը¹³⁸: Ա. Ֆիլիպսը ներկայացրեց գործազրկության և աշխատավարձի միջև կապը, որը հետագայում վերափոխվեց ինֆլյացիայի և գործազրկության կախվածության¹³⁹: Ա. Օուքենը քանակապես գնահատեց գործազրկության բնական

¹³⁸ **Keynes J.**, The General Theory of Employment, Interest and Money, Harcourt, Brace & World, 1965., See book I, Chapters 2

¹³⁹ **Phillips A.**, The Relation Between Unemployment and the Rate of Change of Money Wage Rates in the United Kingdom, 1861–1957, *Economica* 25 (100), 1958, pp. 283-299

մակարդակից շեղումների և ներուժային ՀԱԱ-ի միջև կապը, ինչը տնտեսագիտական գրականության մեջ հայտնի է որպես «Օուքենի օրենք»¹⁴⁰:

Ելնելով մասնագիտական գրականության և ՀՀ աշխատանքի շուկայի ուսումնասիրության արդյունքներից՝ ատենախոսության այս բաժնում հիմնավորվել է, որ ՀՀ տնտեսական աճի ազդեցությունը թույլ է զբաղվածության ապահովման, հետևաբար նաև գործազրկության կրճատման գործում: Ներկայացված են գործազրկության բարձր մակարդակի պատճառները և դրանց հաղթահարման հնարավոր ուղիները:

Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ գործազրկության մակարդակը տնտեսական աճին զուգահեռ կրճատվել է 2010-2013թթ.՝ 19%-ից մինչև 16.2%-ի և նորից բարձրացել է 2013-2015թթ.՝ հասնելով 18.5%¹⁴¹: Նշենք, որ ցուցանիշի կրճատմանը զուգահեռ նվազել է նաև զբաղվածների թիվը: Հատկանշականն այն է, որ գործազրկության մակարդակը նվազել է նաև 0.2% տնտեսական աճի պայմաններում՝ (2016թ.) կազմելով 18%¹⁴²: Սա կարող է վկայել այն մասին, որ գործազրկության մակարդակի փոփոխությունը պայմանավորված է նաև այլ գործոններով, որոնք կապված չեն տնտեսական աճի և աշխատատեղերի ստեղծման հետ:

Գործազրկության մակարդակն էապես տարբերվում է ըստ մարզերի և Երևան քաղաքի: Աղյուսակ 2.3.1.-ից երևում է, որ 2008-2016թթ. այն համեմատաբար ավելի բարձր է եղել հիմնականում Կոտայքում, Շիրակում և Լոռիում: Ցուցանիշը բարձր է նաև մայրաքաղաքում:

Աղյուսակ 2.3.1. Գործազրկության մակարդակն ըստ մարզերի և Երևան քաղաքի, 2008-2016թթ. (%)¹⁴³

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Հայաստանի Հանրապետություն	16.4	18.7	19.0	18.4	17.3	16.2	17.6	18.5	18.0
ք. Երևան	23.7	29.7	29.9	30.2	25.8	24.0	26.9	30.2	29.1
Արագածոտն	9.2	6.9	8.1	5.7	4.1	3.3	5.1	5.7	5.9
Արարատ	8.8	6.7	6.6	8.1	5.0	6.5	7.5	8.3	9.2

¹⁴⁰ Okun A., Potential GNP: Its Measurement and Significance, Yale University, Cowles Foundation Paper 190, 1962

¹⁴¹ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկայի Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2016թ., էջ 139

¹⁴² Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-մարտին, Երևան 2017թ., էջ 102

¹⁴³ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, Երևան 2012թ., 2014թ. և 2017թ. հրապարակումներ, համապատասխանաբար 88-րդ, 89-րդ և 114-րդ էջեր

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Արմավիր	4.5	9.0	10.4	5.8	6.7	5.5	7.4	9.4	11.6
Գեղարքունիք	5.5	10.1	8.9	9.5	11.6	8.2	5.8	4.7	4.2
Լոռի	17.2	19.3	19.7	18.4	19.8	19.2	16.9	15.7	12.3
Կոտայք	21.3	18.5	19.2	19.3	20.4	20.4	22.8	23.0	21.8
Շիրակ	24.4	20.4	22.0	19.3	22.4	21.6	20.8	19.0	21.0
Սյունիք	11.3	12.5	12.2	13.6	14.9	12.0	18.3	15.7	11.6
Վայոց Ձոր	17.6	17.0	13.7	10.6	8.7	11.0	13.0	10.1	8.4
Տավուշ	12.0	11.8	10.9	11.9	11.0	11.3	10.9	12.1	12.5

Հարկավոր է նշել, որ իրականում գործազրկության մակարդակն ավելի բարձր է ՀՀ-ում: Սա բացատրվում է նրանով, որ երկար ժամանակ աշխատանք չգտնելու հետևանքով մարդիկ հաճախ դադարում են փնտրել այն և չեն համարվում գործազուրկ: Նշվածն արտացոլվում է նրանում, որ 2008-2016թթ. աշխատանքային ռեսուրսների տնտեսական ակտիվության մակարդակը համեմատաբար ցածր է եղել հիմնականում գործազրկության բարձր մակարդակ ունեցող մարզերում (տես աղյուսակ 2.3.2.): Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2016թ. 175.9 հազ. մարդ աշխատանք չի փնտրել, սակայն պատրաստ է եղել անմիջապես անցնել աշխատանքի¹⁴⁴: Սա գործազրկության մակարդակի հաշվարկում ներառելու դեպքում ցուցանիշը կկազմի 24.4%:


Աղյուսակ 2.3.2. Տնտեսական ակտիվության մակարդակը ըստ մարզերի և Երևան քաղաքի, 2008-2016թթ. (%)¹⁴⁵

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Հայաստանի Հանրապետություն	59.5	59.2	61.2	63.0	62.7	63.4	63.1	62.5	61.0
ք.Երևան	55.6	57.2	58.4	60.0	60.5	60.6	59.9	61.4	59.2
Արագածոտն	78.6	82.7	79.4	81.9	78.1	80.8	70.7	62.7	64.0
Արարատ	66.7	68.2	68.8	69.1	71.3	72.0	73.4	69.3	66.4
Արմավիր	65.3	63.3	64.5	66.9	71.0	67.6	64.3	67.6	70.1
Գեղարքունիք	64.5	62.2	65.1	67.3	58.7	60.5	61.0	56.8	51.0
Լոռի	58.9	54.0	60.4	59.9	61.0	62.2	66.1	58.8	59.9
Կոտայք	50.5	49.7	52.6	58.3	55.2	56.5	59.0	62.0	55.6
Շիրակ	48.7	47.9	49.9	50.9	53.2	55.6	57.6	56.1	58.5
Սյունիք	68.4	71.3	75.2	74.4	71.6	73.1	71.6	68.3	66.1
Վայոց Ձոր	70.2	67.5	67.5	73.1	73.0	75.6	74.1	75.7	73.6
Տավուշ	71.6	70.8	72.1	73.5	71.8	71.2	66.6	65.3	63.3

¹⁴⁴ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2017թ., էջ 42

¹⁴⁵ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, Երևան 2012թ., 2014թ., 2017թ. հրապարակումներ, համապատասխանաբար 82-րդ, 83-րդ և 107-րդ էջեր

Գործազրկության խնդիրներն ուսումնասիրելիս հարկավոր է վերլուծել այն, թե ինչպես է տնտեսական աճը նպաստում գործազրկության կրճատմանը: Միգրացիայի միջազգային կազմակերպության և ՀՀ ԱՎԾ կողմից իրականացված հետազոտության համաձայն ՀՀ-ից հեռացածների 62.8%-ը գործազուրկ է¹⁴⁶: Հետևաբար գործազրկության մակարդակի կրճատումը զգալիորեն ուղղորդվում է գործազուրկների արտագաղթով: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ուսումնասիրվել է իրական ՀՆԱ-ի և զբաղվածների թվի շարժընթացը: Դիտարկված ժամանակահատվածում իրական ՀՆԱ-ն աճի միտում է ունեցել (նույնիսկ 2009թ. գրանցված անկումից հետո), իսկ զբաղվածների թիվը ոչ միայն էապես չի ավելացել, այլև կրճատվել է: Այն 2017թ. II-րդ եռամսյակում կազմել է 1041.5 հազ. մարդ (տե՛ս գծապատկեր 2.3.1.):



Գծապատկեր 2.3.1. Իրական ՀՆԱ-ի և զբաղվածների թվի շարժընթացը, 2002-2017թթ.¹⁴⁷

Զբաղվածների թվի փոփոխության վրա ՀՆԱ աճի ազդեցությունը գնահատելու համար օգտագործել ենք էկոնոմետրիկ մոդելավորման գործիքակազմը՝ EViews

¹⁴⁶ Աղբյուրը՝ Միգրացիայի միջազգային կազմակերպություն, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանում միգրացիայի վերաբերյալ տնային տնտեսությունների հետազոտության մասին զեկույց, Երևան 2014թ., էջ 80-81

¹⁴⁷ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ վիճակագրական տվյալների բազաներ (<http://armstat.am/am/?nid=202>)

ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-հունիսին, Երևան 2017թ., էջ 80

ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2016թ., էջ 49

ծրագրային փաթեթի միջոցով կառուցելով գծային ռեգրեսիոն մոդել: Այն գնահատել ենք փոքրագույն քառակուսիների մեթոդով: Մոդելում որպես բացատրվող (կախյալ) փոփոխական է դիտարկվել զբաղվածների թիվը: Ցանկալի կլիներ օգտագործել նոր ստեղծված աշխատատեղերի թիվը, սակայն այն ստացվում է միայն ՀՀ զբաղվածության պետական գործակալության հետ համագործակցող գործատուների կողմից աշխատողների նկատմամբ ներկայացրած պահանջի հիման վրա: Սա չի կարող ներկայացնել նոր աշխատատեղերի վերաբերյալ ամբողջական պատկերը:

Բացատրող (անկախ) փոփոխականներն են՝ իրական ՀՆԱ-ն և սպառողական գների ինդեքսը: Զբաղվածների թվի շարժընթացի վրա ազդում են նաև այլ գործոններ, որոնք ներառված չեն մոդելում (միգրացիան, կենսաթոշակային տարիքը լրանալու պատճառով աշխատանքից հեռանալը, աշխատավարձը և այլն): Փորձել ենք կիրառել միգրանտների թիվը, սակայն, պայմանավորված հատկապես վիճակագրական շարքի հատկանիշներով, արդյունքի որակը գոհացուցիչ չէր: Կենսաթոշակային տարիքը լրանալու պատճառով աշխատանքից հեռացողների վերաբերյալ եռամսյակային տվյալներ հրապարակված չեն, իսկ աշխատավարձն արդեն իսկ ներառված է ՀՆԱ-ի մեջ: Հաշվի առնելով այն, որ զբաղվածների թվի շարքն ունի իներցիոն բնույթ՝ մոդելում ներառել ենք AR(1) (առաջին կարգի ավտոռեգրեսիվ), իսկ պատահական շոկերը մոդելավորելու նպատակով՝ MA(4) (սահող միջին) պրոցեսները:

Բոլոր ցուցանիշները ներկայացված են աճի ինդեքսներով (նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ): Դրանք բավարարում են ստացիոնարության պայմանին (տե՛ս հավելված 4): Հաշվի առնելով վիճակագրական ժամանակային շարքերի որակական հատկանիշները՝ հետազոտվել են 2005-2017թթ. տվյալները: ՀՀ ԱՎԾ-ն 2008-2017թթ. հրապարակել է զբաղվածների թվաքանակը՝ ելնելով տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված և աշխատուժի հետազոտություններից: Համադրելի վիճակագրական շարք ստանալու նպատակով կիրառել ենք վարչական աղբյուրներից 2005-2008թթ. ստացված տվյալների միտումները: Այսպես, օրինակ, զբաղվածների թիվը 2008թ. առաջին եռամսյակում նախորդ տարվա չորրորդ եռամսյակի նկատմամբ

կրճատվել է 1.7%-ով¹⁴⁸: Հիմք ընդունելով նոր մեթոդով ներկայացված զբաղվածների թիվը՝ ստացել ենք 2007թ. վերջին եռամսյակի ցուցանիշը, և այսպես շարունակ: Ընդունելով, որ այստեղ կարող են լինել շեղումներ, մեթոդի նպատակահարմարությունը հիմնավորվում է նրանով, որ այն հնարավորություն է տալիս մեծացնել դիտարկումների քանակը: Մոդելում չեզոքացրել ենք 2009թ. և 2011թ. IV-րդ եռամսյակների տատանումները: Առաջինը պայմանավորված է ճգնաժամով, իսկ երկրորդը՝ վիճակագրական շարքի հատկանիշներով:

Մոդելի արդյունքները վկայում են, որ տնտեսական աճի ազդեցությունը փոքր է զբաղվածության ապահովման գործում՝ իրական ՀՆԱ-ի 1 տոկոս աճը հանգեցնում է զբաղվածների թվի 0.19 տոկոսով ավելացմանը: Գնահատված մոդելը ցույց է տալիս, որ կարճաժամկետում (երկարաժամկետում նշանակալիությունը նվազում է) զբաղվածության փոփոխության վրա համեմատաբար մեծ և դրական ազդեցություն ունի սպառողական գների ինդեքսը: Դրա 1 տոկոս աճը հանգեցնում է զբաղվածների թվի 0.3 տոկոսով ավելացմանը (տե՛ս հավելված 5): Սա համապատասխանում է ինֆլյացիայի և գործազրկության միջև գոյություն ունեցող կապը ներկայացնող Ֆիլիպսի կորի տրամաբանությանը:

Մոդելավորման արդյունքում պարզվել է, որ զբաղվածության նախորդ լազն ունի դրական ազդեցություն, քանի որ յուրաքանչյուր հաջորդ եռամսյակում զբաղվածների մեծամասնությունը չի կորցնում իր աշխատանքը: Միաժամանակ չորրորդ լազն ունի բացասական ազդեցություն, որը բացատրվում է ինչպես բազայի էֆեկտով, այնպես էլ նրանով, որ աշխատանքային ոչ բարենպաստ պայմանները հանգեցնում են զբաղվածության կրճատմանը (երկրից արտագաղթողների 25.1%-ը զբաղված է¹⁴⁹): Զբաղվածների շարքի փաստացի և մոդելով գնահատված արժեքների միջև շեղումը փոքր է (տե՛ս հավելված 6), ինչպես նաև առկա չէ հետերոսկեդաստիկություն (տե՛ս հավելված 7): Հարկավոր է նշել նաև այն, որ մոդելում բացակայում է էնդոգենության խնդիրը (տե՛ս


¹⁴⁸ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում 2005-2009թթ., Երևան 2010թ., էջ 24

¹⁴⁹ Աղբյուրը՝ Միգրացիայի միջազգային կազմակերպություն, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանում միգրացիայի վերաբերյալ տնային տնտեսությունների հետազոտության մասին զեկույց, Երևան 2014թ., էջ 80-81

հավելված 8), որը կարող է առաջանալ կախյալ և անկախ փոփոխականների միջև փոխադարձ կապի առկայության դեպքում:

Հարց է առաջանում, թե ինչով են պայմանավորված գործազրկության կայուն բարձր մակարդակը և դրա վրա տնտեսական աճի թույլ ազդեցությունը: Դրա պատճառների շարքում առանձնանում են տնտեսության ճյուղային կառուցվածքի խնդիրները և տարածքային անհամաչափ զարգացումը: Սովետային տնտեսության ազդեցությունը գործազրկության վրա միանշանակ չէ, սակայն աշխատանքում ներկայացված են դրա բացասական հետևանքները: Այսպես.

1. **Տնտեսության ճյուղային կառուցվածքի խնդիրները** խոչընդոտում են զբաղվածության բարձր մակարդակի ապահովումը, որի հետևանքով տնտեսությունը չի կարողանում նույնիսկ մոտենալ գործազրկության բնական մակարդակին: Ասվածը հիմնավորելու նպատակով դիտարկել ենք 2008-2017թթ. գործազրկության մակարդակի և զբաղվածության եռամսյակային տվյալների շարժընթացը: Գործազրկության մակարդակը տատանվել է, սակայն դրա միտումը կայուն է եղել, իսկ զբաղվածների թիվն աստիճանաբար կրճատվել է (տե՛ս գծապատկեր 2.3.2.):




Գծապատկեր 2.3.2. Գործազրկության մակարդակի և զբաղվածների թվի շարժընթացը ՀՀ-ում, 2008-2017թթ.¹⁵⁰

¹⁵⁰ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-հունիսին, Երևան 2017թ., 80-81-րդ էջեր
 Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2016թ., 49-րդ և 139-րդ էջեր

Ասվածը վկայում է այն մասին, որ կան տնտեսության ճյուղային կառուցվածքի հետ կապված խնդիրներ: Այսպես՝ զբաղվածների 33.6%-ը 2016թ. աշխատել է գյուղատնտեսությունում: Միաժամանակ այս ճյուղի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կառուցվածքում կազմել է 15.9% (տե՛ս գծապատկեր 2.3.3.): Հետևաբար այստեղ ցածր է արտադրողականության մակարդակը և առկա է թերզբաղվածություն: Ինչ վերաբերում է շինարարությանը, ապա այն շարունակում է անկում ապրել ճգնաժամից հետո (2016թ. այստեղ աշխատել է զբաղվածների 3.7%-ը):

Ծառայությունները և արդյունաբերությունը 2016թ. կազմել են ՀՆԱ-ի համապատասխանաբար 49.3%-ը և 16.7%-ը: Այս ճյուղերում աշխատել է զբաղվածների 50.6%-ը և 12.1%-ը: Տնտեսական առաջընթացը ենթադրում է արտադրողականության աճ, ինչպես նաև տնտեսության ճյուղային կառուցվածքի բարելավում: Սրա արդյունքում կստեղծվեն նոր աշխատատեղեր, կկրճատվի գործազրկության մակարդակը: Բացի այդ գյուղատնտեսությունում թերզբաղվածները հնարավորություն կունենան աշխատանք գտնել մյուս ոլորտներում:



Գծապատկեր 2.3.3. ՀՆԱ-ի և զբաղվածության ճյուղային կառուցվածքը, 2016թ. (%)¹⁵¹

¹⁵¹ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-մարտին, Երևան 2017թ., էջ 102
 ՀՀ ԱՎԾ տվյալների բազա (<http://armstat.am/am/?nid=202>)

Տնտեսության ճյուղային կառուցվածքի բարելավման տեսանկյունից հարկավոր է՝

ա) պետության կողմից ներդրումներ իրականացնել ենթակառուցվածքների զարգացման գործում,

բ) սուբսիդիաների միջոցով խթանել նպատակային ոլորտներում ներդրումների իրականացումը և աշխատատեղերի ստեղծումը,

գ) կրթաթոշակների տրամադրման և ուսման վարձի զեղչման ճանապարհով խրախուսել համապատասխան մասնագիտության ձեռքբերումը:

2. **Տարածքային անհամաչափ զարգացումը** ևս խոչընդոտում է գործազրկության կրճատումը: Ասվածը հիմնավորելու նպատակով ներկայացնենք տնտեսության հիմնական ճյուղերի և տնտեսապես ակտիվ բնակչության տեղաբաշխումը մայրաքաղաքի և մարզերի միջև: Այսպես՝ 2002թ. Երևան քաղաքի հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում հետևյալն էին՝

- ծառայություններ-77.0%,
- մանրածախ ապրանքաշրջանառություն-83.3%,
- արդյունաբերություն-46.8%,
- շինարարություն-66.0%¹⁵²:

Անհամաչափ զարգացումը խորացավ մինչև 2008թ., երբ մայրաքաղաքի ծառայությունների, մանրածախ առևտրի, շինարարության, արդյունաբերության տեսակարար կշիռները ՀՀ նշված ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են համապատասխանաբար 90.9%, 84.5%, 87.6%, 49.0% (տե՛ս աղյուսակ 2.3.3.):

Աղյուսակ 2.3.3. Երևան քաղաքի և մարզերի հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում, 2008թ. (%)¹⁵³

	Արդյունաբե- րություն	Գյուղատնտե- սություն	Շինարա- րություն	Ման- րածախ առևտուր	Ծառա- յություններ
ք.Երևան	49.0	1.1	87.6	84.5	90.9
Արագածոտն	1.8	7.6	0.8	0.6	0.4
Արարատ	8.0	13.1	1.2	1.5	0.8
Արմավիր	4.5	15.1	1.0	2.6	0.8

¹⁵² Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 1998-2002, Երևան 2003թ., էջ 164

¹⁵³ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, Երևան 2009թ., 195-րդ, 203-րդ, 211-րդ, 218-րդ, 225-րդ, 233-րդ, 241-րդ, 249-րդ, 257-րդ, 266-րդ, 273-րդ էջեր

	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Շինարարություն	Մանրածախ առևտուր	Ծառայություններ
Գեղարքունիք	1.4	14.2	0.6	1.0	0.7
Լոռի	5.7	9.9	0.7	2.0	1.4
Կոտայք	12.2	10.0	1.9	2.7	1.6
Շիրակ	2.4	10.1	1.5	2.4	1.9
Սյունիք	13.5	9.1	3.0	0.9	0.8
Վայոց Ձոր	0.8	4.3	1.2	0.6	0.3
Տավուշ	0.7	5.5	0.5	1.2	0.4

Անհամաչափությունը փոքր-ինչ մեղմվեց հետճգնաժամային տարիներին՝ պայմանավորված նաև շինարարության անկմամբ: Այսպես՝ Երևանի ծառայությունների, մանրածախ առևտրի, շինարարության, արդյունաբերության տեսակարար կշիռները ՀՀ նշված ճյուղերի ընդհանուր ծավալում 2016թ. կազմել են համապատասխանաբար 80.6%, 74.0%, 61.0% և 40.9% (տե՛ս աղյուսակ 2.3.4.): Ստացվում է, որ զբաղվածությունն ապահովող ոլորտներից երկուսի՝ ծառայությունների (ներառյալ առևտուրը) և արդյունաբերության մեծ մասը մեկ քաղաքում է:

Աղյուսակ 2.3.4. Երևան քաղաքի և մարզերի հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում 2016թ. (%)¹⁵⁴

	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Շինարարություն	Մանրածախ առևտուր	Ծառայություններ
ք.Երևան	40.9	1.2	61.0	74.0	80.6
Արագածոտն	2.8	9.9	5.5	1.2	0.7
Արարատ	12.6	15.4	3.8	3.1	1.5
Արմավիր	3.7	20.0	2.4	3.6	1.4
Գեղարքունիք	2.2	12.7	4.0	1.7	1.2
Լոռի	9.1	7.9	4.1	3.7	1.3
Կոտայք	9.5	6.9	3.7	5.2	8.0
Շիրակ	2.8	11.6	3.3	3.8	1.7
Սյունիք	14.4	7.4	7.3	1.3	2.3
Վայոց Ձոր	1.1	2.5	1.8	0.4	0.5
Տավուշ	0.9	4.5	3.1	2.0	0.8

Տնտեսապես ակտիվ բնակչության միջինում 32.4%-ը 2008-2016թթ. բնակվել է մայրաքաղաքում: Այն մեծ կշիռ է կազմել նաև Շիրակում, Կոտայքում, Լոռիում, որտեղ բարձր է գործազրկության մակարդակը: Ճիշտ է՝ Արարատի և Արմավիրի մարզերում

¹⁵⁴ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, Երևան 2017թ., 263-րդ, 272-րդ, 280-րդ, 288-րդ, 296-րդ, 304-րդ, 313-րդ, 321-րդ, 331-րդ, 340-րդ, 348-րդ էջեր

2016թ. բնակվել է տնտեսապես ակտիվ բնակչության համապատասխանաբար 10.0% և 12.0%-ը (տե՛ս աղյուսակ 2.3.5.), սակայն այստեղ գործազրկության համեմատաբար ցածր մակարդակը բացատրվում է նաև նրանով, որ բնակիչների մի մասն աշխատում է մայրաքաղաքում:

Աղյուսակ 2.3.5. Տնտեսապես ակտիվ բնակչության բաշխումն ըստ մարզերի և Երևան քաղաքի, 2008-2016թթ. (%)¹⁵⁵

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Հայաստանի Հանրապետություն	100	100	100	100	100	100	100	100	100
ք.Երևան	32.3	33.7	33.2	33.1	33.2	32.0	30.7	32.0	31.3
Արագածոտն	5.5	4.9	5.2	4.6	3.8	4.0	4.9	4.1	4.2
Արարատ	9.3	9.4	8.7	9.1	9.3	9.5	8.1	9.7	10.0
Արմավիր	9.5	8.8	8.9	9.4	10.2	9.9	9.1	10.8	12.0
Գեղարքունիք	7.3	6.8	6.8	6.7	6.7	6.6	7.1	6.1	5.4
Լոռի	9.0	9.3	9.3	8.8	9.3	9.4	10.0	8.7	9.0
Կոտայք	8.3	8.4	8.6	9.2	8.7	9.1	9.0	9.5	8.9
Շիրակ	7.2	7.3	7.5	7.2	7.5	7.4	9.5	8.1	8.6
Սյունիք	5.0	4.8	5.0	5.0	4.6	5.0	4.8	4.2	4.2
Վայոց Ձոր	2.1	2.1	2.0	2.1	2.1	2.2	2.0	2.0	1.9
Տավուշ	4.6	4.8	4.9	4.9	4.7	4.8	4.8	4.8	4.5

Աշխատանքի պահանջարկի և առաջարկի տևական անհավասարակշռությունը բացատրվում է ոչ միայն տնտեսապես ակտիվ բնակչության և տնտեսության հիմնական ճյուղերի անհամաչափ տեղաբաշխմամբ, այլև նրանով, որ աշխատանքային ռեսուրսների մասնագիտական կարողությունները երբեմն չեն համապատասխանում տնտեսության պահանջներին: Մասնավորապես ՀՀ-ում մեծ է պահանջարկը որակավորում ունեցող ծրագրավորողների նկատմամբ: Միաժամանակ 2011-2016թթ. «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» մասնագիտությամբ շրջանավարտների կշիռը ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններն ավարտած ուսանողների ընդհանուր թվաքանակում միջինում կազմել է շուրջ 1.4%¹⁵⁶:

Անհամաչափ զարգացումն ուսումնասիրելիս հարկավոր է անդրադառնալ նաև տարբեր տարածաշրջաններում աշխատավարձի մակարդակին: Միջին ամսական

¹⁵⁵ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, Երևան 2012թ., 2014թ., 2017թ. հրապարակումներ, համապատասխանաբար 81-րդ և 82-րդ և 106-րդ էջեր

¹⁵⁶ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան 2017թ., էջ 134-135

անվանական աշխատավարձը համեմատաբար բարձր է Սյունիքում և մայրաքաղաքում¹⁵⁷: Սյունիքում բարձր աշխատավարձը պայմանավորված է հանքարդյունաբերությամբ, որտեղ, սակայն, աշխատում է ՀՀ ընդհանուր զբաղվածների 0.9%-ը¹⁵⁸: Երևանում դա բացատրվում է նրանով, որ այստեղ են գտնվում որակավորում ունեցող աշխատողների և նրանց նկատմամբ պահանջարկ ներկայացնող ընկերությունների զգալի մասը: Մյուս մարզերում աշխատավարձի մակարդակը քիչ է տարբերվում, քանի որ ամենուրեք բարձր է գործազրկության մակարդակը (թեկուզ և այն տարբերվում է ըստ մարզերի):

Տարածքային համաչափ զարգացմանը և գործազրկության կրճատմանը կնպաստի Հայաստանի ողջ տարածքում աշխատատեղ ստեղծող ներդրումների իրականացումը: Դրա համար հարկավոր է՝

ա) Զարգացնել ենթակառուցվածքները: Որակյալ ճանապարհները, տրանսպորտը, կապը, ոռոգման և էներգետիկ համակարգերը նպաստում են տնտեսական զարգացմանը, քանի որ հնարավորություն են տալիս կրճատել տրանսպորտային և արտադրական ծախսերը, արդյունավետ օգտագործել ռեսուրսները, բարելավել ներդրումային միջավայրը:

ՀՀ-ում ցածր է ճանապարհների և տրանսպորտային փոխադրումների որակը: Աղյուսակ 2.3.6.-ից երևում է, որ գյուղաբնակ բնակչության 73.8%-ը կարծում է, որ ներհամայնքային ճանապարհները վատն են: Այս առումով կարևոր է ոչ միայն միջպետական և գլխավոր, այլև մյուս ճանապարհների վերանորոգումն ու սպասարկումը:

Աղյուսակ 2.3.6. Ծանապարհների և երթևեկության միջոցների որակի գնահատումը գյուղաբնակ տնային տնտեսությունների կողմից, 2016թ. (%)¹⁵⁹

	Վատ	Միջին	Լավ	Գերազանց
Ներհամայնքային ճանապարհներ	73.8	21.4	4.8	-
Մարզկենտրոնի, քաղաքների, շուկաների հետ կապող ճանապարհներ	9.9	65.5	24.5	0.1
Ավտոբուսներ, միկրոավտոբուսներ, երթևեկության այլ միջոցներ	10.8	66.9	22.3	-

¹⁵⁷ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, Երևան 2017թ., էջ 120

¹⁵⁸ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան 2017թ., էջ 61

¹⁵⁹ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2017թ., էջ 95

Աղյուսակը վկայում է նաև այն մասին, որ հարցվածների 65.5%-ի կարծիքով երթևեկության միջոցները միջին որակի են: Այս ոլորտում մրցակցային միջավայրի ապահովման կարիք է զգացվում: Ճանապարհների և ուղևորափոխադրումների բարելավման արդյունքում կկրճատվեն տրանսպորտային ծախսերը, կբարձրանա աշխատողների մոբիլության աստիճանը և կբարելավվի հեռավոր բնակավայրերի ներդրումային միջավայրը:

Ոռոգման համակարգի հետ կապված խնդիրները խոչընդոտում են գյուղատնտեսության զարգացումը: ՀՀ-ում օգտագործվող ջրատարների զգալի մասը մաշված է, իսկ դրանց անբավարար տեխնիկական վիճակը ոռոգման ջրի մատակարարման ընդհատումների հիմնական պատճառներից է: Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության՝ ոռոգված հողատարածքների մասնաբաժինը 2016թ. կազմել է մշակվող հողատարածքների 30.4%-ը¹⁶⁰: Հնացած ոռոգման համակարգերի փոխարինումը նորով կխթանի գյուղատնտեսության զարգացումը:

Ինչ վերաբերում է էներգետիկ համակարգին, ապա այստեղ առանձնանում են կառավարման համակարգի խնդիրները, որոնք բացասաբար են անդրադառնում արդյունավետության, հետևաբար նաև մատուցված ծառայության վրա: Բարեփոխումների իրականացումը կնպաստի ինչպես բնակչության կենսամակարդակի, այնպես էլ ներդրումային միջավայրի բարելավմանը:

բ) Օժանդակել փոքր ու միջին ձեռներեցության զարգացմանը: Յ.Շումպետերի կարծիքով ձեռներեցությունն ու նորարարությունն առանցքային կարևորություն ունեն տնտեսական զարգացման համար¹⁶¹: Այս ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկվել են ՀՀ-ում. հարկային արտոնություններ են տրամադրվել ընտանեկան գործարարությանը¹⁶² և սահմանամերձ համայնքներում գործունեություն իրականացնողներին¹⁶³: Միաժամանակ կան բազմաթիվ գործոններ, որոնք խոչընդոտում են ձեռներեցությունը: Դրանցից են՝ մոնոպոլացված շուկաները, ենթակառուցվածքների զարգացման ցածր մակարդակը, վարկերի բարձր տոկոսադրույքները, ինստիտուցիոնալ խնդիրները և այլն:

¹⁶⁰ Աղբյուրը՝ տե՛ս նույն տեղում, էջ 89

¹⁶¹ Шумпетер Й., Теория экономического развития, Прогресс, Москва, 1982, с. 158-159

¹⁶² Աղբյուրը՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենք, Հոդված 13.10, ընդունվել է 21.06.2014թ., ուժի մեջ է մտել 01.10.2014թ.

¹⁶³ Աղբյուրը՝ «Սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 20.11.2014թ., ուժի մեջ է մտել 01.01.2015թ.

Նշվածների շարքում առանձնանում է մենաշնորհների առկայությունը, որը բացասաբար է անդրադառնում ներդրումային միջավայրի վրա: Իհարկե, օբյեկտիվ պայմանների առկայության դեպքում հնարավոր է, որ որևէ ընկերություն գերիշխող դիրք զբաղեցնի շուկայում, սակայն ՀՀ-ում դրանց առկայությունը երբեմն բացատրվում է նաև նրանով, որ քաղաքականությունն ու գործարարությունը սերտաճում են: Իրավիճակի հաղթահարման համար կարևոր է վերահսկման մեխանիզմների և քաղաքական կամքի միաժամանակյա առկայությունը:

Վարկերի բարձր տոկոսադրույքները ևս խոչընդոտում են ձեռներեցության զարգացումը: Իհարկե, ՀՀ ֆինանսական շուկան համեմատաբար ռիսկային է, սակայն կան իրավիճակի հաղթահարման տարբեր ուղիներ: Մասնավորապես դոլարայնացման մակարդակի (2017թ. հոկտեմբերին ռեզիդենտների արտարժութային ավանդների և նրանց ընդհանուր ավանդների հարաբերակցությունը կազմել է 57.2%¹⁶⁴) կրճատումը կբարձրացնի ՀՀ ԿԲ կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի միջոցով փողի շուկայի կարգավորման արդյունավետությունը:

գ) Բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը: Ներդրողներին հետաքրքիր է ոչ միայն տվյալ երկրի հարկային միջավայրը, այլև այն, թե ինչպիսին են աշխատուժի որակական հատկանիշները: ՀՀ-ում որակյալ աշխատուժի զգալի մասը գտնվում է Երևան քաղաքում: Հարկավոր է խրախուսել մասնագիտական կրթություն ստացած անձանց բնակությունը մարզերում, քանի որ կրթություն ստանալուց հետո շրջանավարտների զգալի մասը գերադասում է մնալ մայրաքաղաքում: Իհարկե, սա հնարավոր է միայն աշխատատեղերի ստեղծման ճանապարհով: Այս տեսանկյունից կարևոր է պետության կողմից մասնավոր ներդրողներին աջակցության տրամադրումը:

Քանի որ արտադրողականության վրա ազդում է նաև աշխատողների առողջական կարգավիճակը, կարևոր է նաև որակյալ առողջապահական ծառայությունների հասանելիությունը մարզերում: Այստեղ համապատասխան բժշկական անձնակազմի և սարքավորումների կարիք է զգացվում, քանի որ մի շարք հիվանդությունների լիարժեք ախտորոշումը և բուժումը դեռևս հնարավոր է միայն Երևանում:

¹⁶⁴ Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ, ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր, Երևան 2017թ., հոկտեմբերի 10, էջ 185

դ) Խթանել զբոսաշրջությունը: Զբոսաշրջության տեսակներից են էկոտուրիզմը, ագրոտուրիզմը, մշակութային, հնագիտական տուրիզմը, որոնց զարգացման արդյունքում աշխատատեղեր կստեղծվեն նաև մարզերում: Բացի այդ կմեծանա ընտանեկան գործարարությամբ զբաղվելու հնարավորությունը, կբարձրանա ինքնազբաղվածության մակարդակը:

3. Ստվերային տնտեսությունը խոչընդոտում է գործազրկության կրճատումն այն իմաստով, որ գործատուների մի մասն արտադրանքի թողարկման ծավալը մեծացնելու դեպքում պարզապես ավելացնում է աշխատաժամերը (առանց համապատասխան վարձատրության)՝ միաժամանակ խուսափելով նոր աշխատողներ վարձելուց: Սա նվազեցնում է ՀՆԱ-ի աճի միջոցով աշխատատեղեր ստեղծելու հնարավորությունը: Նշենք, որ ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը 2016թ. ՀՀ-ում կազմել է 46.6%¹⁶⁵: Բացի այդ, երեխաների աշխատանքի դեպքեր են գրանցվել հատկապես գյուղատնտեսության և շինարարության ոլորտներում¹⁶⁶: Սա հակասում է կայուն զարգացման ներքին տրամաբանությանը, քանի որ կրթություն ստանալու փոխարեն երեխան ներգրավվում է աշխատանքային գործունեության մեջ:

Ստվերային տնտեսության կրճատման նպատակով անհրաժեշտ է բարելավել հարկային քաղաքականությունը: Աշխատողների՝ ստվերում գտնվելու պատճառը նաև նրանց կողմից հարկեր վճարելուց խուսափելն է: ՀՀ հարկային եկամուտներում հնարավոր է ավելացնել հարստության բաժինը և արտոնություններ տրամադրել ցածր աշխատավարձ ստացողներին: Հարկային բարեփոխումները դրական ազդեցություն կունենան ստվերային տնտեսության կրճատման առումով, քանի որ աշխատողների համար շահավետ կլինի գործել ֆորմալ տիրույթում՝ օգտվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված իրավունքներից:

Այսպիսով՝ ՀՀ տնտեսական աճի ազդեցությունը թույլ է զբաղվածության ապահովման, հետևաբար նաև գործազրկության կրճատման գործում: Սա պայմանավորված է հատկապես տնտեսության ճյուղային կառուցվածքի խնդիրներով, տարածքային անհամաչափ զարգացմամբ և ստվերային տնտեսությամբ: Հետևաբար աշխատատեղերի ստեղծումը պահանջում է համալիր միջոցառումների ամբողջություն:

¹⁶⁵ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկայի Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2017թ., էջ 96

¹⁶⁶ Department of State, United States Of America, Trafficking In Persons, June 2017, p. 69

ԳԼՈՒԽ 3. ՀՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԱՐԴԻ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ

3.1. Սոցիալ-տնտեսական պայմանների և ժողովրդագրական իրավիճակի փոխադարձ կապը

Ջարգացման տնտեսագիտության ձևավորման սկզբնական փուլում հետազոտողների մի մասը ֆինանսական կապիտալը դիտարկում էր որպես տնտեսական առաջընթացի գլխավոր գործոն. եթե ներքին միջոցներն ու օտարերկրյա ուղղակի ներդրումները բավարար չէին, առաջարկվում էր ներգրավել արտաքին պարտք: Առավելապես նման մոտեցման հետևելը տարբեր երկրներում հանգեցրեց պարտքի բեռի ավելացմանը: Իրավիճակից ելնելով տնտեսագետների մի մասն առաջադրեց տեսակետ, ըստ որի՝ տնտեսական զարգացման գործոն կարող են ծառայել ներքին ռեսուրսները, որոնցով հարուստ են զարգացող երկրները:

Նոբելյան մրցանակակիր Ա. Լյուիսն առաջիններից էր, ով աշխատանքի ավելցուկային առաջարկը դիտարկեց որպես տնտեսական զարգացման ռեսուրս: Նրա մոդելում թերզարգացած տնտեսությունը բաղկացած է երկու հատվածներից՝ գոյատևման ավանդական և արդի արդյունաբերական: Առաջինը բնութագրվում է աշխատանքի սահմանային արտադրողականության զրոյական մեծությամբ, ինչից ելնելով Լյուիսն այն դասակարգեց որպես ավելցուկային աշխատանք ունեցող՝ նկատի ունենալով, որ դա կարող է դուրս բերվել առանց թողարկվող արտադրանքի կորստի և աստիճանաբար փոխանցվել արդյունաբերության ոլորտին¹⁶⁷:

Ա. Լյուիսի մոտեցումը զարգացրեցին Գ. Ռանիսը, Ջ. Ֆեյը, Մ. Թոդարոն և ուրիշները: Գ. Ռանիսը և Ջ. Ֆեյն իրենց մոդելում ընդլայնեցին գյուղատնտեսությունում աշխատանքի արտադրողականության վերաբերյալ ուսումնասիրության շրջանակը¹⁶⁸: Մ.Թոդարոն, ուսումնասիրելով ներքին միգրացիան, հիմնավորեց, որ քաղաքներում հեռանկարային


¹⁶⁷ Lewis A., Prize Lecture, The Slowing Down of the Engine of Growth, 1979, available at https://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1979/lewis-lecture.html

Lewis A., Economic Development with Unlimited Supplies of Labour, The Manchester School, 1954, vol. 22, no. 2, pp. 139-191

¹⁶⁸ Ranis G., Fei J., A Theory Of Economic Development, The American Economic Review, 1961, Vol 51, No 4, pp. 533-565

աշխատանք գտնելու ցանկությունը և համեմատաբար բարձր աշխատավարձը նպաստում են ուրբանիզացիային, ինչն իր հերթին հանգեցնում է գործազրկության մակարդակի բարձրացմանը¹⁶⁹:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է նշել, որ աշխատանքային ռեսուրսների և ժողովրդագրության հարցերն ուղղակիորեն կապված են տնտեսական զարգացման հետ: Ատենախոսության մեջ ներկայացված հիմնախնդիրները (գործազրկություն, անհավասարության բարձր մակարդակ, աղքատություն, որակյալ կրթության և առողջապահական ծառայությունների ոչ բավարար հասանելիություն) ազդում են նախ ընտանիքը բնութագրող ցուցանիշների վրա: Այսպես՝ ամուսնությունների միջին տարիքը սովորաբար բարձր է զարգացած երկրներում, քանի որ երիտասարդները նախընտրում են շարունակել կրթությունը, ավելի շատ ժամանակ տրամադրել մասնագիտական զարգացմանը և այլն: Ինչպես երևում է գծապատկեր 3.1.1.-ից, ՀՀ-ում ցուցանիշն աստիճանաբար աճել է 1990-2016թթ. (և՛ տղամարդկանց, և՛ կանանց շրջանում), սակայն այս դեպքում իրավիճակի վրա ազդող գործոնները հիմնականում այլ են:



Գծապատկեր 3.1.1. Առաջին անգամ ամուսնացողների միջին տարիքը, 1990-2016թթ.¹⁷⁰

¹⁶⁹ **Todaro M.**, Internal Migration in Developing Countries, University of Chicago Press, 1980, Chapter pages in book: (pp. 361-402)

¹⁷⁰ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՀՀ Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Երևան 2006թ. և 2017թ. հրապարակումներ, համապատասխանաբար 86-րդ և 114-րդ էջեր

Ամուսնությունների միջին տարիքի աճը ՀՀ-ում պայմանավորված է հատկապես գործազրկությամբ, աղքատությամբ և բնակարանային ոչ բավարար պայմաններով: Բարձր է բնակարանների ծանրաբեռնվածության աստիճանը. 1000 տնային տնտեսությունից 568-ում (մեկ սենյականոց բնակարաններում) 2016թ. ապրել է 2 և ավելի մարդ¹⁷¹: Նոր բնակարաններ կառուցվում են, սակայն ցածր է բնակչության վճարունակությունը: ՀՀ-ում գործում է «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական ծրագիրը, որի հիմնական նպատակը երիտասարդ ընտանիքների բնակարանային խնդիրների հաղթահարման հարցում արդյունավետ պետական աջակցության համակարգի ներդրումն է: Ծրագրի շրջանակներում հիփոթեքային վարկը տրամադրվում է 10.5-ից 11%-ով, որից 2%-ը սուբսիդավորվում է պետության կողմից¹⁷²: Հաշվի առնելով տոկոսադրույքների բարձր մակարդակը՝ սա շահավետ առաջարկ է: Միաժամանակ զանգվածային գործազրկության պայմաններում (երիտասարդների գործազրկության մակարդակը 2016թ. կազմել է 27.9%¹⁷³) դրանից օգտվողների շրջանակը սահմանափակ է:

Գծապատկեր 3.1.2.-ից երևում է, որ ծնելիության ընդհանուր գործակիցը ՀՀ-ում նվազել է 1990-2001թթ.՝ 22.5%-ից հասնելով 10.0%-ի (ըստ հրապարակված վիճակագրական տվյալների ժամանակային շարքի, որն ընդգրկում է 1940-2016թթ., սա ցուցանիշի ամենացածր մակարդակն է¹⁷⁴): Այն նորից սկսել է աճել 2002թ. և անկում է ապրել ֆինանսական ճգնաժամը հաջորդող տարիներին:

Պետությունը, երեխայի ծննդյան միանվագ նպաստ սահմանելով, փորձում է խթանել ծնելիությունը: Մասնավորապես I-ին և II-րդ երեխայի ծնվելու դեպքում նպաստի չափը կազմում է 50000 դրամ, III-րդ և IV-րդ երեխայի ծնվելու դեպքում՝ մեկ միլիոն դրամ, V-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու դեպքում՝ մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ¹⁷⁵: Միաժամանակ սա անհրաժեշտ է, բայց ոչ բավարար: Ծնելիության խթանման

¹⁷¹ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2017թ., էջ 199


¹⁷² Աղբյուրը՝ «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում, ընդունվել է 29.01.2010թ., ուժի մեջ է մտել 25.02.2010թ.

¹⁷³ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկայի Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2017թ., էջ 107

¹⁷⁴ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Երևան 2005թ. և 2017թ. հրապարակումներ, համապատասխանաբար 32-րդ և 62-րդ էջեր

¹⁷⁵ Աղբյուրը՝ «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, ընդունվել է 06.03.2014թ., ուժի մեջ է մտել 03.04.2014թ.

համար հարկավոր է ստեղծել աշխատելու և կայուն եկամուտ ստանալու պայմաններ, քանի որ երեխաների խնամքը, կրթությամբ ապահովելը երկարաժամկետ և համապատասխան ֆինանսական միջոցներ պահանջող գործընթաց է:



Գծապատկեր 3.1.2. Ծնելիության ընդհանուր գործակիցը, 1990-2016թթ. (%)¹⁷⁶

Բնական աճին անդրադառնալիս հարկավոր է նշել, որ ՀՀ-ում իրականացվում են հղիության՝ սեռով պայամանավորված արհեստական ընդհատումներ: Ամեն տարի դրա հետևանքով ավելի քան 1400 աղջիկներ չեն ծնվում¹⁷⁷: Իհարկե, երկույթը նախևառաջ հոգեբանների, բժիշկների, հոգևորականների, սոցիոլոգների քննարկման առարկան է, սակայն կարևոր են նաև դրա ժողովրդագրական և տնտեսական հետևանքները¹⁷⁸: Սա բացասաբար է անդրադառնում բնական աճ ապահովելու հետագա հնարավորության, հետևաբար նաև աշխատանքային ռեսուրսների վրա:

Սոցիալ-տնտեսական վատ պայմանները հանգեցրեցին նաև արտագաղթին: Երկրից հեռացողների թիվը 1992-1994թթ. միջինում կազմել է 159 հազար մարդ: Ճիշտ է՝ ցուցանիշը կրճատվել է նշված տարիների համեմատությամբ, սակայն այն շարունակում է մեծ թիվ կազմել: Մասնավորապես 2013-2016թթ. միջինում արտագաղթել է 24.2 հազար

¹⁷⁶ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Երևան 2017թ., էջ 62

¹⁷⁷ Աղբյուրը՝ Գասոյան Հ., Բաբայան Ռ., Աբու Շամ Շ., Մխիթարյան Ս., ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, Հանրային հետազոտություն Հայաստանում սեռական և վերարտադրողական առողջության իրավունքների իրացման վերաբերյալ, Երևան 2016թ., էջ 11-12

¹⁷⁸ Sen A., More Than A Hundred Million Women Are Missing, New York Review Of Books, December 20, 1990, available at <http://www.nybooks.com/articles/1990/12/20/more-than-100-million-women-are-missing/>
 Todaro M., Smith S., Economic Development, 12th Edition, Pearson Education, 2014, pp. 458-461

մարդ: Հեռացողների գերակշիռ մասն աշխատանքային միգրանտներ են, ինչը բացասաբար է անդրադառնում ՀՀ տնտեսության վրա: Այսպես՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության համաձայն՝ 2002-2007թթ. ՀՀ-ից մեկնածների 94%-ը եղել են աշխատանքային միգրանտներ¹⁷⁹: ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ուսումնասիրության համաձայն՝ վերջին տարիներին այն կազմել է 78.6%¹⁸⁰:

Բնական հավելվածի անկման (այն նվազագույն սահմանին է հասել 2002թ.՝ կազմելով 6.7 հազար մարդ) և արտագաղթի հետևանքով ՀՀ բնակչությունն աստիճանաբար կրճատվեց: Մասնավորապես ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակած տվյալների համաձայն՝ այն 2016թ. կազմել է 2.9 մլն մարդ (տե՛ս աղյուսակ 3.1.1.):

Աղյուսակ 3.1.1. ՀՀ մշտական բնակչության թվաքանակի փոփոխության բաղադրիչները, 1990-2017թթ., 1000 մարդ, ¹⁸¹

Տարի	Բնակչության թվաքանակը (տարեսկզբին)	Բնական հավելված	Միգրացիայի մնացորդը	Բնակչության թվաքանակը (տարեվերջին)
1990	3514.9	57.9	1.7	3574.5
1991	3574.5	54.4	4.4	3633.3
1992	3633.3	44.7	-214.3	3463.7
1993	3463.7	31.6	-138.6	3356.7
1994	3356.7	26.5	-122.9	3260.3
1995	3260.3	24.1	-35.6	3248.8
1996	3248.8	23.2	-26.0	3246.0
1997	3246.0	20.0	-27.8	3238.2
1998	3238.2	16.2	-22.3	3232.1
1999	3232.1	12.4	-17.6	3226.9
2000	3226.9	10.3	-21.9	3215.3
2001	3215.3	8.1	-15.1	3208.3
2002	3208.3	6.7	-23.8	3191.2
2003	3191.2	9.8	-27.2	3173.8
2004	3173.8	11.8	-29.6	3156.0
2005	3156.0	11.1	-30.3	3136.8
2006	3136.8	10.4	-29.8	3117.4
2007	3117.4	13.3	-33.4	3097.3
2008	3097.3	13.8	-34.3	3076.8
2009	3076.8	16.8	-38.4	3055.2
2010	3055.2	16.9	-37.6	3034.5
2011	3034.5	15.4	-28.5	3021.4


¹⁷⁹ International Labour Organization, Migration and Development, Armenia Country Study, Yerevan 2009, p. 6

¹⁸⁰ Թադևոսյան Ա.Զ., Հակոբյան Կ., Գալոյան Դ., Աղաջանյան Լ., «Ամբերդ» ՀՊՏՀ հետազոտական կենտրոն, Արտագնա աշխատանքային միգրացիա: Գնահատականներ և մտորումներ: Երևան 2014թ., էջ 36

¹⁸¹ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Երևան 2017թ., էջ 39

Տարի	Բնակչության թվաքանակը (տարեսկզբին)	Բնական հավելված	Միգրացիայի մնացորդը	Բնակչության թվաքանակը (տարեվերջին)
2012	3021.4	14.9	-9.4	3026.9
2013	3026.9	14.6	-24.4	3017.1
2014	3017.1	15.3	-21.8	3010.6
2015	3010.6	13.9	-25.9	2998.6
2016	2998.6	12.4	-24.8	2986.1
2017	2986.1	-	-	-

Փոքր երկրների համար ծնելիության անկումը, արտագաղթը, բնակչության թվի կրճատումն իրենց հերթին ունեն ռազմական, սոցիալական, տնտեսական, մշակութային, քաղաքական և այլ հետևանքներ: Սրանք բացասաբար են անդրադառնում ՀՀ տնտեսության վրա հատկապես նրանով, որ հանգեցնում են բնակչության ծերացմանը: Սա արտացոլվում է բնակչության տարիքային կառուցվածքի շարժնթացում: Այսպես՝ աշխատունակ բնակչության կշիռն աճել է 1994-2010թթ. (տե՛ս գծապատկեր 3.1.3.), ինչը պայմանավորված էր նախորդ տարիներին գրանցված ծնելիության բարձր մակարդակով: Հետագայում ցուցանիշը կրճատվել է ծնելիության անկման և արտագաղթի հետևանքով: Իրավիճակի պահպանման դեպքում կբարդանան աշխատանքային ռեսուրսների վերարտադրության խնդիրները:



Գծապատկեր 3.1.3. ՀՀ բնակչության տարիքային կառուցվածքը, 1990-2016թթ., տարեսկզբին (%)¹⁸²

¹⁸² Տվյալները ստացել ենք ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնից՝ նամակի միջոցով:

Աշխատատեղերի ստեղծումը, աղքատության կրճատումը, բնակարանային պայմանների բարելավումը կնպաստեն բնակչության թվաքանակի աճին: Սա իր հերթին դրական ազդեցություն կունենա տնտեսական առաջընթացի վրա, քանի որ աստիճանաբար կլուծվեն բնակչության ծերացման հետ կապված խնդիրները: Բացի այդ, սպառողների թվի աճը կխթանի ներդրումների իրականացումը, ինչը նույնպես կարևոր է զարգացման համար:

ՀՀ-ում խնդիր է ոչ միայն բնակչության թվաքանակի կրճատումը, այլև այն, որ բարձր է ուրբանիզացիայի մակարդակը. քաղաքային բնակչության տեսակարար կշիռն բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ 2016թ. տարեվերջին կազմել է 63.7¹⁸³: Երևույթը պայմանավորված է նրանով, որ գյուղերում համեմատաբար դժվար է գտնել կայուն և բարձր վարձատրվող աշխատանք: Սա բացասաբար է անդրադառնում գյուղատնտեսության վրա. քաղաքային բնակչությունը հիմնականում զբաղված է ծառայությունների ոլորտում, հետևաբար ավելանում են չմշակվող հողատարածքները: Ուրբանիզացիայի բարձր մակարդակը խորացնում է նաև տնտեսության անհամաչափ զարգացումը: Սա բացատրվում է նրանով, որ փոքրանում են գյուղական բնակավայրերում ներդրումներ կատարելու խթանները, քանի որ բնակչության թվի նվազումը հանգեցնում է պահանջարկի կրճատմանը:

Այսպիսով՝ ՀՀ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները բացասաբար են անդրադարձել ժողովրդագրական իրավիճակի վրա: Բնակչության թվաքանակի հետագա կրճատման դեպքում կբարդանան աշխատանքային ռեսուրսների վերարտադրության խնդիրները: Ծնելիության խթանման ուղղությամբ պետությունը իրականացնում է տարբեր ծրագրեր, սակայն դրանք անհրաժեշտ են, բայց ոչ բավարար, քանի որ հարկավոր է նաև ստեղծել աշխատելու և կայուն եկամուտ ստանալու պայմաններ:

¹⁸³ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան 2017թ., էջ 25

3.2. ՀՀ սոցիալական քաղաքականության բարելավման միջոցները

Տնտեսության հարցերին պետության միջամտության վերաբերյալ կարծիքները տարբերվում են: Տնտեսագետների մի մասի կարծիքով այն պետք է հասցվի նվազագույնի, քանի որ շուկային բնորոշ է ինքնակարգավորման հատկությունը: Մյուս մասը գտնում է, որ դա չափազանց կարևոր է տնտեսության արդյունավետ գործունեության համար: Միաժամանակ նույնիսկ Ա. Սմիթը և Ա Սենը, որոնց ուսումնասիրությունները հիմնված են տնտեսական ազատության սկզբունքի վրա, ընդունում են, որ կան դեպքեր, երբ պետական կարգավորումն անհրաժեշտություն է: Այսպես՝ Ա. Սմիթն իր՝ «Ազգերի հարստության բնույթի և պատճառների հետազոտություն» աշխատության մեջ նշում է, որ կապիտալի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու համար նպատակահարմար է տոկոսադրույքի նկատմամբ սահմանել առավելագույն չափ¹⁸⁴:

Ա. Սենն իր՝ «Զարգացումը որպես ազատություն» գրքում, կարևորելով ազատ շուկայական հարաբերությունները, նշում է, որ պետությունը մեծ ազդեցություն ունի մի շարք սոցիալական խնդիրների լուծման առումով: Նա գրում է. «Պետական քաղաքականությունը կարևոր է զարգացող երկրներում սոցիալական հնարավորությունների ստեղծման համար: Ժամանակակից հարուստ երկրների անցյալում նկատելի է կրթության, առողջապահության, հողային ռեֆորմի և այլ ոլորտներում պետական միջամտության պատմությունը...»¹⁸⁵:

Զ. Ստիգլիցն իր՝ «Անհավասարության գինը» գրքում նշում է, որ պետական կարգավորումն անհրաժեշտ է տնտեսական համակարգի բնականոն գործունեության համար: Ըստ նրա՝ ԱՄՆ-ում վերահսկողության կայուն համակարգի գոյության տարիներին արձանագրվեց տնտեսական աճ, որի արդյունքներից օգտվում էին հասարակության բոլոր հատվածները: Սակայն 1970-ական թվականներից հետո ապակարգավորմանն ուղղված քաղաքականությունը մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրների առաջացման պատճառ դարձավ¹⁸⁶:

¹⁸⁴ **Smith A.**, An Inquiry Into the Nature and Causes of the Wealth Of Nations, R.H. Campbell and A.S. Skinner edition, Liberty Press/Liberty Classics, 1976, volume I, book 2, chapter 4, pp. 356-357

¹⁸⁵ **Sen A.**, Development as Freedom, Oxford University Press, 2001. p. 143

¹⁸⁶ **Stiglitz J.**, The Price of Inequality, Allen Lane, an imprint of Penguin Books, London, 2012, pp. 4-6

Իհարկե, պետության միջամտությունը դեռևս չի երաշխավորում սոցիալական խնդիրների լուծումը: Հատկապես հասարակական ընտրության և ինստիտուցիոնալ տնտեսագիտության ներկայացուցիչներից շատերն անդրադառնում են դրա ձախողումներին: Բյուքենենի կարծիքով քաղաքականության մեջ ևս տիրապետում է տնտեսական շահը: Նա գրում է, որ քաղաքականությունն անհատների միջև փոխանակության բարդ հարաբերությունների համակարգ է, որտեղ նրանք փորձում են ապահովել իրենց անձնական նպատակների իրականացումը¹⁸⁷:

Շուկան և պետությունը կարող են ձախողվել, միաժամանակ պետք չէ ընտրել ծայրահեղ տարբերակներից մեկը (զուտ շուկայականը կամ կենտրոնացված վարչահրամայականը): Հետազոտությունները ցույց են տալիս, որ, օրինակ, եթե նույնիսկ հնարավոր է տնտեսական աճ ապահովել բռնապետական համակարգում, քիչ հավանական է, որ այն կլինի կայուն և ներառական¹⁸⁸: Ազատ շուկայական հարաբերություններն անհրաժեշտ են տնտեսական զարգացման, իսկ պետության միջամտությունը՝ սոցիալական խնդիրները կանխարգելելու կամ լուծելու համար:

Պետության գործառույթները հնարավորինս արդյունավետ իրականացնելու նպատակով կարևոր է ազատ և թափանցիկ հասարակական ընտրության ինստիտուտի, ինչպես նաև վերահսկողության և հակակշիռների մեխանիզմների գործողությունը: Հակառակ դեպքում, ինչպես ցույց է տալիս փորձը, քաղաքական իշխանությունը կծառայի նեղ անձնական շահերին: Պետություն-շուկա փոխազդեցության համեմատաբար արդյունավետ փորձ ունեն սկանդինավյան երկրները, Գերմանիան և այլն: Այստեղ սոցիալական պաշտպանության (social security) համակարգը հնարավորություն է տալիս բնակչությանն ապահովել անհրաժեշտ նվազագույն կենսապայմաններով:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ զարգացման գործում պետության դերը հանգուցային է: Այն պատասխանատու է նաև սոցիալական առաջնահերթությունների իրագործման համար: Մասնավորապես աշխատատեղերի ստեղծման և մարդկային կապիտալի զարգացման համար նպաստավոր միջավայրի

¹⁸⁷ **Buchanan J.**, Prize Lecture, The Constitution of Economic Policy, 1986, available at http://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1986/buchanan-lecture.html

¹⁸⁸ **Sen A.**, Development as Freedom, Oxford University Press, 2001, See chapter 6
Acemoglu D, Robinson J., Why Nations Fail, The Origins of Power, Prosperity, and Poverty, Crown Business, New York, 2012, See chapter 5

ձևավորման հարցում գլխավոր սուբյեկտը նախ և առաջ պետությունն է (այս մասին ատենախոսության համապատասխան բաժիններում խոսվել է): Բացի այդ, այն սոցիալական քաղաքականության միջոցով աղքատության կանխարգելման և կրճատման խնդիր է լուծում:

ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածում նշված է. «Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է»¹⁸⁹: Իհարկե, պետությունը սոցիալական պաշտպանության համակարգի միջոցով մեղմում է տարբեր բնույթի խնդիրներ, սակայն կոռուպցիայի, ստվերային տնտեսության, ռեսուրսների սահմանափակության, ինչպես նաև ծախսերի ոչ բարձր արդյունավետության հետևանքով դա չի բավարարում:

Անդրադառնանք ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգի գլխավոր բաղադրիչներին: Այսպես՝ ՀՀ պետական բյուջեի «Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ» հոդվածի շուրջ 68%-ը 2016թ. կազմել են կենսաթոշակների գծով ծախսերը¹⁹⁰: Համաձայն ՀՀ ԱՎԾ-ի՝ կենսաթոշակներն ազդում են աղքատության մակարդակի վրա: Երեխաների 43.5%-ն ապրում է այնպիսի տնային տնտեսություններում, որտեղ առնվազն մեկ անդամը ստանում է կենսաթոշակ: Եթե կենսաթոշակները հանվեն տնային տնտեսության ընդհանուր ամսական ծախսերից, ապա մանկական ծայրահեղ աղքատության մակարդակը 2.0%-ից կհասնի 10.2%-ի, իսկ մանկական աղքատության ընդհանուր մակարդակը՝ 34.2%-ից 38.9%-ի¹⁹¹:

Սոցիալական ծախսերի շուրջ 32%-ը, 2016թ. կազմել են նպաստները¹⁹²: Սա նույնպես ազդում է աղքատության միջին մակարդակի վրա: Մասնավորապես՝ երեխաների 24.0 %-ն ապրում է այնպիսի տնային տնտեսություններում, որտեղ ստանում են ընտանեկան նպաստ: Ընտանեկան նպաստների վճարումը դադարեցնելու դեպքում մանկական ծայրահեղ աղքատության մակարդակը գրեթե կեռապատկվի՝ 2.0%-ից հասնելով 5.6%-ի,

¹⁸⁹ Աղբյուրը՝ ՀՀ սահմանադրության փոփոխություններ, ընդունվել է 06.12.2015թ, ուժի մեջ է մտել 22.12.2015թ.

¹⁹⁰ Աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջեի հաշվետվություն, 2016թ.
(http://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/)

¹⁹¹ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2017թ., էջ 109

¹⁹² Աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջեի հաշվետվություն, 2016թ.
(http://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/)

իսկ մանկական աղքատության ընդհանուր մակարդակը կաճի 4.7%-ով՝ 34.2%-ից հասնելով 35.8%-ի¹⁹³:

Գործազուրկ դառնալու դեպքում բնակչության սոցիալական անվտանգության ապահովումը պետության խնդիրներից է: ՀՀ Ազգային ժողովի կողմից 2013թ. դեկտեմբերի 11-ին ընդունվել է «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը¹⁹⁴: Այն ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 1-ին, և այդ պահից ուժը կորցրած է ճանաչվել «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

Նոր օրենքն ունի ինչպես առավելություններ, այնպես էլ թերություններ: Այսպես՝ առավելությունների շարքին է դասվում այն, որ եթե հաշմանդամություն ունեցող անձի համար նախկինում զբաղված չլինելու դեպքում նախատեսված էր «աշխատանք փնտրող չզբաղված անձ» կարգավիճակը, ապա նոր օրենքը հնարավորություն է տալիս ստանալու գործազուրկի կարգավիճակ: Նախատեսված են նաև լրացուցիչ միջոցներ, որոնք խթանում են հաշմանդամ գործազուրկների զբաղվածության աճը:

Օրենքը զերծ չէ նաև թերություններից: Մասնավորապես դրա ընդունմամբ դադարեցվեց գործազրկության նպաստների տրամադրումը, ինչը հիմնավորվել է նրանով, որ դա «պասսիվ» քաղաքականության մոտեցում է, որի հետևանքով գործազուրկների մոտ նվազում է աշխատելու ցանկությունը: Այս առումով պետք է նշել, որ նպաստների տրամադրումն ու ակտիվ սոցիալական քաղաքականությունը փոխբացառող երևույթներ չեն:

Բացառված չէ, որ գործազրկության նպաստները որոշ մարդկանց դեպքում կարող են նվազեցնել աշխատելու ցանկությունը, սակայն պետք է հաշվի առնել մի քանի կարևոր հանգամանքներ: Նախ՝ գործազրկության նպաստի միջին չափը ՀՀ-ում 2014թ. կազմել է 15995 դրամ¹⁹⁵, որը շատ փոքր գումար էր և չէր կարող բավարարել նույնիսկ հիմնական պահանջմունքները՝ նվազեցնելով աշխատելու ցանկությունը: Միաժամանակ

¹⁹³ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2017թ., էջ 110

¹⁹⁴ Աղբյուրը՝ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 11.12.2013թ., ուժի մեջ է մտել 01.01.2014թ.

¹⁹⁵ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան 2017թ., էջ 97

պահանջմունքներն անընդհատ աճում են, հետևաբար հասնելով դրանց բավարարման մի մակարդակի՝ մարդիկ ձգտում են անցնել հաջորդին: Բացի այդ, շատերն իրենց կենսամակարդակը դիտարկում են համեմատության մեջ (մյուսներից աղքատ են, թե հարուստ): Սա նրանց մոտ առաջացնում է բարեկեցության առավել բարձր աստիճանի հասնելու ձգտում:

Տեղին է նշել նաև այն, որ մարդիկ աշխատում են ոչ միայն եկամուտ ստանալու, այլև մյուսների հետ շփվելու, աշխատանքային փորձ և կարողություններ ձեռք բերելու, մասնագիտական համայնքի անդամ դառնալու նպատակով: Սրանք ոչ եկամտային գործոններ են, որոնք դրդում են աշխատանք փնտրել: Հակառակ դեպքում ոչ մի հարուստ մարդ այլևս չէր աշխատի: Ուստի նշված պատճառաբանությամբ գործազրկության նպաստների տրամադրման դադարեցումը հիմնավոր չէր:

Վերոնշյալի հետ կապված պետք է նշել, որ թեև սոցիալական աջակցությունը կարևոր է աղքատության կանխարգելման և կրճատման տեսանկյունից, սակայն աշխատանքով ապահովումն է դրա հաղթահարման գլխավոր ուղին: Այս տեսանկյունից կարելի է մեջբերել հետևյալ խոսքերը. *«Երբ մարդուն ծուկ ես փալիս, կերակրում ես մեկ անգամ, իսկ երբ սովորեցնում ես ծուկ որսալ, կերակրում ես ամբողջ կյանքի ընթացքում»*: Ուստի սոցիալական օգնությունն առավելապես կծառայի իր նպատակին, երբ ուղեկցվի մասնագիտական կարողությունների զարգացման և աշխատանքի տեղավորմանն ուղղված միջոցառումների իրականացմամբ: Հետևաբար գործազրկության նպաստների տրամադրումը և աշխատանքով ապահովման ծրագրերը լրացնում են միմյանց և կարող են գործել միաժամանակ:

Բնակչության հիմնական պահանջմունքները բավարարելու տեսանկյունից կարևոր է նաև նպաստների և կենսաթոշակների չափը: Ընդհանրապես դրանց հաշվարկման ժամանակ հաշվի են առնվում նվազագույն սպառողական զամբյուղը և աղքատության շեմը: Նախ նշենք, որ վերջինները թերագնահատված են ՀՀ-ում: Այսպես՝ նվազագույն սպառողական զամբյուղը հաշվարկվում է պարենայինի արժեքը բազմապատկելով 1.77 գործակցով: Վերջինը ներկայացնում է ՀՀ ԱՎԾ կողմից 2009թ. հարցումների արդյունքում բացահայտված սպառողական և պարենային զամբյուղների արժեքների հարաբերակցությունը: Հետևաբար այդ գործակիցը ցույց է տալիս գոյություն ունեցող

իրավիճակը, բայց ոչ նվազագույն անհրաժեշտ բարիքների և ծառայությունների նկատմամբ պահանջի չափը: Նշենք, որ ընդունված մոտեցում է, որ 4 հոգուց բաղկացած ընտանիքը համարվում է աղքատ, երբ սպառողական ընդհանուր զամբյուղն առնվազն 3 անգամ չի գերազանցում պարենայինը¹⁹⁶: Սա հարկավոր է հաշվի առնել մեկ շնչի հաշվով նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը հաշվարկելիս:

Բացի այդ, ըստ ՀՀ ԱՎԾ հաշվարկների (հիմնված ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված չափանիշների վրա)՝ նվազագույն սպառողական զամբյուղը, օրինակ, 2016թ. IV-րդ եռամսյակի միջին ընթացիկ գներով կազմել է շուրջ 55000 դրամ (դրա արժեքը մյուս եռամսյակներում տե՛ս հավելված 9), իսկ ոչ պարենային զամբյուղը՝ 24000 դրամ¹⁹⁷: Գները սովորաբար բարձրանում են, և բնակարանների ջեռուցման անհրաժեշտություն է առաջանում տարվա նշված ժամանակահատվածում: Հետևաբար այս գումարները բավարար չեն անձի նվազագույն պահանջները բավարարելու համար: Դրանք գնահատելու նպատակով հարկավոր է ներգրավել համապատասխան ոլորտների մասնագետների (բժիշկներ, տնտեսագետներ, սոցիոլոգներ և այլն):

Աղքատության վերին շեմը (ըստ սպառման ագրեգատի) 2016թ. կազմել է 40867 դրամ, որը ցածր է նույնիսկ թերազնահատված նվազագույն սպառողական զամբյուղից (*ինչը նորմատիվային իմաստով անընդունելի է*): Պարենային աղքատության գիծը նույն թվականին կազմել է 23313 դրամ¹⁹⁸, ինչը փոքր է պարենային զամբյուղի արժեքից (տե՛ս հավելված 9): Համաձայն ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության տվյալների՝ 2014-2016թթ. թերսնվածության տարածվածությունը ՀՀ-ում միջինում կազմել է 4.4%¹⁹⁹, որը շուրջ 2 անգամ գերազանցում է ՀՀ ԱՎԾ կողմից նշված ժամանակաշրջանում ներկայացված ծայրահեղ աղքատության մակարդակի ցուցանիշը: Հետևաբար աղքատության գիծը նույնպես թերազնահատված է:

¹⁹⁶ **Institute for Research on Poverty**, How Is Poverty Measured In The United States? Available at <http://www.irp.wisc.edu/faqs/faq2.htm>

United States Census Bureau, How the U.S. Census Bureau Measures Poverty, available at https://www.census.gov/library/visualizations/2014/demo/poverty_measure-how.html

¹⁹⁷ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին, Երևան 2017թ., էջ 243

¹⁹⁸ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2017թ., էջ 40

¹⁹⁹ **Food and Agriculture Organization of the United Nations**, FAOSTAT, available at <http://www.fao.org/faostat/en/#country/1>

Կենսաթոշակների և նպաստների նույնիսկ միջին չափը չի համապատասխանում ո՛չ նվազագույն սպառողական զամբյուղին, ո՛չ էլ աղքատության շեմին: Այսպես՝ նշանակված կենսաթոշակի և մեկ ընտանիքի ամսական նպաստների միջին չափն ավելի փոքր է (2016թ. կազմել են համապատասխանաբար 40396.9 դրամ²⁰⁰ և 31350 դրամ²⁰¹): Հաշմանդամության նպաստները ևս մեծ գումարներ չեն կազմում: Այսպես՝ I-ին խմբի հաշմանդամության համար նպաստի միջին չափը 2016թ. կազմել է 21498.5 դրամ²⁰²: Դեղերի բարձր գների պայմաններում սա չի կարող բավարարել առողջական բարդ խնդիրներ ունեցող մարդու հիմնական պահանջմունքները:

Ուստի անհրաժեշտ է վերանայել նվազագույն սպառողական զամբյուղի, աղքատության շեմի, կենսաթոշակների, նպաստների ու նվազագույն աշխատավարձի (վերջինի հետ կապված խնդիրները ներկայացվել են ատենախոսության երկրորդ գլխում) հաշվարկման մեխանիզմները: Սա հնարավորություն կտա ճիշտ գնահատել իրավիճակը, ինչը կարևոր է համարժեք քաղաքականություն իրականացնելու և ցանկալի արդյունք ապահովելու համար: Դրանք սահմանելիս որպես ուղեցույց կարող է ծառայել հիմնական պահանջմունքների բավարարման մոտեցումը: Սրա առանցքային գաղափարն այն է, որ աղքատության հաղթահարման տեսանկյունից դրանց բավարարումն առաջնահերթություն է: Հիմնական պահանջմունքների շարքին են դասվում պահանջը սննդի, մաքուր ջրի, հագուստի, բնակարանային անհրաժեշտ պայմանների, հասարակական փոխադրամիջոցների, կրթության, առողջապահական ծառայությունների նկատմամբ²⁰³: Հարկավոր է հաշվի առնել նաև բնակչության կարողությունների և հնարավորությունների զարգացման մոտեցումը (վերջինն արտասահմանյան գրականության մեջ հայտնի է “Capabilities approach” անվամբ²⁰⁴): Այսինքն՝ հարկավոր է բարեկեցության բարձր մակարդակի հասնելու և մարդկային կայուն զարգացման համար ստեղծել պայմաններ:

²⁰⁰ Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2016 թվականին, Երևան 2017թ., էջ 434

²⁰¹ Աղբյուրը՝ տե՛ս նույն տեղում, էջ 442

²⁰² Աղբյուրը՝ տե՛ս նույն տեղում, էջ 444

²⁰³ ILO, **International Labor Office, With an Introduction by James P. Grant**, Employment, Growth and Basic Needs: A One-World Problem, Praeger Publishers, New York, 1977, pp. 31-33

²⁰⁴ Sen A., Development as Freedom, Oxford University Press, 2001, See particularly chapter 4

Նշենք, որ ՀՀ ԱՎԾ-ն հրապարակում է նաև բազմաչափ աղքատության մակարդակը, որի հաշվարկման հիմքում դրված են բնակչության հիմնական կարիքների գնահատականները: Միաժամանակ ըստ հրապարակման՝ 2016թ. այն կազմել է 27.8%²⁰⁵, որը 1.6 տոկոսային կետով ցածր է սպառման ագրեգատի միջոցով հաշվարկված աղքատության մակարդակից: Այս առումով կարծում ենք, որ ցուցանիշը և դրա բաղադրիչները վերանայման կարիք ունեն:

Սոցիալական ապահովության համակարգն ուսումնասիրելիս տեղին է նշել կոռուպցիայի և ստվերային տնտեսության մասին: Տարածված կոռուպցիան խաթարում է սոցիալ-տնտեսական առաջընթացը: Այն երբեմն պայմանավորված է օրենքներում առկա խնդիրներով, որոնք դժվարեցնում են օրինական ճանապարհով որևէ գործունեության իրականացումը: Բացի այդ, կոռուպցիայի միջոցով խնդիրներ լուծելը հաճախ վերածվում է սովորույթի: Իհարկե, Էրնանդո Դե Սոտոյի հետազոտություններում խոսվում է այն մասին, թե ինչպես են բնակիչներն օրենքը շրջանցելու ճանապարհով հասնում արդյունքների²⁰⁶, սակայն չի նշանակում, որ սա առաջընթացի ցանկալի ուղի է:

Կոռուպցիան և ստվերային տնտեսությունն ազդում են նաև ՀՀ կառավարության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականության վրա: Նախ նպաստների տրամադրման գործընթացում նկատելի են կոռուպցիոն ռիսկերը: Այսպես՝ ընտանեկան և սոցիալական նպաստներ ստանալու իրավունքը որոշվում է՝ ելնելով ընտանիքի անապահովության սահմանային միավորի մեծությունից²⁰⁷, որը հաշվարկող մարմինների նկատմամբ վերահսկողությունը թույլ է, ինչը չարաշահումների հնարավորություն է տալիս: Գուցե տարիների ընթացքում կոռուպցիայի հաղթահարման ուղղությամբ քայլեր ձեռնարկվել են, սակայն այստեղ դեռևս վերահսկողության արդյունավետ մեխանիզմների ներդրման կարիք է զգացվում: Բացի այդ, ստվերային տնտեսությունը, կրճատելով բյուջեի եկամուտները, նվազեցնում է մի շարք սոցիալական ծրագրերի իրականացման հնարավորությունը:

²⁰⁵ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2017թ., էջ 75

²⁰⁶ **Hernando de Soto**, *The Other Path: The Economic Answer to Terrorism*, Basic Books, New York, 2002, See particularly part 1

²⁰⁷ Աղբյուրը՝ ՀՀ կառավարության որոշումը 2017 թվականի ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի, հրատապ օգնության և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի չափերը սահմանելու մասին, ընդունվել է 26.01.2017թ. ուժի մեջ է մտել 02.02.2017թ.

Սոցիալական ապահովությունից բացի զարգացած երկրներում գործում է նաև սոցիալական ապահովագրության համակարգը: Դրա տեսակներից է առողջության պարտադիր ապահովագրությունը: Այն ֆինանսավորվում է ապահովագրվողների և (կամ) գործատուների կողմից: Մեծ է նաև պետության օժանդակությունը: ՀՀ-ում առողջության պարտադիր ապահովագրությունը գործում է միայն քաղաքացիական ծառայողների շրջանում²⁰⁸: Հաշվի առնելով աղքատության բարձր մակարդակը՝ հասարակության անդամների զգալի մասը հնարավորություն չունի սեփական միջոցներով ձեռք բերել ապահովագրության այս տեսակը:

Պետությունն, իհարկե, օժանդակություն տրամադրում է անապահով անձանց առողջապահական ծառայություններից օգտվելու համար: ՀՀ կառավարության 2004թ. մարտի 4-ի N 318-Ն որոշմամբ հաստատված է բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկը, որոնց տրամադրվում է անվճար հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում²⁰⁹: Միաժամանակ այս օգնությունը բավարար չէ, և հարկավոր է մշակել խնդրի լուծման այլ ուղիներ: Պետության և գործատուների կողմից կարող է ֆինանսավորվել ապահովագրավճարների մի մասը: Երկարաժամկետում ապահովագրությունը կարող է դառնալ պարտադիր, ինչը մասշտաբի էֆեկտի շնորհիվ հնարավորություն կտա նվազեցնել ծախսերը, հետևաբար նաև դրա գինը:

Այսպիսով՝ մասնագիտական գրականության ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրակացնել, որ երկրի զարգացման գործընթացում պետության դերը հանգուցային է: ՀՀ-ում իրականացվող սոցիալական քաղաքականությունը կարևոր նշանակություն ունի աղքատության կրճատման տեսանկյունից: Միաժամանակ տարբեր խնդիրներ (կոռուպցիա, ստվերային տնտեսություն, անբավարար միջոցներ և այլն) նվազեցնում են դրա արդյունավետությունը:

²⁰⁸ Աղբյուրը՝ ՀՀ կառավարության որոշումը սոցիալական փաթեթի հատկացման կարգը և փաթեթի մեջ մտնող ծառայությունների բովանդակությունը հաստատելու, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1917-Ն և N 1923-Ն, ինչպես նաև 2012 թվականի ապրիլի 19-ի N 594-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին, ընդունվել է 27.12.2012թ., ուժի մեջ է մտել 7.02.2013թ.

²⁰⁹ Աղբյուրը՝ Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ կառավարության որոշում, ընդունվել է 04.03.2004թ., ուժի մեջ է մտել 08.04.2004թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով ատենախոսական աշխատանքում իրականացված հետազոտությունը՝ հարկավոր է նշել, որ տնտեսական զարգացման վերջնանպատակը մարդկային զարգացումն է, հետևաբար այն գնահատվում է նրանով, թե ինչ ազդեցություն է թողնում անհատի և հասարակության կյանքում, ինչպես է նպաստում կենսապայմանների բարելավմանն ու բարեկեցության աճին: Ատենախոսության մեջ իրականացվել են տնտեսական և սոցիալական զարգացման փոխազդեցության հիմնահարցերին վերաբերող ուսումնասիրություններ և վերլուծություններ, ինչի արդյունքում կատարվել են մի շարք եզրահանգումներ և առաջարկություններ:

Հետազոտության հիմնական եզրահանգումները հետևյալն են.

1. Առաջնահերթ լուծում պահանջող կարող են դիտարկվել այն խնդիրները, որոնք հրատապ լինելուց բացի ունեն սոցիալապես ընդգրկուն բնույթ և բնակչության կողմից ընդունվել են որպես բարեկեցությանը խոչընդոտող գլխավոր գործոններ: Դրանց լուծումը պետք է բխի սոցիալական արդարության և տնտեսական արդյունավետության սկզբունքներից, գտնվի հիմնարար արժեքային համակարգի շրջանակում:
2. Հայաստանն ունի լուծում պահանջող մի շարք սոցիալական խնդիրներ, որոնցից առաջնահերթ են՝ գործազրկությունը, անհավասարության բարձր մակարդակը, աղքատությունը, որակյալ առողջապահական ծառայությունների և կրթության ոչ բավարար հասանելիությունը: Հետևաբար տնտեսական զարգացումը պետք է ուղղված լինի նախ և առաջ այս խնդիրների լուծմանը:
3. ՀՀ-ում գործազրկության բարձր մակարդակի և դրա վրա տնտեսական աճի թույլ ազդեցության գլխավոր պատճառներից են տնտեսության ճյուղային կառուցվածքի հետ կապված խնդիրները և տարածքային անհամաչափ զարգացումը: Սրանք հանգեցնում են աշխատանքի առաջարկի և պահանջարկի տևական անհավասարակշռության: Սովերային տնտեսության ազդեցությունը գործազրկության վրա միանշանակ չէ, սակայն ատենախոսությունում հիմնավորվել է, որ այն նաև խոչընդոտում է նոր աշխատատեղերի ստեղծումը:

4. Գործազրկությունը պայմանավորված է նաև նրանով, որ աշխատուժի որակական հատկանիշները երբեմն չեն համապատասխանում գործատուների պահանջներին: Մասնավորապես ՀՀ-ում մեծ է պահանջարկը որակավորում ունեցող ծրագրավորողների նկատմամբ, սակայն այս մասնագիտությամբ շրջանավարտների տեսակարար կշիռը ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններն ավարտած ուսանողների ընդհանուր թվաքանակում փոքր է:
5. Անհավասարության մակարդակը խորանում է, ինչը պայմանավորված է տարբեր գործոններով: Դրանցից են՝ քաղաքական ռենտայի հետապնդումը, կոռուպցիան, անհավասարությունը մարդկային կապիտալում, թույլ արհմիությունները:
6. Գույքահարկի կշիռը ՀՀ համախմբված բյուջեի հարկային եկամուտներում կայուն բնույթ է ունեցել 2001-2016թթ., իսկ գույքի կադաստրային բազային արժեքի վերագնահատումը տեղի է ունեցել մեծ ընդհատումներով: Հետևաբար անհրաժեշտ է վերանայել հարկային քաղաքականությունը՝ պետական եկամուտների ձևավորման հարցում ավելացնելով հարստության հարկման բաժինը:
7. Աղքատությունը բարձր է և տարբերվում է ըստ տարածաշրջանների. այն տատանվում է 16-45%-ի շրջանակում: Առկա է նաև աշխատողների, թոշակառուների և երեխաների աղքատությունը: Հայաստանում չի հաջողվել հաղթահարել ծայրահեղ աղքատությունը:
8. ՀՀ-ում նվազագույն և միջին աշխատավարձերի հարաբերակցությունը (2016թ. կազմել է շուրջ 42%) ցածր է Սոցիալական իրավունքի եվրոպական հանձնաժողովի կողմից ընդունված շեմից (50-60%): Նվազագույն աշխատավարձի ոչ բավարար մակարդակը բացասաբար է անդրադառնում աշխատողների կենսամակարդակի վրա:
9. Աշխատողների աղքատությունը պայմանավորված է նաև աշխատավարձի ցածր գնողունակությամբ: Չնայած անվանական աշխատավարձն աճել է, բնակչության վճարունակությունը երկու անգամ ավելի քիչ է ավելացել 1999-2016թթ.:
10. Սպառումն իրականացվում է նաև վարկերի կամ պարտքի հաշվին, որոնց մարումը ՀՀ բնակչության համար երբեմն բարդություն է ներկայացնում: Այսպես՝ չաշխատող սպառողական վարկերի տեսակարար կշիռն ամենաբարձրն է առևտրային բանկերի չաշխատող ակտիվների կառուցվածքում: Պարտքային հարաբերություններ կան նաև ոչ ֆորմալ տիրույթում. որոնք չեն արձանագրվում փաստաթղթով:

11. Մարդկային զարգացման համար առաջնային նշանակություն ունի որակյալ առողջապահական ծառայությունների հասանելիությունը, սակայն աղքատության հետևանքով դրանք մատչելի չեն բնակչության զգալի մասի համար: Այդ մասին վկայում է այն, որ բժշկական խորհրդատվության կամ բուժման դիմաձների տեսակարար կշիռն էապես տարբերվում է ըստ կենսամակարդակի:
12. Սոցիալ-տնտեսական վատ պայմանների հետևանքով 2016-2017 ուստարում դպրոցից հեռացել է 174 երեխա, իսկ որակյալ բարձրագույն կրթություն ստանալը խնդրահարույց է բարձր ուսման վարձերի և ցածր վճարունակության պատճառով: Սա բացասաբար է անդրադառնում մարդկային, հետևաբար նաև տնտեսական զարգացման վրա:
13. Սոցիալ-տնտեսական պայմանները բացասաբար են ազդել ՀՀ ժողովրդագրական իրավիճակի վրա: Արտագաղթի և ծնելիության անկման հետևանքով բնակչության թիվը կրճատվել է: Իրավիճակի պահպանման դեպքում կբարդանան ծերացող աշխատանքային ռեսուրսների վերարտադրության խնդիրները:
14. Գործազրկության նպաստների տրամադրման կասեցումը նպատակահարմար չէր, քանի որ ատենախոսության մեջ բերված հիմնավորումները վկայում են, որ նպաստի այս տեսակը և աշխատանքով ապահովման ծրագրերը լրացնում են միմյանց և կարող են գործել միաժամանակ:
15. ՀՀ ԱՎԾ կողմից ներկայացված նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը թերագնահատված է: Ատենախոսության մեջ առաջադրվել են փաստարկներ, համաձայն որոնց այն ներկայացնում է գոյություն ունեցող իրավիճակը, բայց ոչ նվազագույն անհրաժեշտ բարիքների և ծառայությունների նկատմամբ պահանջի չափը:
16. Կենսաթոշակների և նպաստների նույնիսկ միջին չափը բավարար չէ բնակչության հիմնական պահանջմունքները բավարարելու համար: Իրավիճակի գլխավոր պատճառը ՀՀ պետական բյուջեի միջոցների ոչ բավարար լինելն է, ինչն իր հերթին պայմանավորված է հատկապես կոռուպցիայով, սովերային տնտեսությամբ, ինչպես նաև պետական ծախսերի արդյունավետության ոչ բարձր մակարդակով:

Հիմնվելով վերոնշյալ եզրակացությունների վրա՝ ատենախոսական աշխատանքում կատարվել են հետևյալ առաջարկությունները.

1. Առաջարկվել է մեծ ուշադրություն դարձնել տնտեսության ճյուղային կառուցվածքի բարեփոխումներին: Հարկավոր է զարգացնել արտադրողական և զբաղվածության աճին նպաստող ոլորտները: Այս տեսանկյունից կարևորվել է պետության կողմից ենթակառուցվածքների բարելավման գործում ներդրումների իրականացումը, ինչպես նաև մասնավոր ներդրողներին աջակցության տրամադրումը: Միաժամանակ տնտեսության նոր պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստումն անհրաժեշտ է ընդգրկել պետական ծրագրերի առաջնահերթությունների ցանկում:

2. Տարածքային անհամաչափությունները մեղմելու նպատակով առաջարկվել է բարելավել բոլոր բնակավայրերի ներդրումային միջավայրը, օժանդակել փոքր ու միջին ձեռներեցությանը, զարգացնել ենթակառուցվածքները, խթանել զբոսաշրջությունը: Կարևորվել է նաև աշխատանքի արտադրողականության բարձրացումը, քանի որ ներդրողներին հետաքրքիր է նաև այն, թե ինչպիսին են աշխատուժի որակական հատկանիշները:

3. Առաջարկվել է վերանայել հարկային քաղաքականությունը՝ ավելացնելով հարստության հարկման բաժինը: Անհրաժեշտ է բարելավել գույքի կադաստրային արժեքի գնահատման մեխանիզմները: Խոսքը, իհարկե, չի վերաբերում ամսական հաճախականությամբ վերագնահատմանը, սակայն առկա իրավիճակը ևս ընդունելի չէ, քանի որ կադաստրային բազային արժեքի և շուկայական գնի միջև առկա խզվածքը մեծ է: Բարեփոխումների արդյունքները զգալի կլինեն ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական ոլորտներում, քանի որ կպահպանվի արդարության սկզբունքը:

4. Առաջարկվել է ստեղծել համավճարի սկզբունքով գործող առողջության ապահովագրության համակարգ: Պետության և գործատուների կողմից կարող է ֆինանսավորվել ապահովագրավճարների մի մասը: Երկարաժամկետում այն կարող է դառնալ պարտադիր, ինչը մասշտաբի էֆեկտի շնորհիվ հնարավորություն կտա նվազեցնել ծախսերը, հետևաբար նաև դրա գինը: Սա կբարձրացնի առողջապահական ծառայությունների հասանելիության աստիճանը և կնվազեցնի առողջական խնդիրներ ունենալու հետ կապված ռիսկերը:

5. Կրթության որակի բարձրացման նպատակով առաջարկվել է պետության կողմից օժանդակել համալսարաններին արտասահմանյան լավագույն մասնագետների

հողվածների և գորքերի գնման ու թարգմանության հարցում: Որակի բարելավման համար հարկավոր է նաև խստացնել համակարգի նկատմամբ վերահսկողությունը, ուժեղացնել կրթական հաստատությունների և աշխատանքի շուկայի միջև կապը:

6. Առաջարկվել է ավելացնել պետական բյուջեից կրթության և առողջապահության ոլորտների ֆինանսավորումը: Այստեղ կատարվող ծախսերի մեջ պետության մասնաբաժինը մեծ է հատկապես բարեկեցության բարձր մակարդակ ունեցող երկրներում: Նպատակահարմար է, որ ՀՀ-ում ևս աստիճանաբար անցում կատարվի նման քաղաքականության:

7. Առաջարկվել է ավելացնել պետության կողմից իրականացվող սոցիալական ծախսերը, քանի որ դրանք էական նշանակություն ունեն աղքատության կրճատման տեսանկյունից: Մասնավորապես սոցիալական բնակարանաշինության ծրագրերի իրականացումը հնարավորություն կտա կրճատել բնակարանային խնդիրները՝ միաժամանակ նպաստելով տնտեսական աճին:

8. Սոցիալական ծախսերի ֆինանսավորման նպատակով առաջարկվել է նպատակային քայլեր ձեռնարկել սովերային տնտեսության կրճատման ուղղությամբ: Այս առումով կարևոր է հատկապես կոռուպցիայի հաղթահարումը: Սա, իհարկե, ընդգրկված է ՀՀ կառավարության գործունեության առաջնահերթությունների շարքում, սակայն այս ուղղությամբ մեծ հաջողություններ դեռևս չեն գրանցվել:

9. Առաջարկվել է վերանայել նվազագույն սպառողական զամբյուղի, նվազագույն աշխատավարձի, նպաստների, կենսաթոշակների հաշվարկման մեխանիզմները՝ ուղեցույց դիտարկելով բնակչության հիմնական պահանջմունքների բավարարման և կարողությունների զարգացման մոտեցումները:

10. Առաջարկվել է վերանայել աղքատության շեմը, քանի որ այն ՀՀ-ում ցածր է նույնիսկ թերագնահատված նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից (ինչը նորմատիվային իմաստով անընդունելի է):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Մասնագիտական գրքեր

1. **Կант И.**, Критика практического разума, Эксмо, Москва, 2015г., 224 с.
2. **Норт Д.**, Институты, институциональные изменения и функционирование экономики, Фонд экономической книги, Начала, Москва, 1997г., 188 с. [65]
3. **Шумпетер Й.**, Теория экономического развития, Прогресс, Москва, 1982, 455 с. [161]
4. Acemoglu D, Robinson J., Why Nations Fail, The Origins of Power, Prosperity, and Poverty, Crown Business, New York, 2012, 529 p. [3, 188]
5. Atkinson A., Inequality: What Can be Done? Harvard University Press, 2015, 400 p. [109]
6. Becker G., A treatise on the Family, Harvard University Press, 1993, 424 p. [73]
7. Deaton A., The Great Escape: Health, Wealth, and the Origins of Inequality, Princeton University Press, 2013, 376 p. [1]
8. Drèze J., Sen A., Hunger and Public Action, Oxford University Press, 1991, 398 p. [21]
9. Hernando de Soto, The Other Path: The Economic Answer to Terrorism, Basic Books, New York, 2002, 352 p. [206]
10. Keynes J., The General Theory of Employment, Interest and Money, Harcourt, Brace & World, 1965, 403 p. [138]
11. Myrdal G., Asian Drama: An Inquiry Into the Poverty of Nations, Vol I-III, Twentieth Century Fund, New York, 1968, [4]
12. Piketty T., Capital In the Twenty-First Century, The Belknap Press of Harvard University Press, 2014, 685 p. [99, 102]
13. Sachs J., The Age of Sustainable Development, Columbia University Press, New York, 2015, 544 p. [82]
14. Schultz T. (editor), Economics of the Family: Marriage, Children, and Human Capital, University of Chicago Press, 1974, 584 p. [73]
15. Sen A., Development as Freedom, Oxford University Press, 2001, 366 p. [5, 22, 50, 97, 102, 185, 188, 204]

16. Smith A., An Inquiry Into the Nature and Causes of the Wealth Of Nations, R.H. Campbell and A.S. Skinner edition, Liberty Press/Liberty Classics, 1976, 543 p. [54, 184]
17. Stiglitz J., The Price of Inequality, Allen Lane, an imprint of Penguin Books, London, 2012, 414 p. [6, 18, 89, 90, 102, 109, 116, 117, 125, 186]
18. Stiglitz J., The Great Divide, Unequal Societies and What We Can Do About Them, W. W. Norton & Company, 2015, 464 p. [102]
19. Stiglitz J., Greenwald B., Creating A Learning Society, A New Approach To Growth, Development, and Social Progress, Columbia University Press, New York, 2014, 660 p. [75]
20. Todaro M., Smith S., Economic Development, 12th Edition, Pearson Education, 2014, 888 p. [178]

Հողվածներ, զեկույցներ, աշխատանքային փաստաթղթեր, վերլուծական նյութեր

21. **Աղաջանյան Հ.**, Տնտեսական աճի որակի հարցի շուրջ, Բանբեր ՀՊՏՀ-ի, N 4, Երևան 2013թ., 9 էջ [8]
22. **Գասոյան Հ., Բաբայան Ռ., Աբու Շամ Շ., Մխիթարյան Ս.**, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, Հանրային հետազոտություն Հայաստանում սեռական և վերարտադրողական առողջության իրավունքների իրացման վերաբերյալ, Երևան 2016թ., 145 էջ [177]
23. **Գրիգորյան Ս.**, Մարդկային կապիտալը կապիտալի տեսությունների համատեքստում, Տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, ՀՊՏՀ 23-րդ գիտաժողովի նյութեր, Երևան 2013թ., 7 էջ [74]
24. **Գրիգորյան Ս.**, Տնտեսական աճի և տնտեսական զարգացման սահմանազատման չափանիշները, Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, N4, Երևան 2012թ., 7 էջ [9]
25. **Թադևոսյան Ա.Զ., Հակոբյան Կ., Գալոյան Դ., Աղաջանյան Լ.**, «Ամբերդ» ՀՊՏՀ հետազոտական կենտրոն, Արտագնա աշխատանքային միգրացիա: Գնահատականներ և մտորումներ: Երևան 2014թ., 79 էջ [180]

26. **ՀՀ կենտրոնական բանկ**, ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր, Երևան 2017թ., հոկտեմբերի 10, 229 էջ [124, 164]
27. **Հովհաննիսյան Ա.**, Մարդկային կապիտալի օգտագործումը ՀՀ-ում, Տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, ՀՊՏՀ 23-րդ գիտաժողովի նյութեր, Երևան 2013թ., 4 էջ [92]
28. **ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ**, Հազարամյակի զարգացման նպատակներ, առաջընթացի ազգային զեկույց, Երևան 2015թ., 91 էջ [44-46, 211]
29. **Միգրացիայի միջազգային կազմակերպություն, ՀՀ ԱՎԾ**, Հայաստանում միգրացիայի վերաբերյալ տնային տնտեսությունների հետազոտության մասին զեկույց, Երևան 2014թ., 213 էջ [146, 149]
30. **Վարդանյան Ա.**, Տնտեսական զարգացման հայեցակարգային ընկալումները, Բանբեր ՀՊՏՀ-ի, N4, Երևան 2013թ., 20 էջ [53]
31. **Anand S., Ravallion M.**, Human Development In Poor Countries: On the Role of Private Incomes and Public Services, Journal of Economics Perspectives, Volume 7, 1993, 18 p. [19]
32. **Arrow K.**, The Economic Implications of Learning by Doing, The Review of Economic Studies, Oxford University Press, Vol. 29, No. 3 (Jun., 1962), 19 p. [88]
33. **Arrow K., Sanghi A.**, Why Economists Put Health First, 2015, available at <https://www.project-syndicate.org/commentary/developing-countries-universal-health-systems-by-kenneth-j--arrow-and-apurva-sanghi-2015-12> [82]
34. **Autor H. David, Katz F. Lawrence, Kearney S. Melissa**, The polarization Of the Labor Market, American Economic Review 96, no 2 (May 2006), 6 p. [58]
35. **Becker G., Tomes N.**, Human Capital and the Rise and Fall of Families, The University of Chicago Press, 1994, available at <http://www.nber.org/chapters/c11237>, 43 p., [73]
36. **Buchanan J.**, Prize Lecture, The Constitution of Economic Policy, 1986, available at http://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1986/buchanan-lecture.html [187]
37. **Case A., Deaton A.**, Rising morbidity and mortality in midlife among white non-Hispanic Americans in the 21st century, Princeton University, 2015, 6 p., available at <http://www.pnas.org/content/112/49/15078.full.pdf> [10]
38. **Currie J.**, Inequality At Birth: Some Causes and Consequences, Working Paper 16798, 2011, available at <http://www.nber.org/papers/w16798>, 42 p. [79]

39. **Deaton A.**, Prize Lecture: Measuring and Understanding Behavior, Welfare, and Poverty, 2015, 30 p. available at https://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/2015/deaton-lecture.html [1]
40. **Department of State**, United States Of America, Trafficking In Persons, June 2017, 444 p. [166]
41. **Doyle M., Stiglitz J.**, Eliminating Extreme Inequality: A Sustainable Development Goal, 2015-2030, 2014, available at <https://www.ethicsandinternationalaffairs.org/2014/eliminating-extreme-inequality-a-sustainable-development-goal-2015-2030/> [100]
42. Encyclical Letter Laudato Si' Of **The Holy Father Francis** On Care For Our Common Home, 2015, 183 p., available at http://w2.vatican.va/content/francesco/en/encyclicals/documents/papa-francesco_20150524_enciclica-laudato-si.html [2]
43. **Goldin C., Katz F. Lawrence**, Long-Run Changes in The Wage Structure: Narrowing, Widening, Polarizing, Brookings Papers on Economic Activity, 2, 2007, 30 p. [58]
44. **Ianchovichina E., Lundstrom S.**, with input from **Garrido L.**, What Is Inclusive Growth? February 10, 2009. The note was requested by donors supporting the Diagnostic Facility for Shared Growth, 16 p. [15]
45. **ILO**, Migration and Development, Armenia Country Study, Yerevan 2009, 106 p. [179]
46. **ILO**, International Labor Office, With an Introduction by James P. Grant, Employment, Growth and Basic Needs: A One-World Problem, Praeger Publishers, New York, 1977, 223 p. [16, 203]
47. **Kanbur R., Stiglitz J.**, Dynastic Inequality, Mobility and Equality of Opportunity, Discussion Paper No. 10542, Centre for Economic Policy Research, London, 2015, 31 p. [102]
48. **Kuznets S.**, Economic Growth and Income Inequality, American Economic Review 45, No. 1, 1955, 28 p. [98]
49. **Kuznets S., Jenks E.**, Shares of Upper Income Groups in Income and Savings, Cambridge, MA: National Bureau of Economic Research, 1953, 49 p. [98]
50. **Leibowitz A.**, Home Investments in Children, National Bureau of Economic Research, University of Chicago Press, 1974, 26 p., available at <http://www.nber.org/chapters/c2974> [73, 85]
51. **Lewis A.**, Prize Lecture, The Slowing Down of the Engine of Growth, 1979, available at https://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1979/lewis-lecture.html [167]
52. **Lewis A.**, Economic Development with Unlimited Supplies of Labour, The Manchester School, 1954, vol. 22, no. 2, 53 p. [167]
53. **Myrdal G.**, Prize lecture: The equality issue in world development, 1975, available at http://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1974/myrdal-lecture.html [4, 120]

54. **Niebuhr A.**, Migration and innovation: Does Cultural Diversity Matter for Regional R&D Activity? Papers in Regional Science, Volume 89, Issue 3, 2010, 23 p. [93]
55. **Okun A.**, Potential GNP: Its Measurement and Significance, Yale University, Cowles Foundation Paper 190, 1962, 7 p. [140]
56. **Ozgen C., Peters, C., Niebuhr A, Nijkamp P., Poot J.**, Does Cultural Diversity of Migrant Employees Affect Innovation? Norface Migration Discussion Paper No. 2014-09, 41 p. [93]
57. **Phillips A.**, The Relation Between Unemployment and the Rate of Change of Money Wage Rates in the United Kingdom, 1861–1957, *Economica* 25 (100), 1958, 18 p. [139]
58. **Ranis G.**, Human Development and Economic Growth, Economic Growth Center, Center Discussion Paper No 887, Yale University, May 2004, 13 p. [7]
59. **Ranis G., Fei J.**, A Theory Of Economic Development, *The American Economic Review*, 1961, Vol 51, No 4, 33 p. [168]
60. **Sachs J.**, Financing Health and Education for All, 2016, available at <https://www.project-syndicate.org/commentary/financing-universal-health-education-by-jeffrey-d-sachs-2016-05> [82]
61. **Schultz T.**, Schultz-Prize lecture: The Economics of Being Poor, 1979, available at http://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1979/schultz-lecture.html [119]
62. **Schultz T.**, Reflections on Investment in Man, *The journal of political economy*, Volume LXX, University of Chicago Press, October 1962, Number 5, Part 2, 8 p. [72]
63. **Sen A.**, Lecture to the memory of Alfred Nobel, The Possibility of Social Choice, 1998, available at https://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1998/sen-lecture.html [50]
64. **Sen A.**, From Income Inequality to Economic Inequality. *Southern Economic Journal*, 1997, 64(2), 18 p. [20, 101]
65. **Sen A.**, More Than A Hundred Million Women Are Missing, *New York Review Of Books*, December 20, 1990, available at <http://www.nybooks.com/articles/1990/12/20/more-than-100-million-women-are-missing/> [178]
66. **Siropian S.**, Caucasus Research Resource Center, Homogeneity, Social Capital and Political Participation in Armenia, Analysis of the Caucasus Barometer and World Value Survey data, 2016, available at <http://crrcam.blogspot.am/2016/10/homogeneity-social-capital-and.html> [94]
67. **Spence M.**, In Search of Growth Strategies, 2016, available at <https://www.project-syndicate.org/commentary/global-economy-growth-strategies-by-michael-spence-2016-01> [14]

68. **Stiglitz J.**, When Inequality Kills, 2015, available at <http://www.project-syndicate.org/commentary/lower-life-expectancy-white-americans-by-joseph-e--stiglitz-2015-12?barrier=true> [10]
69. **Stiglitz J.**, Causes and consequences of growing inequality and what can be done about it, The fourth annual Oxford Fulbright distinguished lecture on international relations, available at <https://www.youtube.com/watch?v=TbvF05EXEVk#t=1329> [13]
70. **Stiglitz J.**, New Theoretical Perspectives On The Distribution Of Income and Wealth Among Individuals, IV Parts, NBER, Cambridge, MA 02138, 2015 [102]
71. **Stiglitz J., Sen A., Fitoussi J.**, Report by the Commission on the Measurement of Economic Performance and Social Progress, 2009, available at <http://ec.europa.eu/eurostat/documents/118025/118123/Fitoussi+Commission+report>, 291 p.
72. **Stiglitz J.** Knowledge As a Global Public Good, Global Public Goods, International cooperation in the 21th century, UNDP, Published for The United Nations Development Programme, 1999, 18 p. [75]
73. **The European Committee of Social Rights**, Digest of The Case Law of The European Committee of Social Rights, 2008, 373 p. [128]
74. **The World Bank**, Inclusion Matters: The Foundation for Shared Prosperity. Washington, D.C., 2013, 273 p. [12]
75. **Todaro M.**, Internal Migration in Developing Countries, University of Chicago Press, 1980, 43 p. [169]
76. **Yousafzai M.**, Nobel Lecture, 2014, 6 p., available at https://www.nobelprize.org/nobel_prizes/peace/laureates/2014/yousafzai-lecture_en.html [30]
77. **UN**, Resolution Adopted by General Assembly, United Nations Millennium Declaration, 2000, 9 p., available at <http://www.un.org/millennium/declaration/ares552e.pdf> [23]
78. **UN**, The millennium development goals report 2015, New York, 2015, 72 p. [23, 25-29, 31-36, 210]
79. **UN**, World Summit for Social Development, Copenhagen Declaration and Programme of Action, available at <http://www.un.org/esa/socdev/wssd/text-version/agreements/index.html> [24]
80. **UN**, Resolution adopted by the General Assembly on 25 September 2015, Transforming our world: the 2030 Agenda for Sustainable Development, available at http://www.un.org/ga/search/view_doc.asp?symbol=A/RES/70/1&Lang=E , 35 p. [212]
81. **UNDP**, Human Development Report 2016, Human Development for Everyone, New York, 2016, 271 p. [71]

82. **UNDP**, Human Development Report 2015, Work For Human Development, New York, 2015, 273 p. [17]
83. **UNDP**, Human Development Reports, Inequality-adjusted Human Development Index, available at http://hdr.undp.org/sites/default/files/hdr2016_technical_notes.pdf [11]
84. **US Department Of State**, Bureau of Economic and Business Affairs, Investment Climate Statements for 2016, available at <https://www.state.gov/e/eb/rls/othr/ics/2016investmentclimatestatements/index.htm?year=2016&dclid=254335#wrapper> [118]

ՀՀ օրենքներ և կառավարության որոշումներ

85. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Երևան 2003թ., 169 էջ [59]
86. «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 22.12.2010թ., ուժի մեջ է մտել 01.01.2013թ. [110]
87. «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, ընդունվել է 06.03.2014թ., ուժի մեջ է մտել 03.04.2014թ. [175]
88. «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում, ընդունվել է 29.01.2010թ., ուժի մեջ է մտել 25.02.2010թ. [172]
89. «Զբաղվածության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 11.12.2013թ., ուժի մեջ է մտել 01.01.2014թ. [194]
90. «Հարկերի մասին» ՀՀ օրենք, Հոդված 13.10, ընդունվել է 21.06.2014թ., ուժի մեջ է մտել 01.10.2014թ. [162]
91. ՀՀ կառավարության որոշումը սոցիալական փաթեթի հատկացման կարգը և փաթեթի մեջ մտնող ծառայությունների բովանդակությունը հաստատելու, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1917-Ն և N 1923-Ն, ինչպես նաև 2012 թվականի ապրիլի 19-ի N 594-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին, ընդունվել է 27.12.2012թ., ուժի մեջ է մտել 7.02.2013թ. [208]

92. ՀՀ կառավարության որոշումը 2017 թվականի ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի, հրատապ օգնության և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի չափերը սահմանելու մասին, ընդունվել է 26.01.2017թ, ուժի մեջ է մտել 02.02.2017թ. [207]
93. ՀՀ կառավարության 2017-2022թթ. ծրագիր, ՀՀ կառավարության 2017թ. հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելված [70]
94. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների քվեարկության արդյունքների արձանագրություն, Երևան 09.04.2017թ. [96]
95. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, ՀՀ սահմանադրության փոփոխությունների 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի արդյունքներն ամփոփելու վերաբերյալ N 99-Ա որոշում, Երևան 12.12.2015թ. [95]
96. ՀՀ սահմանադրության փոփոխություններ, ընդունվել է 06.12.2015թ, ուժի մեջ է մտել 22.12.2015թ. [189]
97. ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, հավելված ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի N 442-Ն որոշման, 216 էջ [60, 61, 62, 64, 66]
98. Շենքերի, շինությունների գնահատման կարգեր, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի հավելված, Երևան 2002թ., ընդունվել է 26.12.2002թ., ուժի մեջ է մտել 01.01.2003թ. [114]
99. «Սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 20.11.2014թ., ուժի մեջ է մտել 01.01.2015թ. [163]
100. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ կառավարության որոշում, ընդունվել է 04.03.2004թ., ուժի մեջ է մտել 08.04.2004թ. [209]

Տվյալների բազաներ

101. ԱՄՀ տվյալների բազա՝
http://www.imf.org/external/pubs/ft/weo/2017/01/weodata/weorept.aspx?pr.x=88&pr.y=15&sy=2008&ey=2016&scsm=1&ssd=1&sort=country&ds=.&br=1&c=911%2C912%2C922%2C915%2C186&s=NGDP_RPCH%2CLUR&grp=0&a= [56]
102. ԱՊՀ միջազգային վիճակագրական կոմիտե՝ <http://www.cisstat.com/> [56]
103. Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների բազա՝
<http://www.who.int/gho/en/> [81, 83]
104. Հետազոտական ռեսուրսների կոլկասյան կենտրոնի տվյալների բազա՝
<http://caucasusbarometer.org/en/cb2015am/IMPIS1/> [51]
105. ՀՀ ԱՎԾ տվյալների բազա՝ www.armstat.am, www.armstatbank.am [63, 84, 87, 113, 131-133, 147, 151]
106. ՀՀ ՖՆ տվյալների բազա՝ http://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/
[84, 87, 190, 192]
107. ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության տվյալների բազա՝
<http://www.fao.org/faostat/en/#country/1> [199]

Հավելվածներ

Հավելված 1. Հազարամյակի զարգացման նպատակներ²¹⁰

Նպատակ 1. Հաղթահարել ծայրահեղ աղքատությունը և սովը.

- 1990-2015թթ. կրկնակի անգամ կրճատել 1\$-ից պակաս եկամուտ ստացող մարդկանց կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում,
- ապահովել լրիվ և արտադրողական զբաղվածություն, ինչպես նաև արժանապատիվ աշխատանքային պայմաններ բոլորի համար՝ այդ թվում կանանց և երիտասարդների,

Նպատակ 2. Ապահովել տարրական կրթության համընդհանուր հասանելիություն.

- մինչև 2015թ. բոլոր երեխաների (և՛ տղաների, և՛ աղջիկների) համար ամենուրեք ապահովել տարրական կրթության ամբողջ ծրագրի հասանելիություն:

Նպատակ 3. Խրախուսել գենդերային հավասարությունը և ընդլայնել կանանց լիազորությունները.

- գենդերային անհավասարությունը տարրական և միջնակարգ կրթություն ստանալու հարցում նախընտրելի է վերացնել մինչև 2005թ., իսկ անհավասարությունը կրթության բոլոր մակարդակներում ոչ ուշ քան 2015թ.:

Նպատակ 4. Կրճատել երեխաների մահացությունը.

- 1990-2015թթ. երկու երրորդով կրճատել հինգ տարեկանից փոքր երեխաների մահացության մակարդակը:

Նպատակ 5. Բարելավել մայրական առողջությունը.

- 1990-2015թթ. երեք քառորդով կրճատել մայրական մահացության մակարդակը,
- մինչև 2015թ. ապահովել վերարտադրողական առողջության պահպանմանն ուղղված ծառայություններից օգտվելու համընդհանուր հասանելիությունը:

Նպատակ 6. Պայքարել ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի, մալարիայի և այլ հիվանդությունների դեմ.

²¹⁰ UN, The millennium development goals report 2015, New York, 2015

- մինչև 2015թ. կանխել ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի, մալարիայի ու այլ խոշոր վարակների տարածումը և կրճատել դրանցով հիվանդացության դեպքերը,
- մինչև 2010թ. ապահովել ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի բուժման համար անհրաժեշտ առողջապահական ծառայություններից օգտվելու համընդհանուր հասանելիություն:

Նպատակ 7. Ապահովել շրջակա միջավայրի կայունությունը.

- երկրների կողմից իրականացվող քաղաքականության մեջ և ծրագրերում ներառել կայուն զարգացման սկզբունքները, հակազդել բնական ռեսուրսների կրճատմանը,
- մինչև 2010թ. էականորեն նվազեցնել կենսաբազմազանության կրճատման տեմպը,
- մինչև 2015թ. երկու անգամ կրճատել խմելու անվտանգ ջրին և անհրաժեշտ սանիտարական պայմաններին հասանելիություն չունեցողների կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում,
- մինչև 2020թ. էականորեն բարելավել վթարային կացարաններում բնակվող առնվազն 100 մլն ընտանիքների կյանքի որակը:

Նպատակ 8. Զարգացման համար ապահովել միջազգային համագործակցություն.

- շարունակել զարգացնել բաց, կանոնակարգված, կանխատեսելի, ոչ խտրական առևտրային և ֆինանսական համակարգեր,
- միջոցներ ձեռնարկել թույլ զարգացած, փոքր կղզիների վրա գտնվող, ինչպես նաև դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների հատուկ կարիքների բավարարման ուղղությամբ,
- միջոցներ ձեռնարկել զարգացող երկրների պարտքի հիմնախնդիրները լուծելու ուղղությամբ,
- համագործակցելով դեղագործական ընկերությունների հետ՝ զարգացող երկրներում ապահովել առաջին անհրաժեշտության դեղամիջոցների հասանելիությունը,

- համագործակցելով մասնավոր հատվածի հետ՝ մատչելի դարձնել նոր, մասնավորապես տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները:

Հավելված 2. Հազարամյակի զարգացման ազգային նպատակներ²¹¹

Նպատակ 1. Հաղթահարել ծայրահեղ աղքատությունը և սովը՝

Թիրախ 1. Մինչև 2015 նվազեցնել աղքատության մակարդակը՝ իջեցնելով այն 1990 թվականին արձանագրվածից ցածր մակարդակի

Թիրախ 2. 1990-2015թթ. ընթացքում կիսով չափ կրճատել սովից տառապող մարդկանց թիվը

Թիրախ 2.ա. Բոլորի, այդ թվում՝ կանանց և երիտասարդների համար ապահովել լիարժեք ու արդյունավետ զբաղվածություն և պատշաճ աշխատանք

Նպատակ 2. Ապահովել տարրական կրթության համընդհանուր հասանելիություն՝

Թիրախ 3. Ապահովել, որ մինչև 2015թ. յուրաքանչյուր երեխա հնարավորություն ունենա ստանալ լիարժեք որակյալ միջնակարգ կրթություն

Նպատակ 3. Խրախուսել գենդերային հավասարությանը և ընդլայնել կանանց իրավունքները

Թիրախ 4. Մինչև 2015թ. բարձրացնել քաղաքական որոշումների կայացման գործընթացում կանանց մասնակցությունը

Նպատակ 4. Կրճատել երեխաների մահացությունը՝

Թիրախ 5. 1990-2015թթ. երկու երրորդով կրճատել հինգ տարեկանից փոքր երեխաների մահացության մակարդակը

Նպատակ 5. Բարելավել մայրական առողջությունը՝

Թիրախ 6 ա. 1990-2015թթ. երեք քառորդով կրճատել մայրական մահացության մակարդակը

Թիրախ 6 բ. մինչև 2015թ. ապահովել վերարտադրողական առողջության պահպանմանն ուղղված ծառայություններից օգտվելու համընդհանուր հասանելիությունը:

²¹¹ Աղբյուրը՝ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, Հազարամյակի զարգացման նպատակներ, առաջընթացի ազգային զեկույց, Երևան 2015թ., էջ 14

Նպատակ 6. Պայքարել ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի, մալարիայի և այլ հիվանդությունների դեմ
Թիրախ 7 ա. Մինչև 2015թ. կանխել ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի տարածումը և կրճատել դրանցով հիվանդացության դեպքերը,

Թիրախ 7 բ. Մինչև 2010թ. ապահովել ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի բուժման համար անհրաժեշտ առողջապահական ծառայություններից օգտվելու համընդհանուր հասանելիությունը,
Թիրախ 8. Մինչև 2015թ. կանխել և սկսել հակադարձել մալարիայի և հիմնական այլ հիվանդությունների տարածումը

Նպատակ 7. Ապահովել շրջակա միջավայրի կայունությունը՝

Թիրախ 9. Երկրների կողմից իրականացվող քաղաքականության և ծրագրերում ներառել կայուն զարգացման սկզբունքները, հակազդել բնական ռեսուրսների կրճատմանը,

Թիրախ 10. Բարձրացնել անվտանգ խմելու ջրի հասանելիությունը գյուղական շրջաններում

Թիրախ 11. Մինչև 2015թ. բարելավել բնակարանային պայմանները

Նպատակ 8. Զարգացման համար ապահովել միջազգային համագործակցություն

Թիրախ 12. Ապահովել կառավարման, քաղաքական իրավունքների և պատասխանատվության, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության այնպիսի մակարդակ, որը կնպաստի Հայաստանի կայուն զարգացմանը

Թիրախ 13. Համագործակցելով մասնավոր հատվածի հետ՝ մինչև 2015թ. մատչելի դարձնել տեխնոլոգիական նորարարությունների օգուտները, մասնավորապես՝ տեղեկատվության և հաղորդակցման ոլորտներում

Հավելված 3. Կայուն զարգացման նպատակներ²¹²

1. ամենուրեք հաղթահարել աղքատության բոլոր դրսևորումները,
2. վերացնել սովը, ապահովել պարենային անվտանգություն և բարելավված սնուցում, խթանել կայուն գյուղատնտեսությունը,

²¹² **United nations**, Resolution adopted by the General Assembly on 25 September 2015, Transforming our world: the 2030 Agenda for Sustainable Development, available at http://www.un.org/ga/search/view_doc.asp?symbol=A/RES/70/1&Lang=E, p. 14

3. ցանկացած տարիքում գտնվող յուրաքանչյուր անձի համար ապահովել առողջ ապրելակերպ և նպաստել բարեկեցության աճին,
4. յուրաքանչյուրի համար ստեղծել ներառական և որակյալ կրթություն ստանալու հնարավորություն,
5. ապահովել գենդերային հավասարություն, մեծացնել կանանց ու աղջիկների դերակատարումը,
6. բոլորի համար ապահովել ջրի և սանիտարական պայմանների հասանելիություն,
7. յուրաքանչյուրի համար հասանելի դարձնել մատչելի, կայուն և ժամանակակից միջոցներով ստացվող էլեկտրաէներգիան,
8. խթանել ներառական և կայուն տնտեսական աճը, զբաղվածությունը ու արժանապատիվ աշխատանքը բոլորի համար
9. կառուցել որակյալ ենթակառուցվածքներ, պայմաններ ստեղծել ներառական և կայուն արդյունաբերության զարգացման համար, խթանել նորարարությունը,
10. կրճատել երկրների միջև և երկրների ներսում առկա անհավասարությունը,
11. քաղաքներն ու բնակավայրերը դարձնել ներառական, ապահով, ճկուն և կայուն,
12. նպաստել կայուն արտադրությանը և սպառմանը,
13. անհապաղ քայլեր ձեռնարկել կլիմայի փոփոխությունը կանխելու և դրա հետևանքները չեզոքացնելու ուղղությամբ,
14. պահպանել և կայուն կերպով օգտագործել ծովերի, օվկիանոսների պաշարները,
15. ապահովել անտառների կայուն կառավարումը, պայքարել անապատացման դեմ, կանգնեցնել հողի քայքայումը և կենսաբազմազանության ոչնչացումը,
16. կայուն զարգացման համար ձևավորել խաղաղ և ներառական հասարակություն, յուրաքանչյուրի համար ապահովել արդարադատության հասանելիություն, ձևավորել պատասխանատու և ներառական ինստիտուտներ բոլոր մակարդակներում,
17. խթանել կայուն զարգացմանը միտված միջազգային համագործակցությունը

Հավելված 4. Մոդելում օգտագործված փոփոխականների ստացիոնարության ստուգման թեստեր

ա) Զբաղվածների թվի աճի ինդեքս

Null Hypothesis: EMPLOYED__GROWTH has a unit root
Exogenous: Constant
Lag Length: 3 (Automatic - based on SIC, maxlag=10)

	t-Statistic	Prob.*
Augmented Dickey-Fuller test statistic	-3.882520	0.0045
Test critical values:		
1% level	-3.584743	
5% level	-2.928142	
10% level	-2.602225	

*MacKinnon (1996) one-sided p-values.

բ) Իրական ՀՆԱ աճի ինդեքս

Null Hypothesis: REAL_GDP_GROWTH has a unit root
Exogenous: Constant
Lag Length: 0 (Automatic - based on SIC, maxlag=10)

	t-Statistic	Prob.*
Augmented Dickey-Fuller test statistic	-2.783101	0.0682
Test critical values:		
1% level	-3.574446	
5% level	-2.923780	
10% level	-2.599925	

*MacKinnon (1996) one-sided p-values.

գ) Սպառողական գների ինդեքս

Null Hypothesis: CPI has a unit root
Exogenous: Constant
Lag Length: 1 (Automatic - based on SIC, maxlag=10)

	t-Statistic	Prob.*
Augmented Dickey-Fuller test statistic	-3.082694	0.0347
Test critical values:		
1% level	-3.577723	
5% level	-2.925169	
10% level	-2.600658	

*MacKinnon (1996) one-sided p-values.

Հավելված 5. Իրական ՀՆԱ-ի և սպառողական գների ինդեքսի փոփոխության ազդեցությունը զբաղվածների թվի փոփոխության վրա (եռամսյակը նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ)


Dependent Variable: EMPLOYED_GROWTH
 Method: ARMA Conditional Least Squares (Marquardt - EViews legacy)
 Date: 09/08/17 Time: 20:27
 Sample (adjusted): 2005Q2 2017Q1
 Included observations: 48 after adjustments
 Convergence achieved after 242 iterations
 MA Backcast: 2004Q2 2005Q1

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
CPI	0.308202	0.093697	3.289354	0.0021
REAL_GDP_GROWTH	0.188725	0.040846	4.620352	0.0000
EMPLOYED_GROWTH(-4)	-0.603165	0.062749	-9.612377	0.0000
DUM_2009Q4	10.35415	1.695908	6.105368	0.0000
DUM_2011Q4	-12.62578	1.447781	-8.720782	0.0000
AR(1)	0.619087	0.120844	5.123035	0.0000
MA(4)	0.933503	0.045310	20.60247	0.0000
C	106.0794	12.30667	8.619672	0.0000

R-squared	0.801118	Mean dependent var	98.70499
Adjusted R-squared	0.766313	S.D. dependent var	4.455408
S.E. of regression	2.153797	Akaike info criterion	4.523353
Sum squared resid	185.5536	Schwarz criterion	4.835220
Log likelihood	-100.5605	Hannan-Quinn criter.	4.641208
F-statistic	23.01769	Durbin-Watson stat	2.011821
Prob(F-statistic)	0.000000		

Inverted AR Roots	.62			
Inverted MA Roots	.70+.70i	.70+.70i	-.70-.70i	-.70-.70i

Հավելված 6. Կախյալ փոփոխականի փաստացի և գնահատված արժեքները, մոդելի մնացորդները



Հավելված 7. Հետերոսկեդաստիկության բացակայության ստուգման թեստ

Heteroskedasticity Test: Breusch-Pagan-Godfrey

F-statistic	1.474834	Prob. F(5,42)	0.2184
Obs*R-squared	7.168933	Prob. Chi-Square(5)	0.2084
Scaled explained SS	4.977939	Prob. Chi-Square(5)	0.4186

Հավելված 8. Բացատրող փոփոխականների և մոդելի մնացորդների միջև կոռելիացիայի գործակիցները

CORR (GDP, RESID) = -0.06

CORR (CPI, RESID) = 0.09

Հավելված 9. Նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքը համապատասխան եռամսյակի միջին ընթացիկ գներով, դրամ, 2015-2017թթ.

(հաշվարկված ՀՀ ԱՎԾ կողմից, ըստ ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի)²¹³

	2015-I	II	III	IV	2016-I	II	III	IV
Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը, դրամ	57927.6	60397.4	55394.3	54413.6	55075.3	55703.2	53978.2	54753.7
Պարենային զամբյուղի արժեքը, դրամ	32727.5	34122.8	31296.2	30742.2	31116.0	31470.7	30496.2	30934.3

Շարունակություն	2017-I	II
Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը, դրամ	56918.7	59792.5
Պարենային զամբյուղի արժեքը, դրամ	32157.5	33781.1

²¹³ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-հունիսին, էջ 284

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-մարտին, էջ 329

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 243

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-սեպտեմբերին, էջ 190

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-հունիսին, էջ 232

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-մարտին, էջ 322

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 254

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-սեպտեմբերին, էջ 202

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-մարտին, էջ 311

Որտեղ՝

CPI - սպառողական գների ինդեքս

REAL_GDP_GROWTH - ՀՆԱ իրական աճի ինդեքս

EMPLOYED__GROWTH - զբաղվածների թվի աճի ինդեքս

DUM_2009Q4 – կեղծ փոփոխական

DUM_2011Q4 - կեղծ փոփոխական

AR(1) - առաջին կարգի ավտոռեգրեսիվ պրոցես

MA(4) -սահող միջին պրոցես

RESID- մոդելի մնացորդներ